ՀԱՅԿԱ ՈՒՆՆԵՐ

Միաբանությունն անառիկ ամրոց է

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

№ 4, 2022

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ 3

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ
Լենսեր Աղալովյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՎ ՕՐԵՐՆ ՈՒ ՏԱՐԻՆԵՐԸ 4

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հայկազուններ համահայկական միաբանություն
ԱՐՑԱԽԸ ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՋՄՈՒՄ 8

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ
Անժելա Տերյան
ՄԻՏԱՆԻ (ԽՈՒՐՐԻ-ՄԻՏԱՆԻ) ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 9

ՊՈԵԶԻԱ
Յուրի Սահակյան
ՍԹԱՓՎԵՔ, ՀԱՅԵՐ 13

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
Գևորգ Հովսեփյան
ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐԸ 14

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ
Արսեն Համբարյան
ԴԵՐՍԻՄԻ ԹԱԳՈՒՀԻՆ (ՄԱԹԻԼԴԱ) 20

ՊՈԵԶԻԱ
Ավետիք Իսահակյան 21

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ
ԹՈՐԹՈՒՄԻ ՋՐՎԵԺ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 22

ՀՐԱՊԱՐԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Էմմա Բեգիջանյան
ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԱՑՈՒՄԸ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է 23

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վահագն Գրիգորյան
Vahagn Grigoryan

Գևորգ Յազըճյան
Gevorg Yazedjyan

Էմմա Բեգիջանյան
Emma Begijanyan

Էդիկ Բաղդասարյան
Edic Baghdasarian

Արսեն Համբարյան
Arsen Hambaryan

Հովիկ Վարդումյան
Hovik Vardumyan

Գարեգին Ղազարյան
Garegin Ghazaryan

Էլ. փոստ՝
haykazunner.parberakan@gmail.com
haykazunner.miabanutyun@gmail.com

Կայքէջ՝ www.haykazunner.com

Դիմագրքի էջ՝ «ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐ» պարբերական

Հայագիտական-պատմագիտական, հրապարակագրական-մշակութաբանական, գրական-գեղարվեստական ամսագիր

Նյութերն ընդունվում են էլեկտրոնային եղանակով, 12 տառաչափով, չեն գրախոսվում: Խմբագրությունը կարող է համակարծիք չլինել հեղինակների հետ: Արտատպելիս «ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐ»-ին հղումը պարտադիր է:

Գործունեության հասցեն՝
Երևան, Արշակունյաց 5,
2-րդ հարկ:

Պետական հաշվառման համար՝
211.200.00961
Պետական հաշվառման օրը՝
13.03.2020

ՊԱՏՄԱԿԱՆ
Զոհրաբ Ըռքոյան
ԱՄՐՈՑԸ ԺԱՅՌԻ ՎՐԱ 29

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ
Էդիկ Բաղդասարյան
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՕՏԱՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ 33

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԱՍԱՑՈՂ
Հատված Հովիկ Վարդումյանի «Փոքր Միերի վերադարձը» վեպից 37

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ
Սերգեյ Սիմոնյան
ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՆԱԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԼԻՔ ՕՐԸ (ՋՐՀՈՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ) 38

ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ
Հովհաննես Այվազյան
ՋԱՎԱԽՔ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ) 43

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
Հրաչուհի Փալանդուզյան
ՊԱՐԶ-ԱՊՐԵՑՆՈՂ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԿԱՐՈՏ 51

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
Հովիկ Վարդումյան
ՀԱՏՎԱԾ ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ «ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ՎԵՊԻՑ 57

ՊԱՏՄԱԿԱՆ-ԱԶԳԱՅԻՆ
Ալբերտ Մուշեղյան
Մ.Թ.Ա. VI Դ. ՍԿՋԲԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԻՑ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ 59

«Հայկազուններ» պարբերական
Լրատվական գործունեություն իրականացնող՝ ««Հայկազուններ» համահայկական միաբանություն» հայրենասիրական ՀԿ
Գտնվելու վայրը՝ ՀՀ, Երևան, 0062, Նոր Նորքի 2-րդ զանգված, Թոթովենցի 6/1, բն. 3
Գրանցման համար՝ 211.171.1095036
Գրանցման ամսաթիվ՝ 04.10.2019
Թողարկման ամսաթիվ՝ 23.11.2022
Թողարկման համարը՝ թիվ 4

Չափսը՝ 70x100 1/16

Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Տպագրությունը՝ օֆսեթ
Տառատեսակները՝ GHEA Grapalat
Տպաքանակը՝ 200

Ստորագրված է տպագրության 15.11.2022

Գլխագրի ձևավորումը՝ գեղանկարիչ Վիկտոր Հովհաննիսյանի, օգտագործվել են ֆոտոռեժիսոր Ժիրայր Աղավալյանի և գեղանկարիչ Շմավոն Շմավոնյանի գործերը:

Կազմի ձևավորումը՝
Ալվարդ Օհանջանյանի

Էջադրումը՝ Աննա Համբարձումյանի

Թողարկման պատասխանատու՝
Հովիկ Վարդումյան
(հեռ.՝ +374 93 878569)

Տպագրվել է
«Էդիթ Պրինտ»
հրատարակչությունում

EDIT PRINT
43 D. Malyan str, Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մայան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Զարմանալի է մարդ արարածը, հատկապես՝ հայը: Դեռ կան բազմաթիվ հայեր, որոնք մտածում են, թե Արարիչը կփրկի մեզ: Արդեն համարյա ոչնչացել ենք, այնքան ենք փոքրացել, որ հավասարվել ենք չլինելուն, բայց այդպես էլ չհասկացանք, որ Արարչի ստեղծած աշխարհն ուժի ու կարողության, ըստ իրավիճակի դատելու և գործելու աշխարհ է: Չհասկացանք, որ այս աշխարհում ճշմարտությունն ու արդարությունը մեծ հրապարակներում ուժն է որոշում, որ աշխարհի օրենքներն ուժեղներն են գրում ու այդ օրենքներով կառավարում, որ ոչ թե ընդամենը «հաղթողներին չեն դատում» (Ռուսաստանի Եկատերինա Մեծ կայսրուհի), այլ «հաղթողներն են հենց դատում» (Գարեգին Ղազարյան): Այսօր էլ մեր աչքի առջև կատարվող գործողությունները պարզ ցույց են տալիս, որ աշխարհը կառավարում են ուժեղները, որ թույլերի ճշմարտությունը չի ընդունվում, որ ուժեղների անմարդկային սուտն ու կեղծիքը մարդկությանը մատուցվում են արդարության ու լուսավոր ճշմարտության տեղակ, բայց դարձյալ հետևություն չենք անում:

Ազգերն ու ժողովուրդներն առաջնորդվում և կառավարվում են ուժով, միայն ուժով: Մենք ունենք հարևաններ, որոնց հետ հարևանություն անելն անհնարին է, ինչպես գառը՝ սոված գայլի հետ: Իսկ մենք մեզ գառ ենք դարձնում, որ գայլ թուրքը հոշոտի ու հագեցնի իր գայլային ախորժակը: Այսպես է դարեր շարունակ, ու, դարեր հոշոտվելով, խելքի չենք գալիս: Փոխանակ մեր սերունդներին զինվորներ դարձնելու, նրանց դաստիարակելու մեր դարավոր թշնամուն ոչնչացնելու ոգով, գառներ ենք դաստիարակում ու տալիս գայլ թուրքին՝ հոշոտելու: Ճրբ պիտի վերջապես հասկանանք այս աշխարհում գոյատևելու օրենքները: Ճրբ պիտի ունենանք հզորանալու հստակ ազգային մտածողություն ու ազգային ծրագիր, զինվորի, տղամարդու ծրագիր, որ ոչ թե ուրիշի քրտինքով ստեղծված ունեցվածքը թուրքի նման խլենք ու վայելենք, այլ գոնե մերը կարողանանք պահել, չտանք բարբարոս հարևաններին: Վերջապես պետք է հասկանանք, որ թուրքը սովորական մարդ չէ ու, դժբախտաբար, մեր հարևանն է: Անհայրենիք է թուրքը, որ հեռավոր Ալթայներից եկավ, տիրացավ մեր Դրախտային Հայրենիքին, իսկ մենք այնքան տղամարդ չեղանք, որ ետ առնենք մեր Երկիր Դրախտավայրը, վերացնենք մեր ամոթը, որ կարողանանք ինքներս մեզ հարգել ու հայացքներս չխոնարհել այլազգիների առաջ:

Վերջապես ճրբ ենք, ուրիշներից օգնություն խնդրելու փոխարեն, հույսներս մեզ վրա դնելու, օգտագործելու ի վերուստ տրված առանձնահատուկ բանականությունը՝ սեփական ազգի ու պետության, այլ ոչ թե ուրիշների հզորացման համար: Դարերով մեր ազգի հանճարեղ զավակները, սեփական երկրում հնարավորություն չունենալով, իրենց գիտելիքներն ու ռազմական կարողություններն օգտագործել են օտարների սահմաններն անառիկ դարձնելու և տնտեսությունը զարգացնելու համար:

Ճրբ ենք նորից տղամարդ ազգ դառնալու, ինչպես եղել ենք հազարամյակներ, ճիշտ ընտրություն անելու առաջնորդի գերխնդրում, որ մեզ տանի ճիշտ ճանապարհով, որ կարողանանք մեր ճակատից մաքրել ճորտության ամոթը: Հարկավոր է ազգովին ամեն ինչ անել «Հայկազունների» նման հայրենատիրական կազմակերպությունները հզորացնելու համար: Քանզի միայն ազգային գաղափարախոսություն ու ազգային ծրագիր ունենալով՝ կարող ենք հասնել մեր դարավոր երազանքին:

Հովիկ Վարդումյան

ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵՎ ՕՐԵՐՆ ՈՒ ՏԱՐԻՆԵՐԸ

Արցախի հարցով բանակցային գործընթացը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում նախատեսված էր անցկացնել՝ հիմք ընդունելով հայտնի երեք միջազգային սկզբունքները. ազգերի ինքնորոշման իրավունք, պետությունների տարածքային ամբողջականություն, բոլոր վիճելի հարցերի լուծում բացառապես խաղաղ ճանապարհով:

Տարօրինակ է, որ ՀՀ դիվանագիտությունը առաջին երկու սկզբունքներից շեշտադրում էր միայն առաջինը, մինչդեռ պարտավոր էր շեշտադրել նաև երկրորդը, քանի որ դրա համար ուներ պատմական և միջազգային իրավական բոլոր հիմքերը: Օգտվելով մեր դիվանագետների և ղեկավարների անփութությունից ու անպատասխանատվությունից՝ Թուրքիա-Ադրբեջան զույգը հարյուրից ավելի տարիների ընթացքում բազմիցս հանգերգում է իր ստոր սուտը՝ Արցախը միայն իրենց պատկանելու մասին: Այսօր դրանք գրեթե հաջողել են հասնել XX դարի 20-ականներին իրենց հռչակած նպատակին՝ Ադրբեջանի տարածքային վերամիավորմանը Թուրքիային: Այս նպատակին վերջնականապես հասնելուց հետո բոլոր ճանապարհները բաց են պանթուրքիզմի՝ դեպի Արևելք անարգել տարածման համար: Բայց ճշմարտությունը չպետք է մեռնի. այն, որ Արցախի հայերը բնիկ են, վկայում են Ստրաբոնը, Պլուտարքոսը, Պտղոմեոսը և ուրիշները:

Ադրբեջանցիների նախնիներն են Կարա-կոյունլու («Սև ոչխարներ») և Ակ-կոյունլու («Սպիտակ ոչխարներ») թյուրքմենական քոչվոր ցեղերը, որոնք հայտնվել են Այսրկովկասում XV-XVI դարերում, այսինքն՝ նրանք Արցախում բնիկ չեն (տե՛ս Босворт К. Э.. Мусульманские династии. Справочник по хронологии и генеалогии. Москва, “Наука”, 1971. с. 221-224):

Միջին դարերում Արցախը գտնվել է Պարսկական Կայսրության կազմում: Ըստ ռուսական ուսումնասիրության՝ «Ղարաբաղը երկիր է, որն ընկած է Արաքսի ձախ ափի և Քուռ գետի աջ ափի միջև, Մուղանի դաշտավայրից վերև, սարերում: Իր գլխավոր բնակիչները հայեր են, որոնք ղեկավարվում են ժառանգաբար իրենց 5 մելիքներով կամ բնիկ իշխաններով, համաձայն գավառների թվի: Յուրաքանչյուրը կարող

է հանել մինչև 1 հազար զինվոր: Այդ մելիքները, ըստ Նադիր շահի սահմանած կարգի, անմիջապես ենթարկվում են շահին» (Академик Бутков А., Материалы по новой истории Кавказа, СПб., 1869):

Արցախ-Ղարաբաղի Խամսայի մելիքություններն են («խամսի» արաբերեն նշանակում է հինգ).

1. Գյուլիստան – տարածվում է Գանձակի (Գյանջա, Կիրովաբադ) սահմանից մինչև Թարթառ գետը (մոտավորապես Ադրբ. ԽՍՀ Խանլարի և Շահումյանի շրջանները),

2. Ջրաբերդ – տարածվում է Թարթառ գետից մինչև Խաչեն գետը (Քարվաճառ [Քելբաջար], ԱՀ Մարտակերտի շրջանի հյուսիսային և կենտրոնական մասերը),

3. Խաչեն – տարածվում է Խաչեն գետից մինչև Բալուջա գետը (ԱՀ կենտրոնական մասը),

4. Վարանդա – տարածվում է Բալուջա գետից մինչև Դիզափայտի լեռնային գոտին (ԱՀ Ասկերանի, Շուշիի և Մարտունու շրջանները),

5. Դիզակ – տարածվում է այդ սարերից մինչև Արաքս գետը (ԱՀ Հադրութի, Քաշաթաղի, ներառյալ Կովսականը, Կարյագինո-Ֆիզուլիի շրջանները):

Խամսայի մելիքները օգտվել են մեծ ազատություններից, Պարսկաստանին հարկ են վճարել և բանակին մատակարել են արցախյան («ղարաբաղեան») հռչակավոր ձիերի որոշակի քանակ: Այդ հինգ հայկական իշխանությունները, լինելով անմիջական հարևաններ, կազմել են մեկ ամբողջություն և գոյատևել են մինչև Ռուսական տիրապետության հաստատումը՝ 1813 թ. իրավական (դե յուրե) միացումը Ռուսաստանին:

Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների, Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանների, Խաչենի Հասան-Ջալալյանների, Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Դիզակի Մելիք-Եգանյանների տոհմածառերը վկայում են Արցախի մելիքական տոհմերի մեծության մասին: Նրանց ժառանգները այսօր էլ Արցախում կարևոր դեր են խաղում: Իսկ որտեղ է Արցախում գտնվում թուրք-ադրբեջանցիների տոհմածառը...

Արցախը Ռուսաստանի Կայսրության կազմի մեջ մտավ ռուս-պարսկական 1806-1813 թթ. պատերազմից հետո՝ Գյուլիստանի 1813 թ. պայմանագրով, որը կնքվեց մելիքանիստ Գյուլիստան գյուղում (այժմ՝ ադրբեջանցիների գրաված՝ ԱՀ Շահումյանի շրջանում): Ռուսներին բազմակողմանի մեծ օգնություն են ցուցաբերել Արցախի մելիքները (տես զինվորական պատմաբան, գեներալ Ե. Ա. Ποտտο, Кавказская война, в 5-и томах, СПб., 1889, Москва, “Центрполиграф”, 2006):

Ցարական Ռուսաստանի կազմում Արցախը ստացավ ազատություն ձեռներեցության և լուսավորության բնագավառներում, Շուշին դարձավ Այսրկովկասում Թբիլիսիից հետո մշակույթի, արվեստների, կրթության հայկական երկրորդ կենտրոնը: Հայերը պարտքի տակ չմնացին և եռանդուն մասնակցություն ունեցան ռուս-թուրքական և ռուս-պարսկական հաջորդ պատերազմներին՝ առաջադրելով հռչակավոր ու երևելի հրամանատարների մի ամբողջ համաստեղություն:

1918 թ. մայիսին հռչակվեց Այսրկովկասում երեք անկախ հանրապետությունների ստեղծումը՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի: 1918-ը, աշխարհում առաջին անգամ, Ադրբեջանի պետության հայտնվելու տարեթիվն է: Ցեղասպանություն ապրած ՀՀ-ն գտնվում էր թուլացած վիճակում՝ Արևմտյան Հայաստանից գաղթականներով լցված: Բաքվի, Շամախու և մասամբ Ելիզավետպոլի (Գյանջա) նահանգների (գուբերնիա) հիման վրա ստեղծված Ադրբեջանի «Դեմոկրատական» Հանրապետությունը, Օսմանյան Պետության դրդմամբ, իր առաջ խնդիր դրեց տարածքով միանալու Թուրքիային: Հենց այդ ժամանակ առաջին անգամ հնչեցվեց, թե իբր «Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը ադրբեջանական տարածքներ են»:

Հանրահայտ է, որ այդ տարածքները երբեք չեն գտնվել Թուրքիայի տիրապետության տակ, տեսականորեն նրանց կարող են հավակնել Ռուսաստանն ու Պարսկաստանը: Այդ պատճառով Ազգերի Լիգան իր 1920 թ. դեկտեմբերի 6-ի որոշումով մերժեց Ազգերի Լիգա մտնելու վերաբերյալ Ադրբեջանի խնդրանքը՝ Վրաստանի և ՀՀ-ի հանդեպ տարածքային վեճեր ունենալու պատճառով:

Ազգերի Լիգայի որոշումից հետո թվում էր, թե հարցը փակված է: Բայց ոչ. թուրք-ադրբե-

ջանական՝ պետական մակարդակի բարձրացված սուտն սկսեց հնչեցվել ամեն հարմար պահի: Բոլշևիկյան և հետբոլշևիկյան Ռուսաստանը, որքան էլ զարմանալի է, նրանց պաշտպանեց, և այսօր թուրք-ադրբեջանական զույգը գրեթե հաջողել է հասնել իր նպատակին՝ մնացել է Սյունիքի 45 կմ լայնությամբ տարածք նրանց ցամաքային միավորման համար: Բայց նույնիսկ դա է քիչ նորահայտ սուլթանիկ Իլհամի համար. ըստ նրա՝ Երևանն ու Սևանը նույնպես ադրբեջանական են: Նա այդ զառանցանքը տարածում է զանգվածային լրատվության անգամ արտերկրյա միջոցներով, հատկապես՝ ռուսական:

Հայտնի է, որ Այսրկովկասի սովետականացումն սկսվեց XI Կարմիր բանակի միջոցով, արևելքից արևմուտք նրա շարժման ուղղությամբ (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան): 1920 թ. ապրիլի 26-ին նա հատեց Ադրբեջանի հյուսիսային սահմանը: Անմիջապես հետևեց Աթաթուրքի հրամանը Բաքվում գտնվող Թուրքիայի Արևելյան բանակի հրամանատար Կարաբեքիրին՝ չխոչընդոտել XI Կարմիր բանակի առաջխաղացմանը: Ապրիլի 28-ին հռչակվեց Սովետական Ադրբեջանը: Սրա ղեկավարությունը անմիջապես սկսեց տարածքային պահանջներ ներկայացնել «բուրժուական» Հայաստանին՝ պահանջելով «Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը»: Նորից հնչեցվեց թուրքական ծրագիրը. օգտվելով ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ տարածքով միավորել Ադրբեջանը Թուրքիային, քանի դեռ ՀՀ-ում սովետական կարգեր չեն հաստատված:

Նախօրյակին, 1920 թ. մարտին, Շուշի ներխուժած թուրք Խալիլ և Նուրի փաշաների զորքը անգլիական գրավման (օկուպացիոն) ուժերի թողտվությամբ (հրամանատար՝ գեներալ Թոմսոն. անգլիացիները, ինչպես միշտ, համապատասխան պահին ներկա են) կրակի մատնեցին շուրջ 90% հայ բնակչությամբ 30 հազարանոց քաղաքի հայկական բոլոր թաղամասերը: Սպանվեցին շուրջ 8000 հայեր, մյուսները, կորցնելով ամեն ինչ, հեռացան կրակի մեջ բոցկլտացող քաղաքից: Թուրք-ադրբեջանական անպատիժ մնացած հանցագործ զույգի անամոթ հետնորդներն այսօր Շուշին իրենց պարծանքն են համարում:

ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինը անմիջապես պարզաբանեց ստեղծված իրավիճակը և չընդառաջեց սովետականացված Ադրբեջանի ղեկավարության պահանջների բավարարմանը: Նրա համար «Ղարաբաղը բնիկ հայկական տարածք է», իսկ Լենինին ուղղված 1920 թ. հունիսի 29-ի նամակում նշում է՝ «և խոսք լինել չի կարող ադրբեջանական ասկերներին հայերի դեմ ուղարկելուն՝ հայերից առգրավելու այն մարզերը, որոնց նկատմամբ Ադրբեջանը հավակնություններ ունի», «խլել Հայաստանից ինչ-որ մասեր և մեր ձեռքերով հանձնել դրանք Ադրբեջանին՝ դա կնշանակեր Արևելքում մեր քաղաքականությանը հաղորդել կեղծ երանգ: Դա կխարխլի մեր քաղաքականության մասին պատկերացումը՝ որպես զուտ անշահախնդիր և օբյեկտիվ»:

Գ. Չիչերինը կարողացավ չբավարարել Սովետական Ադրբեջանի նկրտումները ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը ՀՀ-ում (1920 թ. դեկտեմբերի 2): XI Կարմիր բանակի հրամանատարությունը ևս հրաժարվեց բավարարել Սովետական Ադրբեջանի պահանջները, իսկ Սյունիքն ու Վայոց ձորը կարողացան պաշտպանել հայկական ինքնապաշտպանական ուժերը՝ Նժդեհի առաջնորդությամբ: Այսպիսով՝ Ադրբեջանի և Թուրքիայի տարածքային միացման ծրագրի իրականացումը XX դարի քսանական թվականների սկզբին տապալվեց:

Արցախի լեռնային հատվածը սկուտեղի վրա, առանց նույնիսկ մեկ կրակոցի Ադրբեջանին տրամադրեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն (միջազգային իրավունքի առումով կրկնակի անօրեն՝ երրորդ պետության ոչ պետական մարմնի-խմբ.) 1921 թ. հուլիսի 5-ի որոշումով, երբ նույն բյուրոն մեկ օր առաջվա (հուլիսի 4) որոշումով Լեռնային Ղարաբաղը հայտարարել էր Սովետական Հայաստանի անբաժան մաս: Այս հարցում չարագործ դեր խաղաց ՌՍՖՍՀ ազգությունների գործերով ժողովրդական կոմիսար Իոսիֆ Ստալինը: 1921 թ. հուլիսի 4-ին Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելու համար կայացավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի լիագումար նիստ, որտեղ, Ստալինի ներկայությամբ, ձայների մեծամասնությամբ որոշվեց Լեռնային Ղարաբաղը ներառել Սովետական Հայաստանի կազմում (այդ

որոշմանը կողմ են քվեարկել Գեորգի Օրջոնիկիձեն, Սերգեյ Կիրովը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Յուրի Ֆիգատները): Սակայն Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը բողոքեց և պահանջեց, որ վերջնական որոշումը փոխանցվի ՌԿ(բ)Կ Կենտկոմին: Կովբյուրոն այդպես էլ որոշեց: Բայց Կովբյուրոյի որոշումը չիրականացվեց, և հաջորդ օրը գումարվեց Կովբյուրոյի նոր նիստ, որն առանց քննարկման և քվեարկության, Ստալինի ճնշման տակ, վերանայեց նախորդ օրվա որոշումը: ՀԿ(բ)Կ Կենտկոմը Ալեքսանդր Մյասնիկյանի գլխավորությամբ, 1921 թ. հուլիսի 16-ի նիստում իր անհամաձայնությունը հայտնեց Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմանը:

Հետագայում Արցախի հայերի համար առավել ահավոր հետևանքներ ունեցավ Կովբյուրոյի որոշման 2-րդ կետը՝ «հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել Կովբյուրոյի հաստատմանը»:

Փոխանակ նոր ձևավորվող մարզի մեջ մտցնելու Արցախի այն տարածքները, որոնք կային Ռուսաստանին Ղարաբաղի միացման պահին (1813 թ.), կամ գոնե կազմեին խառը հանձնաժողով՝ բաղկացած ռուսներից, կովկասյան թաթարներից՝ 1923 թ. ներքոնշյալ դեկրետով՝ «մուսուլմաններից» (ապագա ադրբեջանցիներից), որը կորոշեր մարզի տարածքն ու սահմանները, այդ հարցերի լուծումը վերապահեցին Ադրբեջանի Կենտկոմին: Օգտվելով վերոնշյալ չարաբաստիկ 2-րդ կետից, առանց համաձայնեցնելու Կովբյուրոյի հետ (որը պայման էր), ադրբեջանական իշխանությունները, հեռահար նպատակով, Լեռնային Ղարաբաղից կտրեցին և ինքնավար մարզի մեջ չմտցրին հյուսիս-արևմուտքում Շամխորի, Խանլար-Գետաշենի, Շահումյանի շրջանները՝ 97-98% հայ բնակչությամբ, արևմուտքում՝ Քելբաջարի և Լաչինի շրջանները և Մայր Արաքսի ափամերձ հարավային բոլոր շրջանները, որոնք կազմում էին Դիզակի մելիքությունը: Այս ամենը Արցախի առաջին լուրջ տրոհումն էր: Այսպիսով, Ադրբեջանական ԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով կազմավորված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) դարձավ Սովետական Հայաստանից ամբողջովին մեկուսացված և բոլոր կողմերից միայն Ադրբեջանով շրջապատված: Այս փաստը թույլ տվեց Ադրբեջանին ժամանակի ընթացքում արտագաղթի մղել այն բոլոր հայկական բնակավայրերի հայերին, որոնք դուրս էին թողնվել ԼՂԻՄ-ից, և Արաքս գետի երկայնքով հնարավորինս մոտենալ Թուրքիային: Այսօր դժվար է պատկերացնել ՀՀ-ի և ԱՀ-ի ապագան առանց Շահումյանի շրջանի (ներառյալ Քարվաճառը) և Քաշաթաղի շրջանի: ՀՀ-ի և ԱՀ-ի միջև արհեստականորեն ստեղծված այդ սեպը (1920-ականների այսպես կոչված Կարմիր Քրդստանը) լինելու է լարվածության մշտական աղբյուր, մասնավորապես՝ նաև ռուսական խաղաղապահ ուժերի համար, քանզի բազմակի մեծացել է սահմանը, որն անհրաժեշտ է պաշտպանել:

1994 թ-ից հետո Ադրբեջանը շարունակեց իր նվաճողական քաղաքականությունը և անցած ժամանակահատվածն օգտագործեց իր բանակի արդիականացման, հարձակողական նորագույն զենքերի մեծաքանակ ձեռքբերման համար՝ արհամարհելով հայերի իրավունքը ապրելու իրենց բազմահազարամյա տարածքում, որը ողողված է երկրամասի փառավոր պատմությունը իրենց պատերին հայերեն փորագրված հրաշակերտ ամրոցներով ու եկեղեցիներով: Այդ տարածքներին հավակնող ադրբեջանցիները կարող են հակադրել գեթ մի արժեքավոր կառույց, թեկուզ ուշ շրջանի:

Մեր կարծիքով՝ այս ամենին նպաստել են մեր դիվանագետների, տեղեկատվության միջոցների անատամ և ոչ համապատասխան կեցվածքը, Արցախյան հիմնախնդրի ոչ պատշաճ ներկայացումը համաշխարհային ուժային, վերլուծական կենտրոններին և լրատվամիջոցներին, ՀՀ-ի, նրա բանակի, անվտանգության մարմինների ղեկավար անձնակազմերի ցածրամակարդակ մասնագիտականությունը, հատկապես՝ վերջին տարիներին:

Հրավիրում ենք Նիկոլ Փաշինյանի և նրա համախոհների ուշադրությունը ռուս հայտնի հրապարակախոս և բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկու՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կարծիքի վրա. «Ամեն երկիր, ամեն ազգ ունի իր բաղձալի պատվարները: Երբ պատմությունը դասավոր-

վում է երջանիկ, նա դառնում է կրթվածության և քաղաքական կյանքի կենտրոն: Երբ ճակատագիրը հետապնդում է ազգին, նա դառնում է ազգային կյանքի հենարան, հույսերի կղզի, վերածննդի երաշխիք: Հենց վերջին դերն է խաղացել ու խաղում հայ ժողովրդի համար Ղարաբաղ լեռնային երկրամասը:

Լինելով միասնական՝ էթնիկ, տնտեսական և լեզվական տեսանկյունից, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է այժմ, այդպիսին կլինի նա միշտ, քանզի Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը, անհնար է պաշտպանել՝ չտիրանալով Ղարաբաղին» (Сергей Городецкий, «Кавказское слово», Тифлис, 23.III.1919):

Լինե՞նք արժանի մեր նախնիներին:

Հ.Գ. Այս օրերին ՀՀ և Ադրբեջանի միջև ընթացող՝ սահմանազատման ու սահմանագծման բանակցությունները ևս մեկ ապացույց են այն ահավոր իրավիճակի, որի մեջ հայտնվել է ՀՀ-ը սխալ քաղաքականության հետևանքով: Բանակցությունները պետք է կասեցվեն մինչև բուն ճշմարտության վերականգնումը:

Այլևս ոչինչ կարող է խախտել իմ ժողովրդի գրանիտե հավատը: Այժմ ոչինչ կարող է հուսալքել նրան, քանզի խորապես գիտակցած է, թե մի ժողովրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ: Նա գիտե, որ մնայուն Արդարության, Օրենքի ուժով բռնագրավված երկրամասերը միշտ էլ, վաղ թե ուշ, անցնում են իրենց պատմական տերերի ձեռքը՝ պայմանով, որ այդ վերջինի մեջ ժամանակը տկարացրած չլինի սերը, կարոտն ու պաշտամունքը դեպ Հայրենի Երկիրը:

Գարեգին Նժդեհ, Ասույթներ, Եր., Գրաբեր, 2012, էջ 10:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԸ ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Մեզ հույժ մտահոգում են վերջին ժամանակներում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների շուրջ ծագած և հասունացող իրադարձությունները: Հազարամյակների հայոց պետականության մաս կազմող Արցախը մեր Հայրենիքի անբաժան մասն է, իսկ արցախահայությունը՝ մեր ազգի ամենաերկար պետականություն պահպանած հատվածը: Երբ հայ ազգի մեծագույն մասը կորցրել էր պետականությունը և հեծում էր թուրքական ու պարսկական լծերի տակ, Խամսայի մելիքությունները պարսկական իշխանության հետ հարաբերվում էին ինչպես հավասարը՝ հավասարի:

Սակայն 20-րդ դարի սկզբից կովկասյան թաթարները, թուրքերի աջակցությամբ, գրավեցին Արցախը և մինչև այսօր գործադրում են բոլոր ջանքերը՝ Արցախում վերացնելու հայկական որևէ հետք, ինչպես կարողացան դա անել Նախիջևանում: Այդ քաղաքականությունը ծածուկ կերպով շարունակվում էր նաև խորհրդային ժամանակաշրջանում, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո դարձավ բացահայտ և հատուկ թափ առավ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո:

Ադրբեջանի կազմում հայտնվելու դեպքում Արցախին սպասում է արագ հայաթափում՝ նոր ցեղասպանություն և արցախահայության հայրենազրկում, ինչպես արդեն տեսանք՝ պատերազմի ընթացքում աշխարհի լուռ անտարբերության և կողմերի միջև հավասարության նշան դնելու պայմաններում:

Հայկազուններ համահայկական միաբանություն

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

պատմաբան

ՄԻՏԱՆԻ (ԽՈՒՐՐԻ-ՄԻՏԱՆԻ) ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մ.թ.ա 15-14-րդ դդ. Հայկական Լեռնաշխարհի հարավում՝ Վանա լճի և Զագրոսի լեռների միջև ապրող խուրրիական (հայկական) միտանի ցեղի առաջնորդները (թագավորներ) և ազնվականությունը կարողացան իրենց շուրջը համախմբել և միավորել խուրրիական (հայկական) շատ ցեղեր, մանր ու միջին պետական կազմավորումներ և ստեղծել Միտանի (Խուրրի-Միտանի) պետությունը: Միտանին Հայկական Լեռնաշխարհում ստեղծված առաջին հայկական հզոր պետությունն էր: Միտանիի թագավորները պայքարի մեջ են մտել հին աշխարհի ուժեղ պետությունների՝ Եգիպտոսի ու Խաթթիի դեմ և դժվարին պայքարում հաջողության հասել՝ ստեղծելով ուժեղ պետություն, որի սահմանները տարածվում էին Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններից ու Կիլիկիայից մինչև Աշշուր, Նինվե, Արրապխա (այժմ՝ Իրաքի Քերքուկ քաղաքը), Զագրոսի լեռներ, իսկ հյուսիս-արևելքում՝ մինչև Կովկասի նախալեռներ:

Հզոր Միտանին Առաջավոր Ասիայում կենտրոնական դիրք է գրավել: Նրա հսկողության տակ են գտնվել այն բոլոր առևտրական ճանապարհները, որոնք կապել են Միջերկրականի արևելյան առափնյա մասերը Միջագետքի, Զագրոսի ու Պոնտոսի հետ: Նրա ձեռքին էին Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանը, Սիրիայի հյուսիսի հարուստ ու ծաղկուն քաղաքները, որոնք հիմնականում խուրրիաբնակ էին և ծաղկուն ու հարուստ էին դարձել խուրրիների շնորհիվ: Առաջավոր Ասիայում, մասնավորապես Հայկական Լեռնաշխարհում 19-20-րդ դդ. կատարված հնագիտական պեղումները վկայում են, որ դեռևս մ.թ.ա. 8-4-րդ հազարամյակներում այդ տարածքներում ստեղծվել են հզոր մշակույթներ, որոնք հայտնի են Կոնիայի հարթավայրի, Նեոլիթյան, Հալաֆ-հասունյան (ավելի ուշ՝ Սամարրյան), Շենգավիթյան կամ Կուր-արաքսյան և այլ անուններով: Այս մշակույթների հայրենիքն է Հյուսիսային Միջագետքը, Հայկական Լեռնաշխարհը և շրջակա տարածքները, իսկ այդ մշակույթների ու քաղաքակրթությունների ստեղծման ակունքներում կանգնած են Հայկական Լեռնաշխարհի բնիկները՝ խուրրիները (հայ-արմեններ):

Հայկական Լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների ստեղծած պետություններն ու պե-

տական կազմավորումները վաղ պատմություն ունեն: Հազարամյակների ընթացքում նրանց հարևանությամբ հայտնվել են շատ ցեղեր ու ժողովուրդներ, որոնք մեր ժողովրդի ու երկրի համար օգտագործել են տարբեր անուններ: Այսպես, շումերները խուրրիների բնակության վայրերը՝ Հայկական Լեռնաշխարհի հարավային մասերը և Հյուսիսային Միջագետքը, կոչել են Սուբիր, աքքադացիները՝ Սուբարու, Սուբարի, Սուբարթու (Շուբարթու): Եգիպտացիները խուրրիների համար օգտագործել են h՝rw (խարու, խուրու ընթերցմամբ) անունը: Նրանք օգտագործել են նաև Whrjn Նախրինա, Նախարինի, (Նախարինա), Maittani, Mittani անունները: Աքքադալեզու (բաբելերեն, ասորերեն) գրավոր աղբյուրները օգտագործել են Hanigalbat, Haligalbat, Hanagalbat անունները: Խեթերը օգտագործել են Hurri (Hurla) անունը: Խուրրի թագավորներն իրենք իրենց անվանում են hurri, իսկ երկիրը՝ Mitanni: Հնագույն արձանագրությունների hu-u-ur սեպախումբը մի շարք ուսումնասիրողներ (Հ. Վինքլեր, Էդ. Մեյեր, Է. Վայդներ, Ֆորեր, Վայսբախ) կարդում են Har, այլ ուսումնասիրողներ (Բ. Հրոզնի, Ա. Ունգնադ) Hur ձևով: Har (har) ընթերցման ժամանակ ուսումնասիրողները անունը կապում են արիներ անվան հետ, իսկ խուրրիերենը համարում հին արիական լեզու: Ավելի ուշ Խաթթիի մայրաքաղաք Խաթթուսասից հայտնաբերված շարադրանքում hurlili-ն (խեթերեն՝ hurla, «խուրրի») ընթերցվում է hurri ձևով: Սրանով մերժվեցին harri ձևը և խուրրիների՝ արիներ լինելու տեսակետը:

Գիտական աշխարհում ընդունվեց hurri ձևը: 20-րդ դարի կեսերին գիտական աշխարհում ի հայտ եկան նոր տեսակետներ ու կարծիքներ արիական ցեղերի նախահայրենիքի մասին: Առաջ քաշվեց այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախնիների՝ արիական ցեղերի նախահայրենիքը Հայկական Լեռնաշխարհն ու շրջակա տարածքներն են: Այդ են վկայում նաև հնագիտական պեղումների արդյունքները (վաղ երկրագործություն, խեցեգործություն, մետաղամշակություն, Արև աստծո ու նրա խորհրդանիշերի՝ խաչի, կեռխաչի [սվաստիկա], ձիու, առյուծի, արծվի պաշտամունք), մարդաբանական («արմենոիդ» մարդաբանական տեսակի շարունակականություն), լեզվաբանական (հայոց լեզվում առկա են հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներին հատուկ բոլոր հնչյունները) հետազոտությունները և այլն: Նկատում ենք նաև, որ hurri (h-ur-ri) և harri (h-ar-ri) անունների մեջ առկա է ar -ur բաղադրիչը, որը կարող է հանդես գալ նաև ir, er ձևերով: Հետևաբար թե՛ hurri-ն և թե՛ harri-ն իրենց -ar, -ur արմատներով կապվում են Ար (Արա) Աստծո անվան և Հայկական Լեռնաշխարհի հետ (Արմանի, Արատտա, Արարատ, Արմենիա, Արաքս, Արագած ..., Ուրարտու, Ուրմե, Ուրմիա...):

Հայ-արմենները վաղնջագույն ժամանակներից զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, խեցեգործությամբ ու մետաղների մշակմամբ: Իսկ ընդունված է, որ մշակութային այս տարրերն են դրված մարդու ստեղծած վաղ քաղաքակրթության հիմքում: Հյուսիսային Միջագետքում, Հայկական Լեռնաշխարհում և շրջակա տարածքներում իրենք հիմնադրել են բազմաթիվ բնակավայրեր՝ գյուղեր ու քաղաքներ, այդ թվում՝ մայրաքաղաք Վաշշուգանեն, Երուսաղեմը, Աշշուրը, Նինվեն, Բաբելոնը, Ալալախը (այժմ՝ Ատչանա), Արրապխան (այժմ՝ Քերքուկ), որոնք հարստացել են արհեստների ու առևտրի շնորհիվ: Ստեղծված հարստությունը և մշակույթը գրավել են հայ-արմենների հարևանությամբ ապրող ցեղերի ուշադրությունը, և մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներից (հավանաբար նաև ավելի վաղ) սկսվել են սեմական ցեղերի (աքքադացիներ, բաբելացիներ, ասորեստանցիներ, արամեացիներ), խեթերի ու եգիպտական փարավոնների թալանչիական արշավանքները դեպի Հյուսիսային Միջագետք, Հայկական Լեռնաշխարհ ու շրջակա տարածքներ:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին խուրրիների հարևանությամբ սկսել են գործել զավթողական տրամադրություններ ունեցող երկու հարևաններ՝ խեթերը և եգիպտացիները: Այդ երկու վտանգավոր հարևանների թշնամական գործողություններին դիմագրավելու համար խուրրիներին անհրաժեշտ էր միավորվել և ստեղծել ուժեղ պետություն: Այդ խնդիրը հաջողությամբ են իրագործել խուրրիական (հայկական) միտանի ցեղի թագավորները: Մինչև խուրրիական ցեղերի միավորումը և Միտանի

պետության կազմավորումը՝ խեթական շարադրանքները բազմիցս վկայում են «խուրրի ռազմիկների թագավորների» ռազմական միության մասին: Խեթերի դեմ մղված պայքարի ժամանակ միտանի ցեղի թագավորը (անունը հայտնի չէ) հաջողել է գլխավորել արդեն կազմավորված «խուրրի ռազմիկների թագավորներին», իսկ այնուհետև՝ «խուրրի ցեղերի թագավորների երկրները»:

Նկատում ենք, որ արտաքին վտանգի ժամանակ կնքված ցեղերի ռազմական միությանը հաջորդել է նրանց քաղաքական ու տնտեսական միավորումը:

Գրավոր աղբյուրներում վկայված Միտանիի առաջին թագավորը Շուտառնա 1-ինն է (մ.թ.ա. 16-րդ դարի վերջ)՝ Կիրտայի որդին: Նրան հաջորդած Պարատտարնայի (մ.թ.ա. 15-րդ դարի կես) ժամանակ Միտանին մեծ հաջողություններ է ունեցել: Սաուսադատտարի օրոք երկիրը դարձել է Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը:

Միտանին հզորանում էր արտաքին ռազմաքաղաքական բարդ պայմաններում: Շարունակվում էին Եգիպտոսի փարավոնների թալանչիական արշավանքները դեպի Պաղեստին-Սիրիա: Թութմոս 1-ինը (մ.թ.ա. 16-րդ դարի 2-րդ կես), Թութմոս 3-րդը (մ.թ.ա. 15-րդ դարի 2-րդ կես), Ամենհոտեպ 2-րդը (մ.թ.ա. 15-րդ դարի վերջ) և Թութմոս 4-րդը բազմաթիվ արշավանքներ են կազմակերպել դեպի Պաղեստին-Սիրիա՝ հաճախ հասնելով Եփրատի ափեր: Կրկնվող արշավանքները վկայում են, որ խուրրիները արժանի դիմադրություն են ցույց տվել եգիպտացիներին, որն էլ ի վերջո ստիպել է կողմերին հաշտության պայմանագիր կնքել: Թութմոս 4-րդի ժամանակ կնքված պայմանագրով՝ Կարքեմիշը, Հալեպը և Ալալախը մնացել են Միտանիի ազդեցության ոլորտում, իսկ Պաղեստինն ու Սիրիայի հարավային մասերը անցել են Եգիպտոսին: Եգիպտացիների և խուրրիների միջև հաստատվել են նաև խնամական կապեր: Միտանիի արքայադուստրեր Գիլու Հեպան (Շուտառնա 2-րդի դուստրը), Տադու Հեպան (նաև Նեֆերտիտի՝ Տուշրատայի դուստրը), նաև Տիան (Նախրինայի՝ Նաիրիի իշխանի դուստրը) եղել են հայտնի թագուհիներ եգիպտական արքունիքում:

Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքելով՝ Միտանին էլ ավելի հզորանալու և բարգավաճելու հնարավորություն է ստացել: Սակայն այդ վիճակին չէր ցանկանում հաշտվել Խաթթին, որը հավակնություններ ուներ ընդարձակվելու դեպի Սիրիա ու Միջերկրական ծովի ափեր: Խեթերի՝ այդ ուղղությամբ հաջողության հասնելու բոլոր փորձերը անհաջողությամբ էին ավարտվում՝ բախվելով խուրրիների ռազմական ուժին:

Մ.թ.ա. 1345 թ. Խաթթիում գահ է բարձրացել դիվանագիտական հմտություններով օժտված Սուպիլուլիումաս 1-ինը (մ.թ.ա. 1345-1322), որի ժամանակ կատարված դեպքերը ճակատագրական են դարձել Միտանիի համար: Միտանիի թագավոր Շատուռնա 2-րդից հետո երկրում սկսվել է գահակալական պայքար նրա որդու՝ Արտաշումարայի, և եղբոր՝ Արտադամայի միջև: Պայքարի ժամանակ Արտաշումարան սպանվել է պալատական Ուտխիի կողմից: Այդուհանդերձ, Արտաշումարայի կողմնակիցները գահ են բարձրացրել նրա փոքր եղբորը՝ Տուշրատային: Սակայն դավադրություններն ու բանսարկությունները շարունակվել են Միտանիի շուրջը: Ի վերջո Միտանին բաժանվել է 2 մասի՝ Խուրրի (Արածանիի ավազան) և Միտանի (Տիգրիսի ավազան, Աղձնիք, Ծոփք): Միտանիի բաժանումը արտաքին (նաև ներքին) թշնամական ուժերի հաղթանակն էր: Այս գործում մեծ է եղել Սուպիլուլիումաս 1-ինի դերը: Խուրրիների հետագա փորձերը՝ վերականգնելու երկրի հզորությունը, հաջողությամբ չեն ավարտվել: Հզորացող (նաև սեմականացող) Ասորեստանը և Բաբելոնը իրենց հերթին անընդհատ հարձակումներով էլ ավելի են թուլացրել Միտանին՝ ի հաշիվ նրա ընդարձակելով իրենց սահմանները: Միտանիի դեմ միավորվել էին Խաթթին, Բաբելոնը, Ասորեստանը և այլ, փոքր թագավորություններ: Միտանին պարտություն է կրել ու բաժան-բաժան արվել նրանց միջև: Սակայն Ասորեստանի թագավորներ Սալմանասար 1-ինը (մ.թ.ա. 1274-1245), Թուկուլթի-Նինուրթա 1-ինը, Թիգլաթպալասար 1-ինը (մ.թ.ա. 1115-1077) և ուրիշներ իրենց արձանագրություններում վկայում են, որ խուրրիները հաճախ էին ապստամբում, և իրենց հարկ էր լինում նորից ու նորից արշա-

վանքներ կազմակերպել այդ ապստամբությունները ճնշելու համար:

Մ.թ.ա. 13-րդ դարի կեսերին ավարտվել է Հայկական Լեռնաշխարհում ստեղծված հայոց հնագույն պետության՝ Միտանիի (Խուրրի-Միտանի) պատմությունը: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից սեմական ցեղերի ներհոսքը խուրրիաբնակ Հյուսիսային Միջագետք, Հարավային Միջագետք, Հայկական Լեռնաշխարհի հարավային մասեր, Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններ՝ Պաղեստին, Սիրիա, Հորդանան, Փյունիկիա (Լիբանան) և այլ տարածքներ էլ ավելի է ուժեղացել Միտանիի թուլացումից և անկումից հետո:

Սկսվել էր սեմականացող Միջագետք–Հայկական Լեռնաշխարհ (հայ-արիական տարածք) հակամարտությունը: Այդ հակամարտության արձագանքն են Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության շնորհիվ պահպանված «Հայկի և Բելի մասին», «Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին», «Արամ թագավորի մասին» և այլ ավանդազրույցները:

Միտանիի անկումը նշանակում էր պետության պատմության ավարտ, բայց ժողովուրդը շարունակում էր ապրել: Հայկական Լեռնաշխարհի հյուսիսում շարունակում էր գոյություն ունենալ Հայասա պետությունը, հարավում՝ Ալզին (Աղձնիք): Ստեղծվում են նաև նոր պետական կազմավորումներ՝ Շուպրիան (Արմե-Շուպրիա, Սասուն), Իսուվան (Ծոփք), Բաբխին (Հայկական Տավրոսի լեռնային շրջաններ) և այլն:

Միտանիից հետո պատմության թատերաբեմից անհետանում են նաև Խաթթին (մ.թ.ա. 12-րդ դարի սկիզբ) ու Եգիպտոսը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջ): Եվ եթե այդ պետություններն անհետացան, թողնելով միայն անուն ու մշակույթ, ապա Միտանին նոր շարունակություն ունեցավ՝ ի դեմս մ.թ.ա. 9-րդ դարում կազմավորված հայկական նոր՝ Արարատ-Ուրարտու պետության:

Իսկական Հայաստան. նրա առաջ դողում է չարիքը: Դուք վիթխարի ուժի և անկոտրում սրբության ժողովուրդ եք: Ես սա ասում եմ որպես մասնագետ: Ձուր չէ Հայաստանի պատմությունը լրիվ քողածածկված, աքողված է մեծ դյուցազունների պատմությունը: Մեծ տերությունները ընդունակ չեն լուծելու Հայաստանի ճակատագրիը, որին շատերը կուզենային խեղդել: Հայաստանն ինքն է ընդունակ լուծելու ԱՄՆ–ի ճակատագիրը, ձեզ բնավ էլ ոչ քմահաճույքով են պահում գաղտնի բռնապետության կոշտ պայմաններում, չեն թողնում շնչել: Եթե Հայաստանը դառնա ազատ, շատ չարիքներ աշխարհում կփլուզվեն, չեն կարող գոյություն ունենալ: ... Ես ռուս եմ, և իմ ողջ կյանքը պատկանում է Սրբազան Ռուսիային, սա փաստ է: Բայց Հայաստանի համար ես պատրաստ եմ մեռնելու, այնքան որ կարևոր է Հայաստանը: Սա զարմանալի փաստ է:

Անդրեյ Միրոշնիչենկո



ՅՈՒՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանաստեղծ, մանկագիր, թարգմանիչ

ՍԹԱՓՎԵՔ, ՀԱՅԵՐ

Արարատյան դաշտի
Հեռու մի անկյունից
Մեզ են նայում երկու
Կապույտ եռանկյունի:

Երկու եռանկյունի,
Երկու կապույտ կոներ,
Որոնց հիացմունքի
Բյուր երգեր ենք ձոնել,

Որ, ձուլված բերկրանքից,
Ցավից ու հառաչից,
Դեռ ապրում են մեր մեջ
Սիրո պես առաջին:

Մենք ծանակում ենք մեզ
Մեր խակության համար,
Որ տեր էինք մի օր,
Բայց տերը չենք հիմա...

Պատճառները շատ են,
Դասերը՝ ցավագին,
Բայց դե ո՞վ է մեզնից
Դասեր առնում կարգին:

Երբ չենք փորձում ԻՄԸ
Փոխարինել ՄԵՐՈՎ,
ՆԱԽԱՆՁԸ խարխլող՝
Եղբայրական ՍԻՐՈՎ:

Երբ չենք փորձում, ավա՜ղ,
Լինել իրար նեցուկ,
Հայկյան առասպելի
Իմաստությամբ լեցուն,

Երբ չենք փորձում տեսնել
ԵՐԿԻՐ ու ԱՊԱԳԱ,
Հետնորդներին, որոնք
Պիտի ծնվեն ու գան:

Պիտի գան, որ լինեն
Եվ ՏԵՐ, և ԴԱՏԱՎՈՐ
Ապրած մեր օրերի՝
Արդար ու հանցավոր...

Արարատյան դաշտի
Հեռու մի անկյունից
Մեզ են նայում երկու
Կապույտ եռանկյունի...
Նրանց միտքը լռին
Մեր սրտերն է բախում
Մեզ անվերջ տրոհող՝
Օրվա առուծախում.

«Սթափվե՛ք, հայե՛ր,
Ուշքի եկեք մեկ էլ.
Ջրհեղեղից էլ վատ
Փորձությունն է եկել...»:

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Նժդեհյան Յեղակրոն» կուսակցության նախագահ

ԱՐՑԱԽՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Այս ծրագրային հոդվածը գրվել և հրապարակվել է 2007 թ.: 15 տարվա վաղեմություն ունեցող գրության որոշ դիտարկումներ արդիական են նաև այսօր ու ակնհայտ են դարձնում այն, մեղմ ասած, բացթողումները, ինչը հասցրեց Արցախյան խնդրի այսպիսի «լուծման», ինչը, մեր խորին համոզմամբ, ժամանակավոր տեղափոխություն է:

Արցախյան խնդիրը միասնական Հայկական Հարցի մասնակի հատվածն է, որի լուծման հրամայականն ու նպատակները բխում են Հայ Տեսակին ի սկզբանե վիճակված գերնպատակ-առաքելությունից, և դրա իրագործման պայմանն է սեփական բնօրրանում՝Հայկական Լեռնաշխարհում, ազգային ինքնության և հարատևության ապահովումը:

Արցախյան խնդրի լուծման հիմնարար նպատակներն են՝

–Հայոց բնօրրան-Հայրենիքի ամբողջականության վերականգնումը, որը շարունակական երևույթ է: Այս առումով Արցախյան խնդրի լուծումը չի սահմանափակվում միայն Լեռնային Ղարաբաղի և հարակից հայկական տարածքների ազատագրումով. ընդգրկում է ամբողջ Արցախ աշխարհի վերատիրումը,

–Հայ Տեսակի և Հայոց Արժեքային Համակարգի պահպանումն ու զարգացումը, որոնք ինքնին պահանջում են մեր տեսակի ներսում որակական բազմազանության ապահովում. թուրք-թաթարական միջավայրում արցախահայությունը ենթակա էր ոչ միայն ֆիզիկական բնաջնջման ու ձուլման, այլև՝ հոգեմարմնական ինքնատիպ կերտվածքի խաթարման, որը նշանակում է մեր տեսակի ներսում խորթ ենթատեսակի առաջացում, ոգու ու արժեքների անդառնալի կորուստ,

–Մեր ինքնության զարգացման ու հարատևման համար անհրաժեշտ մտահոգևոր ու էներգետիկ դաշտի հզորացումը: Հայոց Աշխարհը մեկ ամբողջական օրգանիզմ է, և նրա մեկ օրգանի («փոքր աշխարհ») պակասը խաթարում է ամբողջ օրգանիզմի բնականոն գործունեությունը ու Հայությանը զրկում Հայրենի Բնության, ամփոփված նախնիների, հերոսների սնուցող ու զորացնող անսպառ էներգիայի մի մասից,

–Հեռանկարում Արցախը Հայաստանի Հանրապետությանը միացնելու հրամայականը, քանզի հայկական պետությունը այնքանով զորեղ կլինի, որքանով միավորված կլինեն նրա բոլոր բնատարածքները: Պատմական փորձը ցույց է տալիս, որ առանձին հայկական թագավորությունները կամ նախարարական տներն անջատանջատ ի զորու չեն եղել դիմակայելու արտաքին հզոր ուժերին:

Մեր նպատակներն արդար են, քանի որ՝

–Համահունչ են Արարչական ներդաշնակ աշխարհակարգին, այն է՝

Արարիչը Հայ Տեսակին արարել է Հայկական Բարձրավանդակում, որին բացարձակ հարազատ էին (և են) մեր մարմինն ու ոգին: Արդ, մեր բնօրրանին վերատիրելով, մասնակցում ենք աշխարհակարգի ներդաշնակության վերականգնմանը,

–Միանգամայն բարոյական են. մենք ու մեր սերունդները սրբազան պարտավորություն ունենք բոլոր ժամանակներում Հայրենիքի ազատագրության համար արյուն թափած ու կյանք զոհաբերած նվիրյալ հայորդիների սերունդների վրիժառնենչ ոգու առաջ՝ նրանց հավիտենարժեք գործը Արարչի կամոք շարունակելով ու հաղթական ավարտին հասցնելով:

Վերը նշված հիմնարար նպատակներից ածանցվում են հետևյալ մասնակի նպատակները.

1. Ազգային անվտանգության համակարգի ապահովումը: Հայոց անկախ պետականության (իմա՝ ներկայի երկու հայկական պետությունները) ռազմական և աշխարհաքաղաքական դիրքերի ուժեղացումը: Առանց Արցախի հայոց պետականության՝ հայության ապագան վտանգված է,

2. Հայության բնականոն գործունեության և ինքնադրսևորման (մասնավորապես՝ հայրենադարձության կազմակերպման) համար կենսական անհրաժեշտ բնատարածքների ու ոլորտների ընդլայնումը,

3. Հայության բնական, տնտեսական ու մտավոր պաշարների միավորումը,

4. Հասարակության ներսում ազգային լիարժեքության (հայրենատիրական) զգացումի (մասնավորապես՝ «հաղթող ազգի» հոգեբանության) սերմանումը և արմատավորումը,

5. Գերակայության ձգտող օտար «չափանիշերին» որպես այլընտրանք՝ ազգային արժեհամակարգի կենսագործմանը նպաստող առարկայական ու բարոյահոգեբանական գործոնների ուժեղացումը,

6. Հայկական Լեռնաշխարհի վերատիրման շարունակական գործընթացի ներկա փուլի հոգեբանական ու առարկայական ամրագրումը,

7. Արտագաղթի սահմանափակման ու հայրենադարձության համար նպաստավոր առարկայական ու հոգեբանական գործոնների պետական ապահովումը:

Ներկա բանակցային գործընթացի շուրջ հնչեցված հայտարարություններից (որոնք կարող են չհամապատասխանել իրականությանը) սպասելի են արցախյան խնդրի թե՛ հայանպաստ և թե՛ ոչ հայանպաստ լուծումներ:

Արցախյան խնդրի ոչ հայանպաստ լուծումներն առաջին հերթին՝

–Կվտանգեն արցախահայերի ֆիզիկական գոյությունն ու կմեծացնեն նրանց տարագրման և ձուլման վտանգը:

–Հայության համար կարձանագրեն Արցախ աշխարհի անխուսափելի կորուստը:

Արցախյան խնդրի ոչ հայանպաստ լուծումները կունենան նաև վերոհիշյալներից ածանցվող հետևյալ բացասական հետևանքները.

1. Ազգային անվտանգության՝ ՀՀ ռազմական ու աշխարհաքաղաքական դիրքերի թուլացում, ընդհուպ՝ վտանգում,

2. Հայկական Լեռնաշխարհի վերատիրման սկսված՝ համազգային և ռազմավարական նշանակության գործընթացի՝ անորոշ ժամանակով հետաձգում,

3. Հայության բնականոն գործունեության և ինքնադրսևորման (մասնավորապես՝ հայրենադարձության կազմակերպման) համար կենսական տարածքների ու ոլորտների կորուստ,

4. Հայության բնական, մտավոր ու տնտեսական պաշարների կորուստ,

5. Հայկական արժեքային համակարգի՝ կյանքի կոչման համար առկա անհրաժեշտ պարարտ հողի ու հերթական խրախուսող հաղթական օրինակի վերացում,

6. Հուսալքություն ու պարտվողական տրամադրություններ հայության մեջ,

7. Արտագաղթի հայրենակործան ալիքի բարձրացում,

8. Հայրենադարձության համար նպաստավոր առարկայական ու հոգեբանական առկա գործոնների փոշիացում,

Ա. Արցախյան խնդրի հանգուցալուծման բանակցային գործընթացում մեր հիմնական հաղթաքարտերն են՝

–ԼՂՀ (այժմ՝ նախ Արցախի Հանրապետություն– խմբ.) հայության անկոտրում միահամուռ պահվածքը,

–ԼՂՀ մարտունակ Պաշտպանության բանակի առկայությունը,

–ԼՂՀ փաստացի անկախ պետական կարգավիճակը՝ հիմնված ազգերի ինքնորոշման իրավունքի վրա,

–ԼՂՀ պետական կառավարման համակարգի կայացածությունը,

–Ազատագրված, սակայն դեռ ամբողջովին չվերաբնակեցված հայկական տարածքների նկատմամբ իրական ռազմաքաղաքական վերահսկողությունը,

–ԼՂՀ-ի շուրջը անվտանգության գոտու առկայությունը,

–Հանրաքվեի միջոցով ԼՂՀ սահմանադրության ընդունումը (2006 թ., գործող ԱՀ-ինը՝ 2017թ.– խմբ.):

Բ. Առկա են մի շարք պաշարամիջոցներ, որոնք, ազգային շահից և արժեհամակարգից բխող քաղաքականություն վարելու դեպքում, կարող են առնվազն դառնալ բանակցային գործընթացի խաղաքարտեր: Դրանք են՝

–Արդարացի պատերազմում հաղթողի հոգեբանության առկայությունը և վերջնական ամրագրումը արցախահայության մեջ, որը կարող է առարկայացվել Ադրբեջանի հետ հավանական ռազմական բախումների ժամանակ հայկական այլ տարածքների ազատագրումով,

–ՀՀ-ի հետ ԼՂՀ ռազմաքաղաքական դաշինքը, ֆինանսատնտեսական համակարգերի սերտաճումը և միասնականացումը,

–ՀՀ իշխանությունների բազմակողմանի օժանդակությունը ԼՂՀ-ին,

–ԼՂՀ ազգային միատարրությունը,

–ԼՂՀ-ում քայքայիչ աղանդների բացակայությունը,

–ՀՀ քաղաքական ուժերի (այդ թվում՝ ընդդիմադիր կուսակցությունների) մեծ մասի բացասական վերաբերմունքը Արցախյան խնդրի՝ էական զիջումներով լուծման հանդեպ,

–Սփյուռքահայության նյութական ու հոգեբանական աջակցությունը ԼՂՀ-ին,

–ԼՂՀ-ում ներդրումային ծրագրերի իրականացումը,

Բանակցային գործընթացի հաջողությունն ապահովող լրացուցիչ խաղաքարտեր կարող են ձեռք բերվել հետևյալ գործոնների օգտագործումով.

–Քաղաքական արդյունավետ տեխնոլոգիաների գործադրումը, մասնավորապես Արցախյան խնդրով և տարածաշրջանային հարցերով շահագրգիռ կողմերի (պետություններ, վերազգային կառույցներ) շրջանում նպաստավոր գործոնների ձեռքբերումը,

–Տեղեկատվական-քաղաքական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումը, մասնավորապես՝ Ադրբեջանի հեղինակազրկումը և Արցախյան խնդրի հայանպաստ լուծման արդարացիության միջազգային հիմնավորումը:

–Բնական և էներգետիկ ռազմավարական պաշարների նպատակային շահագործումը՝ Ադրբեջանի վրա ներազդման լրացուցիչ լծակներ ձեռք բերելու համար (օրինակ՝ ԼՂՀ-ում ջրամբարների ցանցի կառուցումը և դրանով Ադրբեջանի՝ ջրային պաշարների որոշակի մասից զրկումը):

–Եռանդուն մասնակցությունը տարածաշրջանում ընթացող գործընթացներին, մասնավորապես՝միջպետական և տարածաշրջանային նշանակության հաղորդակցության ուղիների կառուցմանը՝ հնարավորության դեպքում դրա շրջանակներում ձևավորելով սեփական ազգին ծառայող՝ տեղային նշանակության հաղորդակցական ուղղություններ ու ցանցեր:

–Հատուկ նշանակության գործողությունների կատարումը, որոնք ուղղված կլինեն Ադրբեջանի ներսում ազգային փոքրամասնությունների (թաթեր, թալիշներ, լեզգիներ) ազատագրական տրամադրությունների և դրսևորումների աճին ու օգտագործմանը:

Արցախյան խնդրին առնչվող բացասական գործոնները

Վերը նշված հաղթաթղթերից ու պաշարներից բացի՝ առկա են մի շարք գործոններ, որոնք ոչ միայն չեն նպաստում Արցախյան խնդրի հայանպաստ լուծմանը, այլև կարող են լուրջ խոչընդոտ դառնալ դրա համար: Դրանք են՝

–Հայության ներսում հասարակական-քաղաքական բնույթի բացասական երևույթները, որոնք գերազանցապես արդյունք են մեր կյանքում օտար արժեքային համակարգերի գերակայության,

–ԼՂՀ ժողովրդագրական անցանկալի վիճակը,

–Բնակվածության ցածր աստիճանը և գյուղերի մեծ մասի լքվածությունը,

–Բնակչության անհավասարաչափ բաշխվածությունը (հիմնականում՝ Ստեփանակերտում և շրջկենտրոններում),

–Բնակչության ծերացումը,

–ԼՂՀ ներսում ճանապարհների պակասը, որի հետևանքով դժվարանում է երկրի սոցիալ-տնտեսական յուրացումը,

–Բնական պաշարների շահագործման ցածր մակարդակը,

–ԼՂՀ հայության ու ՀՀ հայության միջև բարոյահոգեբանական արհեստական անջրպետի ձևավորումը, որին ուղղորդում և նպաստում են օտար քարոզչական համակարգերին լծված որոշ տեղական ուժեր,

–ՀՀ հայության որոշ մասի կողմից Արցախը՝ որպես Հայաստան աշխարհի բաղկացուցիչ մաս, արցախահայությունը որպես հայության հետ մեկ ամբողջություն չդիտարկվելը,

–Հայության ներսում (ավելի շատ ՀՀ-ում), նյութապաշտական գերիշխող մթնոլորտը, որի պայմաններում հայրենի հողի կորուստը մեծ վարկերի, օժանդակությունների դիմաց կարող է Արցախյան խնդրի լուծման ընդունելի տարբերակ դիտվել գլոբալացվող հասարակության համար,

–Պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքների և ազատամարտիկների զգալի մասի սոցիալ-տնտեսական ծանր պայմանները:

Հայության անելիքները

Արցախյան խնդրի հայանպաստ լուծումն ապահովելու համար հայությունը, հանձինս իր ազգային-պետական կառույցների, պետք է իրականացնի ռազմավարական նշանակության հետևյալ միջոցառումները.

–ՀՀ-ն ու ԼՂՀ-ն պետք է համատեղ ուժերով կազմակերպեն Արցախի ամբողջական վերաբնակեցման գործընթացը: Ցանկալի է, որ վերաբնակվողների մեջ նկատելի տոկոս կազմեն հայրենասիրությամբ տոգորված հայերը, որոնք գիտակցում են իրենց արածի կարևորությունը և պատրաստ են կռիվ տալու հայրենի հողի համար:

Վերաբնակեցման ռազմավարությունն այն է, որ վերաբնակվողները հայտնվեն առավել բարենպաստ սոցիալ-տնտեսական միջավայրում:

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրի իրականացումը պետք է նպատակաուղղված լինի՝

–Բանակի հզորացմանը,

–Վերաբնակեցման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմանների ապահովմանը,

–Այլ երկրների հետ տնտեսական կապերի խորացմանը:

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր ուղղություններից պետք է լինեն Արցախի բնական պաշարների հիման վրա արտադրությունների ստեղծումն ու պատրաստի արտադրանքի արտահանումն այլ երկրներ:

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացման համար անհրաժեշտ են ոչ միայն պետական մակարդակով ներդրումները, այլև՝ սփյուռքահայության: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ կլինեն հարկային արտոնությունների տրամադրումը, ազատագրված տարածքներում և գյուղական շրջաններում տնտեսական գործունեություն ծավալող ներդրողների՝ հարկերից ազատումը:

Գաղափարաքարոզչական կառուցակարգերի գործադրումը, որոնք պետք է նպատակաուղղված լինեն՝

–Հայության ներսում «արցախցի-հայաստանցի» հայակործան դավադիր մտայնության իսպառ վերացմանը,

–Արցախի՝ որպես Հայաստան աշխարհի բաղկացուցիչ մաս լինելու անվիճելիության մտայնության հաստատմանը,

–Հայության հայրենասիրական ու բարոյական հատկանիշների բարձրացմանը,

Ներքաղաքական պայքարում իշխանությունների խնդիրները պետք է լինեն՝

–Ընդդիմության հայրենասիրական ուժերի հետ համագործակցության ձեռնարկումն ու խորացումը,

–Ռազմահայրենասիրական ուժերի համախմբումը Արցախյան խնդրի շուրջն ու դրանց պետական հովանավորությունը:

Իսկ ընդդիմության խնդիրները պետք է լինեն՝

–Ներքաղաքական պայքարում Արցախյան խնդրի շահարկման բացառումը,

–Արցախյան խնդրի շուրջն իշխանություններին աջակցությունը և նրանց հետ համագործակցությունը:

Արցախյան հարցի կարգավորման և պատերազմի դրույթներ

Յուրաքանչյուր հայրենազգաց և ազգի ապագայով մտահոգ հայորդի պետք է հստակորեն գիտակցի պահի լրջությունը և ուղեղում դրոշմի այս դրույթները.

1. Արցախը Հայոց Հայրենիքի անբաժան մասն է, ՀՀ պետության ինքնիշխանության և քաղաքական անկախության կարևորագույն երաշխիքը,

2. Երկրի խաղաղության և կայունության միակ գրավականը ազատագրված հայրենի հողերի բացառապես հայկական վերահսկողությունն է,

3. Ռազմաճակատի խաղաղությունն արդյունք է հայ զենքի հաղթանակի, ոչ թե՝ օտարների միջնորդական ջանքերի,

4. Հողային զիջումներից խոսողը կոչ է անում տարածաշրջանային հավասարակշռության խախտման, այսինքն՝ պատերազմի վերսկսման,

5. Ադրբեջանին տարածքներ զիջել՝ նշանակում է հնարավորություն տալ նրան վերսկսելու պատերազմական գործողությունները,

6. Զիջելով հողեր՝ մենք զիջում ենք իրական և շոշափելի երաշխիքներ, փոխարենը ստանում ենք աներաշխիք սին խոստումներ,

7. Ով ցանկանում է խաղաղություն, պիտի պատրաստ լինի պատերազմի՝ առաջնորդվելով ազատագրված հողերը չզիջելու գաղափարով,

8. Պատերազմը կսկսվի Ադրբեջանին հողեր զիջելուց անմիջապես հետո:

9. Կարգավորման պայմանագրի կնքումից և նրա առանձին մասերի իրականացումից հետո ոչ ոք չի կարող խանգարել Ադրբեջանին՝ որևէ պատրվակով պատերազմական գործողություններ վերսկսելու: Իսկ միջազգային հանրության դատապարտումները որևէ իրական արժեք չեն ունենա,

10. Հողային զիջումների կողմնակիցները կամա թե ակամա կողմ են Գորիսի, Կապանի և Մեղրու շրջանների ռմբակոծմանը,

11. «Գրավյալ տարածք» ասող հայը թրքատիպ կամ մոլորյալ հայ է: Այդ տարածքները հայերն իրավամբ կոչում են «հայրենի ազատագրված հողեր»,

12. Խաղաղապահ ուժերը սեփական աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող պետությունների գրավման (օկուպացիոն) զորքեր են: Թողնել նրանց մուտքը երկրի կարևորագույն ռազմավարական տարածքներ՝ նշանակում է Հայրենիքը դնել օտարի վերահսկողության տակ,

13. Ոչ մի «խաղաղապահ» միջազգային ուժ դեռ ոչ մեկին չի պաշտպանել հակառակորդների հարձակումից,

14. Մինչև այսօր կայուն խաղաղություն կա, բայց խաղաղապահ ուժեր չկան: Վաղը կարող են խաղաղապահ ուժեր լինել, իսկ խաղաղություն չլինի,

15. ՀՀ-ի ու Արցախի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը երբեք կախված չէ Արցախյան հարցի «կարգավորումից»: Դա առասպել է, որը նպատակ ունի թմրեցնել հայերիս զգոնությունը: Աշխարհում կան տասնամյակներ շարունակվող, չկարգավորված բազմաթիվ հակամարտություններ (Իսրայել-Լիբանան, Կիպրոս, Քաշմիր, Կուրիլներ, Հյուսիսային Իռլանդիա, Մալվինյան կղզիներ...), որոնք բնավ չեն խանգարում հակամարտող երկրների համակողմանի զարգացմանը,

16. Որևէ երաշխիք չկա, թե օտարները «կարգավորումից» հետո կանեն խոստացված ներ-

դրումները: Այդպես եղավ Եգիպտոսի ու Հորդանանի հետ, որոնք Իսրայելի հետ խաղաղության պայմանագրեր ստորագրելուց հետո ստացան իրենց խոստացվածի կեսից էլ պակաս, իսկ այդ երկրների կախվածությունը Արևմուտքից էլ ավելի մեծացավ,

17. Ով ճանաչում է թուրքի էությունը, նա չի կարող հավատալ վերջինիս խոսքին: Եվ ով դեռ կերակրվում է օտարների միջնորդական հավաստիացումներով, նա անճանաչ է գոնե մեր պատմությանը,

18. Ով ուզում է, որ 21-րդ դարն անցնի առանց հայկական ողբերգությունների, պետք է հրաժարվի զիջելու գաղափարից և լծվի ազատագրված տարածքները համակողմանիորեն յուրացնելու գործին,

19. Ադրբեջանական այսօրվա ռազմատենչ աղմուկ-աղաղակը հոգեբանական ներգործման միջոց է, որը նպատակ ունի, մեզ վախեցնելով, պարտադրելու պարտվողական պայմանագիր,

20. Չկան առանձին ՀՀ և Արցախի շահեր, կա հայ ազգի մնայուն և միասնական շահ: Արցախի հարցը համահայկական հարց է,

21. Հայրենի հողի ճակատագիրը միայն այս սերնդի որոշելիքը չէ: Նաև ոչ ոք իրավունք չունի Հայրենիքի ազատագրության համար ընկած հազարավորների փոխարեն հողային զիջումների որոշում կայացնելու,

22. Մեզ համար գոյություն չունի Արցախի հարցի միջազգային կարգավորում: Արցախի հարցը միայն և միայն հայության հարցն է, որի էությունն է ազատագրված հայրենի տարածքների հայկական յուրացումը:

Հայերը, որպես մերան, խմորում են հարմարվողականությանը հակված մարդկությանը: Տրամաբանորեն դատելով՝ իրենք վաղուց պիտի դադարեցնեին պայքարը և հնազանդվեին ճակատագրին: Բայց հայը նորից ու նորից է հրաժարվում ճանաչել պարտությունը, և դրանում է համառ, անպարտելի ժողովրդի բնավորությունն ըմբռնելու բանալին, որի ներդրումը քաղաքականության մեջ անհամաչափելիորեն մեծ է իր թվաքանակի համեմատ:

Դևիդ Լոնգ

Թերևս դժվար է գտնել մի ազգի գրեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինն է, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք... Երկրագնդի վրա չկա մի այլ երկիր, որն այդքան հագեցած լինի հրաշալիքներով, որքան հայոց հողը... Ես սովորել եմ Հայոց լեզուն, որպեսզի հասկանամ՝ ինչ լեզվով են խոսել Աստվածները, քանզի հայերենը Աստվածների լեզուն է, Հայաստանը նրանց Հայրենիքն է, և Աստվածները ծագումով Հայաստանից են:

Ջորջ Բայրոն

ԱՐՍԵՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ

Գրող, երգահան

ԴԵՐՍԻՄԻ ԹԱԳՈՒՀԻՆ (ՄԱԹԻԼԴԱ)

Շուրթերը ջնարակված են թուրքերենով, լեզվի ավիշներում քրդերենն է հոսում, միայն սիրտն է շարունակում համառորեն տրոփել իր համար արդեն անհասկանալի մի լեզվով, որն անուշ է, ինչպես այն կաթը, որը ճիշտ կես դար առաջ, երբ ինքն ընդամենը կես տարեկան էր, առաջին ու վերջին անգամ մնաց, չորացավ իր վարդ այտերին, քանզի սրբողին սրբեցին աշխարհի երեսից: Իսկ սիրտը շարունակում է աղոթել իր համար դեռ անըմբռնելի մի լեզվով, որը, չգիտի, թե ինչպես, բայց միշտ իր իղձերը հասցնում է հասցեատիրոջը: Եվ ամեն աղոթքից հետո երկյուղածությամբ զարմանում է մտքում. «Մի՞թե ես ենթագիտակցորեն տիրապետում եմ Աստծո լեզվին, որը բուրում է, ինչպես այն ահռելի մարդու ճակատի աղի արարչակաթիլը, որն այն ժամանակ՝ ուղիղ կես դար առաջ՝ նույն օրը, երբ ես արդեն կես տարեկան դարձա, ընկավ, այրեց իմ՝ հրճվանքից լայնացած բիբը, երբ նա, իր առնական երկաթե ձեռքով զգույշ շոյելով իմ հեղհեղուկ գաղտը, ինձ կերակրողի մերկ ուսերին փռված վարսերն էր համբուրում ոչ առաջին, սակայն՝ վերջին անգամ, քանզի այդ օրը, երբ հերթական անգամ երկնքի տակից ջնջում էին ջինջերին, սրբեցին-տարան և իմ սրբերին անպաշտպան գաղտիս վերևից՝ կրկին դարձնելով ինձ մի անգաղտ գաղթական սեփական հայրենիքում»:

Վրիժառու Արամի զավակների մայր այս՝ կես տարեկանում որբացած կես դարեկան վրիժատենչ այրին Արածանու վտակի ափի մայթեզրին, ժայռից բխող՝ Անահիտի ամոքիչ աղբյուրի մոտ՝ մուրազածառի տակ, որի ճյուղին քիչ առաջ իր շորից կտրած մուրազալի կտորն էր հանգուցել, մամռակալած քարի մութ խոռոչում մոմ է վառել և ձեռքի ափերը, կրծքի մոտ իրար հպած, աչքերը գոցած, սրտի լեզվով իր երազանքներն է լուռ աղոթում հենց այն պահին, երբ թուրքացված Արևմտյան Հայաստանում ոչ պատահականորեն հայտնված, հայկական մնացած Հայաստանի քաղաքացի 4 հայորդի որոշում է, թե ինչպես անսպասելի լքեն զազայացած քաղաքը, որ խուսափեն թուրք ոստիկանների հետապնդումից: Եվ որոշում են գնալ այն ճանապարհով, որով պիտի չգնային: Ու հանկարծ նկատում են այն աղբյուրը, այն մուրազածառը, այն վառվող մոմը, որ գուցեև պիտի չտեսնեին, և այն կնոջը, որն իր համար անհասկանալի լեզվով հենց այդ պահին աղերսում էր. «Տեր իմ, ո՞ւժ տուր՝ դիմանամ, մինչև հայերիս վերադարձը, հ՞ույս տուր՝ հավատամ, որ երկիրն այս մի օր նորից հայերով լեցուն

Հայաստան կլինի, և, ի հավաստումն դրա, ցույց տուր ինձ գոնե մի նշան»: Հանկարծ կողքով անցնող արագասլաց մեքենան կտրուկ արգելակում է՝ տագնապաձայն ուժգին ճռվողյունը տարածելով ձորով մեկ և սրսկելով Մաթիլդայի ոսկորների մեջ: Կինը պապանձվում է. մերթ ընկալելով կատարվածը որպես Աստծո նշան, մերթ տարակուսելով՝ միթե կրկին մատնել են իրեն այդ անաղուհաց ապերախտները: Իր քրդացած կիսահայ վարորդը վախենում է դուրս գալ մեքենայից:

Ինչ անի. ինքը մոտ վազի... Ուշ է. արգելակված մեքենան ետընթացով մոտենում է արդեն: Հպարտ հայուհին որոշում է մնալ տեղում և շարունակել աղոթքը: Չորս հաղթանդամ երիտասարդ դուրս է գալիս արգելակված մեքենայից, մոտենում միայնակ կնոջը և, հայերեն ողջունելով, հարցնում.

–Բարև՛ ձեզ, տիկի՛ն, դուք հա՞յ եք:

Մաթիլդան, ճանաչելով իր Աստծո լեզուն և ցնցվելով, լիցքաթափված շրջվում է, նախ նայում արգելակված մեքենայի համարանիշին, հետո՝ երիտասարդներին ու, արցունքներն աչքերին երջանիկ ժպտալով, հերթով փարվելով նրանց, յուրաքանչյուրի գրկում մոտ քառորդ ժամ անընդհատ դողալով, հեկեկալով, մի կերպ կրկնում է իր հիշած միակ հայերեն բառը և նույնի թուրքացված տարբերակը.

–Հայ՝ էրմենի, հայ՝ էրմենի...

Հերթը հասնում է չորրորդին. առաջինն արդեն նկարահանում է, երկրորդը քրդերեն հաղորդակցվում է Մաթիլդայի վարորդի հետ, երրորդն անծանոթուհուն անգլերեն ներկայացնում Էրգիր իրենց այցի բուն նպատակը, իսկ որբ Հայրենիքի որբ թագուհին չորրորդի թևերի տակ, ինչպես ահաբեկված, մրսած մի թռչնակ, փարված նրա կրծքին, դեռ հեկեկալով, դողում, կծկված տրոփում է բաց սրտի պես՝ ասես հանձնված հարազատ ափերի՝ շարունակելով դամի պես միաձայն, միատոն ու միալար շշնջալ.

–Հայ՝ էրմենի, հայ՝ էրմենի, հա՞յ, հա՞յ...

Եվ նրա Կոմիտասված սրտի Անտունին դուրս է ցայտում չորրորդի շուրթերից.

–Սիրտս նման է էն փլած տներ...

2009 թ. նոյեմբերի 19

* * *

Ինչպե՞ս չըսիրեմ, երկիր իմ կիզված,
Պարզված վերստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չըսիրեմ, հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր...

Որքան որ ելան արյունիդ ագահ,
Դու, կամավոր զոհ, բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վըկա,
Չարերի կոխան, խաչվա՛ծ իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ել՝ նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվի;ր խանդով խնդագին,
Վառի՛ր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նահրյան հոգին...

Մնացի կարոտ իմ հայրենիքին,-
Օտար աշխարհում, լուռ թափառական,
Կարոտ՝ մայրենի սրտագին խոսքին,
Մնացի մենակ, խեղճ որբի նման:

Իմ սիրտն այնտեղ է, ուր աստեղամերձ
Լեռներն են կանգնել՝ հագած կուռ զրահ,
Ուր եղջերուն է ոստնում քերծից քերծ,
Արծիվը ճախրում վիհերի վրա:

Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր
Կերտել են շքեղ կոթողներ հավերժ,
Որ ժողովուրդը վսեմ վեպը մեր
Պատմում է դարձյալ հավատով անշեջ:

Մա՛յր իմ ժողովուրդ, դեպի քեզ կըգամ,
Կըգամ դեպի քեզ, հայրենի աշխարհ,
Ինչ որ վեհ ունիմ, սիրով ձեզ կըտամ,
Եվ սիրտս, կյանքս միայն քեզ համար:

Ավետիք Իսահակյան



Թորթումի ջրվեժ, Արևմտյան Հայաստան

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Արևելագետ, փորձագետ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՏԱՑՈՒՄԸ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

1991 թ. դեկտեմբերի 25-ին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, 1992 թ. սկզբներին Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Իսկ դիվանագիտական հարաբերություններ երկու երկրների միջև հաստատվեցին նույն թվականի փետրվարի 8-ին, երբ Երևանում բացվեց ԻԻՀ-ի դեսպանությունը: Դրանք արտակարգ և լիազոր դեսպանի մակարդակի բարձրացվեցին միայն 1994-ին:

Թեև հայ-իրանական փոխհարաբերություններն ի սկզբանե գնահատվել են բարեկամական, և կողմերի միջև ստորագրվել են համագործակցության, փոխհարաբերությունները տարբեր ոլորտներում ընդլայնելու վերաբերյալ բազում համաձայնագրեր ու փոխըմբռնման հուշագրեր, սակայն դրանց մի զգալի մասն այդպես էլ մնացել է թղթի վրա: Այլ խոսքով՝ երկու դարավոր հարևան երկրներն ունեն պատմամշակութային ընդհանրություններ ու փոխհարաբերությունները ընդհանուր շահերի հիման վրա զարգացնելու և ընդլայնելու լուրջ ներուժ, սակայն փաստորեն դրանք շատ հեռու են անգամ բավարար լինելուց, ինչը պամանավորված է տարբեր գործոններով, այդ թվում՝ իսլամով ու ՀՀ-ի կրավորականությամբ: Այսուհանդերձ՝ նման իրավիճակը բնավ էլ չի խանգարել, որ ավելի քան 30 տարի հայ և իրանցի տարբեր մակարդակի պաշտոնյաներ յուրաքանչյուր հանդիպման ընթացքում ու պատեհ առիթներով չզլանան ու տարբեր կրոններ դավանող երկու երկրների փոխհարաբերություններն օրինակելի համարեն աշխարհի համար: Ավելին. Թեհրանը, խուսափելով Բաքվի հնարավոր դժգոհությունից, Արցախի ազատագրած տարածքները «գրավյալ» էր գնահատում և թույլ էր տալիս, որ տարբեր առիթներով Իրանում իրականացվեր հակահայ քարոզչություն, օրինակ՝ Խոջալուի դեպքերը որպես ցեղասպանություն ներկայացնել և խեղաթյուրել փաստերը: Երևանը ևս, տարբեր պատճառներով, լուրջ ջանքեր չի գործադրել «օրինակելի փոխարաբերությունները» գործնական դաշտ բերելու ուղղությամբ:

Նախքան բուն թեմային անցնելը նշենք,

թե ինչո՞ւ ենք մեր արևելյան հարևանին Ֆեյք Ադրբեջան անվանում: Իրանի Ազարբայեջան երկրամասը Սասանյան Իրանում միջին պարսկերեն կոչվել է Աթուրփաթաքան, Ազարբադեքան և Ազարբայեգան տարբերակներով, իսկ հայերեն՝ Ատրպատական: Ազարբայեջան տարբերակը, որը տարածվել է հետիսլամական շրջանում, Ազարբայեգանի արաբացված տարբերակն է. արաբական գրերում «գ» հնչյունը բացակայում է, ուստի պարսկերենից արաբերենին անցած բառերում «գ» հնչյունը դարձել է «ջ» (օրինակ՝ թագ՝ թաջ, գոհար՝ ջոհար). այդպես էլ Ազարբայեգանը դարձել է Ազարբայեջան և այդ տարբերակով վերադարձել պարսկերենին: Իսկ հայերիս կիրառած Ադրբեջանը Ազարբայեջանի ռուսացված տարբերակն է:

Ադրբեջան կոչվող «երկիրն» արհեստականորեն Օսմանյան Պետությունն է ձևավորել՝ Իրանի Ազարբայեջան երկրամասին տիրանալու նպատակով, ապա նույն ցանկությամբ ամրապնդվել է ԽՍՀՄ-ի օրոք: Այլ կերպ ասած՝ այդ երկիրը պետք է կոչել Ֆեյք Ադրբեջան կամ, եթե հայերեն, ապա՝ Կեղծ Ատրպատական, որի գոյության իմաստը հակահիրանականությունն է, ինչին մինչ օրս հավատարիմ է Ֆեյք Ադրբեջանը:

Խոսելով ընդհանուր շահերի վրա խարսխված սերտ բարեկամական փոխառնչությունների մասին՝ նշենք, որ այդ առումով ոչ թե Հայաստան-Իրանն են օրինակելի (որոնք միմյանց հաճոյախոսելուց շատ հեռու չեն գնացել), այլ օրինակելի են Իսրայել-Ֆեյք Ադրբեջան փոխհարաբերությունները, որոնք ապացուցված են գործնականում: Այսօր դրանք սերտ ռազմավարական են, նույնիսկ՝ ավելի սերտ, քան՝ ռազմավարական ու անվտանգության պայմանագիր կնքած Թուրքիայի ու Իսրայելի: Փոխհարաբերություններ, որոնք հիմնված են ընդհանուր շահերի վրա, և իրոք կարող են օրինակելի համարվել որպես տարբեր կրոններ դավանող ու միանգամայն տարբեր քաղաքակրթությունների ներկայացուցիչների փոխառնչություններ, այն դեպքում, երբ հայ-իրանականն այդպես էլ չխարսխվեց երկու երկրների ազգային անվտանգության շահերի վրա: Մինչդեռ Իրանն իր 15 հարևաններից միայն Հայաստանի հետ ընդհանուր նման շահեր ունի, ինչպեսև՝ Հայաստանը, որի երկու հարևանները թշնամաբար են տրամադրված, իսկ երրորդի պահվածքը, մեղմ ասած, ոչ բարեկամական է, ինչի մասին է վկայում 44-օրյա պատերազմի ընթացքում այդ երկրի դիրքորոշումը:

Հայաստանի Հանրապետությունը շուրջ 30 տարի ի լուր աշխարհի հայտարարում էր, թե Արցախի Հանրապետությունն ու ազատագրված տարածքները մեր երկրի անվտանգության երաշխիքն են, բայց, ցավոք, դրա համար քարոզչական որևէ լուրջ քայլ չարվեց, այնինչ երբ Ֆեյք Ադրբեջանն այդ առումով ջանք չէր խնայում փաստերը խեղաթյուրելու ու ՀՀ-ն որպես զավթիչ ներկայացնելու ուղղությամբ, Իրանն էլ դրանք ու «Ղարաբաղը» համարում էր ադրբեջանական: Ավելին. Բաքվում ԻԻՀ դեսպան Մուսավին, 44-օրյա պատերազմի ընթացքում Գանձակ այցելելով, լացակումած մեղադրում էր հայերին «անմարդկային լինելու» համար, իսկ Թեհրանը լռում էր Արցախի դեմ Ադրբեջանի՝ ֆոսֆորային ռումբեր կիրառելիս: Անշուշտ լռում էին նաև գերտերություններ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը, նաև Եվրոպական Միությունը, բայց դրանց շահերն ավելի շատ համընկնում էին Ֆեյք Ադրբեջանի շահերին, ոչ թե՝ ՀՀ-ի, իսկ Իսրայելը ժամանակակից զենքեր, այդ թվում՝ ԱԹՍ-ներ էր մատակարարում իր բարեկամ Բաքվին: Բացի այդ, նա հրեական հզորագույն սատարիչ (լոբբիստական) լծակներն աշխարհի տարբեր երկրներում գործի էր դրել՝ ի պաշտպանություն Ֆեյք Ադրբեջանի: Իսրայելը, փոխշահավետ բարեկամության օրինակ ծառայելով, լուրջ ներդրում ունեցավ պատերազմում՝ ի նպաստ Բաքվի, որը, ի նշան երախտագիտության, «հաղթանակի» տոնին ծածանեց նաև Իսրայելի պետական դրոշը: Իրանն էլ տարբեր մակարդակներով, թերևս հարյուրավոր անգամ, շնորհավորեց «հաղթանակը»: Սակայն, ի պատասխան, Թուրքիայի նախագահի շուրթերից ԻԻՀ տարածքային ամբողջականության նկատմամբ հնչեցին համայուրքական նկրտումներ՝ Իրանի Ադրբեջան երկրամասի առնչությամբ:

Տնտեսական ու ռազմական առումով՝ տարածաշրջանի հզոր տերություն Իսրայելը հավատարիմ է Իսրայել-Ֆեյք Ադրբեջան բարեկամությանն ու ընդհանուր շահերին բոլոր բնագավառներում՝ քաղաքական, տնտեսական

ու մշակութային, մասնավորապես՝ հույժ կարևոր քարոզչական մարզում, ինչին լծված են նաև իսրայելացի լրագրողներն ու վերլուծաբանները: Վերջիններս, քարոզելով Բաքվի տեսակետները, կարևորում են «Հարավային Ադրբեջանը» «Հյուսիսայինին» միացնելու հարցը:

Այն դեպքում, երբ Բաքուն հարևան երկրների, մասնավորապես Հայաստանի ու Իրանի մշակույթները յուրացնելու և դրանց տարածքային ամբողջականության նկատմամբ անհիմն հավակնություններ ներկայացնելու հարցում 30 տարի այնպիսի բուռն քարոզչություն է իրականացրել, որ այս ոլորտում աջակցության կարիք չունի, ՀՀ-ն անգամ չի կարողացել իր օրինական իրավունքները ներկայացնել, տանուլ է տվել այս և այլ ոլորտներում: Իսկ Իրանը ոչ միայն չի կարևորել հայկական մշակույթի դերը ընդհանուր շահերի ծիրում, այլև հաճախ լուրջ չի վերաբերվել Բաքվի քարոզչությանը, ինչը երբեմն փաստի առաջ է կանգնեցրել հենց Թեհրանին: Օրինակ, 2013 թ. դեկտեմբերին Բաքվում տեղի ունեցած՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 8-րդ նստաշրջանը ձիու մականախաղը[1] «Աշխարհի հիշողություն» գրանցամատյանում արձանագրեց որպես Ֆեյք Ադրբեջանի ոչ նյութական մշակույթի ժառանգություն՝ «Ղարաբաղի տեղական մարզաձև» անունով, մինչդեռ ոչ միայն Իրանի հնագույն պատմությունը, այլև հունահռոմեական հնագույն աղբյուրներն ու արևմտյան բազմաթիվ հանրագիտարաններ վկայում են, որ այն Իրանի ազգային մարզաձև է: Բաքվի քայլը զայրացրել էր իրանցիներին, մասնավորապես՝ մտավորականներին, ոչ միայն հարևան երկրների մշակութային ժառանգությունները յուրացնելու առումով, այլ նաև՝ դրա քաղաքական նպատակների պատճառով: Իրանի այդ մականախաղի դաշնության նախագահ Համզե Իլխանիզադեն այդ առնչությամբ ՅՈՒՆԵՍԿՕ Ֆեյք Ադրբեջանի հայտ ներկայացնելու հարցում մեղադրեց նաև ԻԻՀ կառավարությանն ու «Մշակութային ժառանգություն» կազմակերպությանը՝ անփութության ու ոչ սրտացավ վերաբերմունքի համար[2]:

Ըստ նույն աղբյուրի՝ դեկտեմբերի 1-ին հարցին անդրադարձել էր նաև պետական լրատվական ISNA գործակալությունը (Iran Students' News Agency – Իրանի ուսանողների լրատվական գործակալություն), շեշտելով, որ Բաքուն այդպիսով անջատողական և «Մեծ Ադրբեջան» ստեղծելու փուչ նկրտումներ ու նպատակներ է հետապնդում: Ֆեյք Ադրբեջանն իր դիմումի մեջ շեշտել է, թե ձիերի սանձահարումն այդ երկրում հազարամյակներ շարունակ տարածված ավանդույթ է, որի գլխավոր նպատակներից մեկը մականախաղի համար դրանք պատրաստելն է: Ապա ընդգծվել է. «Այդ նպատակով հաճախ օգտվել են ղարաբաղյան ցեղատեսակի ձիերից, որոնք բուծվել են Ադրբեջանի համանուն շրջանում»[3]: Դիմումի մեջ նշվել է նաև, որ այդ մարզաձևը մշտապես Ադրբեջանի մշակույթի ու արվեստի բաղկացուցիչ մասն է կազմել, վկայակոչելով պատմության տարբեր դարաշրջանների մանրանկարները: Փաստորեն, հարցին ԻԻՀ իշխանությունների անլուրջ վերաբերվելը երկրին փաստի առաջ կանգնեցրեց...

Իսրայելացի վերլուծաբաններն ու ԶԼՄ-ները նույն ոճով աջակցում են Ֆեյք Ադրբեջանին: Ահավասիկ իսրայելացի վերլուծաբան, «Կանայք և ջիհադը» գրքի հեղինակ, «Տնտեսական խաղաղություն» հետազոտական կենտրոնի[4] խմբագիր Ռաշել Աբրահամը իսրայելյան հեղինակավոր «Իսրայել Հայոմ» (Israel Hayom, «Իսրայելն այսօր») օրաթերթում վերլուծական է տպագրել «Հարավային Ադրբեջանը» «Հյուսիսայինին» միավորելու բովանդակությամբ, որը թարգմանաբար հրապարակվել է նաև Ֆեյք Ադրբեջանի ԶԼՄ-ներում, այդ թվում՝ https://azenglishnews.com կայքում[5]: Աբրահամը, պաշտպանելով Ֆեյք Ադրբեջանի շահերը, որոնք տվյալ դեպքում համընկնում են նաև Իսրայելի շահերին, սևաց-

[1] Պարսկերեն՝ չոգան, հայերեն՝ ճոկան, ձիագնդակ, միջազգային եզրույթը՝ պոլո (polo):

[2] «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 2013 թ. դեկտեմբերի 3:

[3] Նույն տեղում:

[4] Այն հիմնադրել է Իսրայելի կապի ու հաղորդակցության միջոցների նախկին նախարար Այուբ Կարան (Ayoob Kara) (1999-2021 թթ.):

[5] https://azenglishnews.com/%D9%86%D9%88%DB%8C%D8%B3%D9%86%D8%AF%D9%87-%D8%B1%D9%88%D8%B2%D9%86%D8%A7%D9%85%D9%87-%D8%A7%D8%B3%D8%B1%D8%A7%D8%A6%DB%8C%D9%84-%D9%87%D8%A7%DB%8C%D9%88%D9%85-%D9%85%D8%A7-%D8%A8%D8%A7%DB%8C%D8%AF

նելով իրանցիներին ու հայերին, գրում է.«Այժմ, երբ Իրանում տեղի են ունենում վարչակարգի փոփոխությանն ուղղված հակակառավարական ցույցեր, պատեհ առիթ է ստեղծվել ներկայիս Իրանի մաս կազմող «Հարավային Ադրբեջանը» կրկին «Հյուսիսային Ադրբեջանին» միացնելու համար, ուստի հույժ կարևոր է, որ մենք՝ իսրայելացիներս, ջանք չխնայենք այդ ուղղությամբ, ինչը կհանգեցնի Միջին Արևելքում կայունության ու խաղաղության հաստատմանը»: Աբրահամը, որը հազիվ թե տեղյակ չլինի Ֆեյք Ադրբեջանի մեկդարյա պատմությանը, բառացիորեն հենվելով այդ շինծու երկրի հորինված պատմության դասագրքի վրա, շեշտում է, թե պատմության ընթացքում, Սասանյան կայսրության ժամանակներից՝ 3-րդ դարից մինչև ռուս-իրանական 1804-13 թթ. և 1826-28 թթ. պատերազմները, երբ ռուս ու իրանցի գաղութարարները որոշեցին «կիսել Ադրբեջանը», այն եղել է «միասնական, մեկ ազգով»: Ապա, հղում անելով 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ հոդվածին, նշում է, թե 40-50 հազար հայեր Իրանից տեղափոխվեցին «Ադրբեջանի» (գոյություն չունեցող երկրի –Է. Բ.) Ղարաբաղի շրջանը, այնուհետև 90 հազար էլ՝ կրկին Իրանից, Թուրքիայից և այլ վայրերից: Աբրահամը շարունակում է, թե այսպիսով Ադրբեջանի տարածքային ամբողջականության նկատմամբ հավակնություններ ունենալու պայմաններ ստեղծվեցին հայերի համար:

Ռաշել Աբրահամը այս հերյուրանքները մոգոնում է այն դեպքում, երբ պայմանագրի հիշյալ հոդվածում «հայ» բառը բացարձակապես գոյություն չունի, իսկ «Ադրբեջան» բառն էլ ընդամենը մեկ անգամ է կիրառվել՝ նշելու համար Իրանի այդ անունով երկրամասը, որտեղ իշխում էր թագաժառանգ, ռուս-իրանական երկու պատերազմներում գլխավոր հրամանատար Աբբաս Միրզան: Հենց նա է ստորագրել այդ պայմանագիրը, երբ ռուսները գրավել էին թագաժառանգի նստավայր Թավրիզը, ինչով էլ պայմանավորված է երկրամասի անվան հիշատակումը: Աբրահամն անդրադառնում է նաև իր «աչքով տեսածին», թե Շուշիում ինչպես են հայերը ադրբեջանական մզկիթն իրանական դարձրել, թե ինչպես են շենքերը փլատակի վերածել ու շինանյութը վաճառել իրանցիներին: Նա, հղում կատարելով ֆեյքադրբեջանցի գործիչ Թառլան Ահմեդովին, նշում է, թե Իրանը «գրավյալ տարածքներում» աջակցում էր հայերին, պատերազմի ընթացքում էլ ռուսական զենքն այդ երկրի տարածքով էր ՀՀ տեղափոխվում, և այլն:

Մյուս կողմից, եթե Թեհրանը լավագույն դեպքում պարզապես լռել է բարեկամ ՀՀ-ի հասցեին հենց Իրանում հնչեցված Բաքվի հերյուրանքների տեղատարափի ժամանակ, ապա «եղբայրական», «Մեկ հոգի՝ երկու մարմնում» երկրին Իրանը, հակառակ իր ռազմավարական, ազգային անվտանգության շահերին, ոչ միայն հսկայական նյութական աջակցություն է ցուցաբերել, այլև մշտապես աջակցել է նաև միջազգային տարբեր ատյաններում: Թեհրանը կարևորել է նաև շիականության գործոնը, որը ոչ միայն թույլ է Բաքվում, այլև իշխանությունները ջանք չեն խնայում, որ այն ազդեցիկ գործոն չդառնա, անգամ այդ նպատակով թույլ են տալիս բնակչության սուննիացումը, ինչի ուղղությամբ աշխույժ գործունեություն է ծավալում Անկարան: Այլ կերպ ասած՝ հենց Բաքու-Թել Ավիվ ռազմավարական փոխհարաբերությունները պետք է օրինակ ծառայեն հայ-իրանական փոխհարաբերությունների համար:

ՀՀ և ԻԻՀ միջև բոլոր ոլորտներում համագործակցության ընդլայնումն ու զարգացումն այսօր հրամայական են, որպեսզի կարողանան համատեղ ուժերով դիմակայել Թուրքիա-Ֆեյք Ադրբեջան զույգին ու դրանց դաշնակիցների սպառնալիքներին, ինչը գոյաբանական անհրաժեշտություն է երկու պետությունների համար էլ: Ֆեյք Ադրբեջանը ոչ միայն ՀՀ ու ԻԻՀ նկատմամբ տարածքային հավակնություններով է լուրջ սպառնալիք, այլև ազգային ինքնություն ստեղծելու շրջանակներում ջանք ու եռանդ չի խնայում հարևան երկրների,– առաջին հերթին՝ Իրանի ու Հայաստանի,– մշակութային ժառանգությունները յուրացնելու կամ վերացնելու և պատմական փաստերը խեղաթյուրելու շահամիտումով՝ Թուրքիայի աջակցությամբ: Հետևաբար անհրաժեշտ է նաև պատմամշակութային ոլորտում սերտացնել հայ-իրանական փոխհարաբերությունները: Սրան անդրադառնանք երկու օրինակով:

2022 թ. մայիսի 10-20-ին տեղի ունեցավ Գրքի

թեհրանյան ամենամյա միջազգային 33-րդ ցուցահանդեսը, որի մշտական եռանդուն մասնակիցներից է Ֆեյք Ադրբեջանը: Վերջինիս համար նման միջոցառումները քարոզչության ամբիոն են եղել մշտապես: Մինչև 44-օրյա պատերազմը քարոզչության առանցքային թեմաները եղել են երկրի 20 տոկոսի հայկական «բռնազավթումն» ու Խոջալուի «ցեղասպանությունը», ինչն Իրանում արել է անարգել: Այժմ Բաքուն հանդես է գալիս «հաղթողի» դիրքերից, ըստ երևույթին՝ անգամ իրանցիների հանդեպ: Եվ ահա, հիշյալ ցուցահանդեսին (որին մասնակցում էր ավելի քան 30 երկիր) «եղբայրական» Ադրբեջանի տաղավարն ամբողջությամբ ձևավորված էր Նիզամիի ադրբեջաներեն թարգմանված տարբեր ստեղծագործություններով: Տաղավարի պատասխանատու Աքիֆ Մարիֆլին Իրանի խոշորագույն ISNA լրատվական գործակալության թղթակցին տված հարցազրույցում նշել է, թե Ադրբեջանում իրանական գրականությունը ճանաչված և սիրված է, ինչպեսև Իրանում են սիրով ընթերցում «ադրբեջանցի» մեծ բանաստեղծներ Նիզամիին ու Ֆիզուլիին:

Այստեղ փակագիծ բացելով՝ նշենք, որ Մոլլա Մոհամեդ բին Սոլեյմանը (1483-1556 թթ.), որ հայտնի է «Ֆիզուլի» (արաբերեն «ֆուդուլի»՝ քիթն ամեն տեղ խոթող, հետաքրքրասեր) գրական անվամբ, եռալեզու բանաստեղծ է և գլխավորապես ստեղծագործել է պարսկերեն ու արաբերեն, ինչպեսև իր մայրենիով՝ ույղուրական այն ցեղի լեզվով, որը տարածված է նաև Իրանի Ադրբեջան երկրամասում ու Հարավային Կովկասի Ֆեյք Ադրբեջանում: Նա ծնվել է այսօրվա Իրաքի Հիլլա քաղաքում, ապրել և ստեղծագործել Բաղդադում: Նրա ցեղակիցներն Իրաքում, Սիրիայում ու Լիբանանում կոչվում են թուրքմեններ: Ամենայն հավանականությամբ, նա երազում էլ չէր կարող պատկերացնել, որ շուրջ կես հազարամյակ հետո կդառնա ինչ-որ կեղծ պետության ... սիրելի բանաստեղծ: Փակենք փակագիծը:

ISNA-ի թղթակիցը առարկելով նշում է, որ Նիզամին իրանցի բանաստեղծ է, և ընդգծում. «Սատանի մայլում քյանդրբազությունն» անիմաստ է: Բայց Աքիֆը պնդում է, թե Նիզամին ծնվել, մեծացել է «Գյանջայում», ուրեմն ադրբեջանցի է, մանավանդ որ նա հայտնի է Նիզամի Գյանջավի՝ գանձակեցի անունով[6]: Իսկ ինչ վերաբերում է Նիզամիի՝ բացառապես պարսկերեն ստեղծագործելուն, Աքիֆը պատճառաբանում է, թե միջնադարում Հարավային Կովկասի պաշտոնական լեզուն եղել է պարսկերենը, բոլոր գրագրություններն այդ լեզվով են արվել, ու ստեղծվել է յուրօրինակ բանաստեղծական ոճ, որով ստեղծագործել է նաև Խաքանի Շիրվանին (1120-1190 թթ.): ISNA-ի թղթակիցը, քննադատելով մշակութային յուրացումների՝ Բաքվի քաղաքականությունը, շեշտում է, որ եթե Մարիֆլին ու Բաքվի իշխանավորները մի փոքր ուշադիր ընթերցեն Նիզամիի ստեղծագործությունները, ապա կզգան, որ ոչ միայն լեզուն է պարսկերեն, այլև բովանդակությունն է իրանական.

Աշխարհը մի մարմին է, Իրանը սիրտն է նրա:
Սա ասողը չի ամաչում այդ ասելու համար,
Քանզի Իրանն է սիրտը մոլորակի:
Որ բարձր է սիրտը հոգուց՝ ոչ ոք չի առարկի:

Սակայն եթե ISNA-ի թղթակիցը ծանոթ լիներ հայ գրականությանն ու պատմությանը, ապա, ի պատասխան այդ անհիմն պնդման, կարող էր թվարկել ավելի հզոր փաստեր, քանզի բացառված չէ, որ Բաքուն հակադարձեր, թե այդ տողերը պարզապես վերագրվել են Նիզամիին: Օրինակ, կարելի էր մատնանշել Նիզամիի ու Խաքանիի ժամանակակից բազմաթիվ հայ մատենագիրների, բանաստեղծների ու պատմաբանների, որոնք ստեղծագործել են մայրենի լեզվով և հաճախ ապրել են հայկական այն տարածքներում, որն այսօր գրավել է Ֆեյք Ադրբեջանը: Այսպես, օրինակ, հայ մտածող-գիտնական, օրենսդիր, առակագիր, հոգևորական, մանկավարժ ու հասարակական գործիչ Մխիթար Գոշը (1130-1213) ծնվել է Արցախ աշխարհի տարածքում: Կիրակոս Գանձակեցին (1200-1271, Գանձակ) հայ պատմիչ և եկեղեցական գործիչ է, «Պատմություն հայոց» գրքի հեղինակ: Ըստ որոշ աղբյուրների՝ ծագումով եղել է «աղվանցի»: Բանաստեղծ, մշակութային գործիչ Խաչատուր Կե-

[6] Գանձակ (պարսկերենով՝ Գյանջե, գյանջ՝ գանձ), հայերենում էլ գանձակ, փոքր գանձ իմաստն ունի: Հայաստանի այդ բնակավայրը այսօր Ֆեյք Ադրբեջանի մաս է կազմում: Գանձը նաև հայոց միջնադարյան պոեզիայի ժանր է:

չառեցին (մոտ 1260-1331, Կեչառիս, Ծաղկաձոր) եղել է Կեչառույքի միաբանության վանահայր, հեղինակ է քնարական բանաստեղծությունների, նշանավոր պատմաքաղաքական «Վասն աւերման Տանս արեւելեան» ողբի, հոգևոր մի շարք երգերի, ինչպես նաև՝ «Վասն գալստեան մոգուցն» պարականոն զրույցի: Այլ կերպ ասած՝ Հայաստանում լավ ծանոթ են Իրանի պատմությանն ու գրականությանը, իսկ կողոպտիչների դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է, որ իրանցիները ևս ուշադրության արժանացնեն մեր պատմությունը, գրականությունն ու մշակույթը:

Հաջորդ օրինակը Ռաշել Աբրահամի վերոնշյալ հոդվածն է, որը, բնականաբար, չէր կարող վրիպել իրանցիների աչքից: Դրան անդրադարձել է http://azariha.org/-ը, 2022 թ. հունիսի 8-ին, «Բաքվի հերյուրանքների կրկնությունը, այս անգամ իսրայելյան օրաթերթի բերանով»[7] վերտառությամբ խմբագրականով, որտեղ շեշտվել է, որ Իրանի և Հայաստանի նկատմամբ ատելության տարածումը, պատմության խեղաթյուրումը, Իրանում անջատողականություն հրահրելը Բաքվի համաթյուրքական խոսույթի գլխավոր գծերն են, իսկ այժմ կրկնվում են նաև իսրայելացիների շուրթերով: Խմբագրականի հեղինակը նշել է, որ համաթյուրքականների բանալի բառերն (keyword) են շինծու «Հարավային Ադրբեջանն» ու «Հյուսիսային Ադրբեջանը»: Սակայն պատմական բացարձակ ճշմարտություն է այն, որ Արաքսի հարավային առափնյա հատվածն է կոչվել Ադրբեջան, իսկ այն, ինչ «Հյուսիսային Ադրբեջան» են անվանում, պատմական Առանը, Շիրվանն ու Բաղքուբենն[8] է և մինչև 1918 թ. երբեք Ադրբեջան չի կոչվել: Ապա, անդրադառնալով Թուրքմենչայի պայմանագրին, հավելում է, որ եթե Ռաշել Աբրահամը բարեհաճեր ու ընթերցեր Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության կայքում հիշյալ պայմանագրի անգլերեն տարբերակի 15-րդ հոդվածը, կտեսներ, որ Արաքսի հյուսիսային ափում «Ադրբեջան» անունով որևէ տարածք գոյություն չի ունեցել, որտեղ «մի բան էլ» 150 հազար «տեղափոխված» հայ վերաբնակեցվեր: Խմբագրականը դա պատմական փաստերի խեղաթյուրում ու հերյուրանք է համարում, ինչն անվիճելի ճշմարտություն է: Բայց պետք է հատկապես նշեր՝ պատմական փաստերն ապացուցում են, որ հայերը Ֆեյք Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներում Թուրքմենչայի պայմանագրի կնքումից դարեր առաջ են ապրել ու ոչ միայն ճարտարապետական հուշարձաններ են թողել, այլև՝ գիր ու գրականություն, և, որպես խոսուն վկայություններ, պետք է մատնանշեր թեկուզև վերոհիշյալ պատմաբանների ու ստեղծագործողների անունները: Ուստի, հաշվի առնելով վերոհիշյալը ու նման շատ այլ դեպքեր, ակնհայտ է դառնում հայ և իրանցի պատմաբանների ու վերլուծաբանների համագործակցության անհրաժեշտությունը՝ պատմության խեղաթյուրումը և ՀՀ ու ԻԻՀ դեմ հերյուրանքների տարածումն արգելակելու նպատակով:

Հնդեվրոպական լեզուներն առաջացել են մի լեզվից, որով խոսել են ոչ մեծ տարածքում, մոտավորապես Վան և Ուրմիա լճերի միջև: Դա պարսկական Հայաստանն է:

Վյաչեսլավ Վս. Իվանով

[7] http://azariha.org/10027/%D8%AA%DA%A9%D8%B1%D8%A7%D8%B1-%D8%AC%D8%B9%D9%84%DB%8C%D8%A7%D8%AA-%D8%B6%D8%AF%D8%A7%DB%8C%D8%B1%D8%A7%D9%86%DB%8C%D9%90-%D8%A8%D8%A7%DA%A9%D9%88-%D8%A7%D8%B2-%D8%B2%D8%A8%D8%A7%D9%86-%D8%B1%D9%88/

[8] Բաղքուբենը Բաքուն է: Ըստ պատմական որոշ աղբյուրների, այն կառուցել է Սասանյան հարստության Խոսրով Անուշիրվան արքան (501-579 թթ.): Բաղքուբե (քամահար) է կոչվել, քանի որ ուժեղ քամիները ավազով հարվածում են շինություններին: Իսլամական աղբյուրներում տարբեր ձևերով է գրվել, այդ թվում՝ Բաղքումբ: Սեֆյան հարստության ժամանակաշրջանում (1501-1722 թթ.) ու դրանից հետո, իրանական աղբյուրներում այդ անունը պահպանվել է մինչև 20-րդ դարասկիզբ: Իսկ պատմաբան Ահմադ Քեսրավին (1890-1946 թթ.) շեշտում է, որ այն կոչվել է Բագավան: Դա ածանցավոր բառ է, որ կազմվել է բագա (Ավեստայում) կամ բող՝ «աստված» բառից և վայր ցույց տվող «վան» վերջածանցից:



ԶՈՀՐԱԲ ԸՌՔՈՅԱՆ

Խմբագիր, լրագրող, ազատամարտիկ

ԱՄՐՈՑԸ ԺԱՅՌԻ ՎՐԱ

Սա Հայաստան է, և վերջ...

Լեոնիդ Ազգալդյան

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հարավային տարածքը՝ Հակարի գետի միջին ու ներքին ավազանները, որոնց մի մասը ժամանակին ընկած էր Մեծ Հայքի Սյունիք նահանգի, մյուս մասը՝ Արցախ նահանգի մեջ, ազատագրվել էին 1993 թ. ամռան և աշնան ընթացքում, վերահայացել 1994-2020 թթ.: Հակարիի աջ ու ահյակ ափերին պահպանվել են հայոց հազարամյա պատմամշակութային բազում հուշարձաններ՝ վանքեր ու եկեղեցիներ, մատուռներ, հանգստարաններ, դամբարանադաշտեր, կամուրջներ: Առավել շատ են ամրոցատեղիները: 1996 թ.-ից բնակվելով Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորում ու աշխատելով Քաշաթաղի շրջանի վարչակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունում, այնուհետև՝ որպես շրջանային «Մերան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր, շրջել եմ ամբողջ տարածքով, տեսել, ուսումնասիրել, լուսանկարել բազում պատմամշակութային հուշարձաններ, լուսաբանել դրանք, կազմակերպել լուսանկարների ցուցահանդես, հրապարակել լուսանկարների եռալեզու ալբոմ:

Բազում հուշարձաններից է գիտնականների՝ Կառնակաշ-Ղալալու-Զինգանակապ կոչած ամրոցը, որը գտնվում է ծովի մակարդակից 875 մ բարձրությամբ քարաժայռին: Ամրոցից մնացել են ավերված պարիսպներ, երկու ջրավազան, մի շինություն և այլ կառույցների հետքեր ու հիմքեր: Գտնվում է ԱՀ Քաշաթաղի շրջանում՝ Հակարի գետի ավազանի միջին հատվածում՝ ներկայիս Հակարի գյուղից մոտ 4 կմ արևելք: Մակար Բարխուդարյանը «Զինգյանակապ», իսկ Ղ. Ալիշանը «Զանքանակեան» անուններով են հիշատակում Հակարիի ձախակողմյան փոքրիկ վտակը, որն սկիզբ է առնում Դիզափայտի արևմտյան կողմից և, ով գիտե, քանի՞ դար ու հազարամյակ, թե միլիոնավոր տարիներ հոսելով անտառապատ ու ժայռակերտ ձորերով, հաղթել է նաև հսկա ժայռին՝ այն բաժանելով երկու մասի, ու այժմ հոսում է նեղ կիրճով: Գետակի ձախ կողմում է ամրոցը պահող ժայռը: Շրջկենտրոն Բերձորից մոտ 35 կմ հարավ է ընկած Հակարին, որի տարածքում պահպանվել են պատմական բազում հուշարձաններ՝ նախաքրիստոնեական դամբարաններ, բնակատեղիներ, կիկլոպյան երկու ամրոցատե-

ղիներ, ավերակ կամուրջ՝ Հակարի գետի վրա, Քրոնք (Քրօնի) վանքը՝ ժայռափոր եկեղեցի, և այլն: Արցախի Գտչավանքի հյուսիսային պատի վրա 1246 թ. Վրթանես եպիսկոպոսի թողած 14 տողանոց արձանագրության 8-րդ տողում գրված է. «ՀԱԿԱՐԻ ԻԻՐ ԿԵՐՈՎՆ»: Սակայն Հակարի բնակավայրի մասին առաջին անգամ հիշատակվում է Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացու – Հ. Ը.) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում՝ կապված 829-830 թթ. տեղի ունեցած ապստամբության, ավելի ճիշտ՝ դավաճանության հետ, երբ տվյալ տարածքը դեռևս գտնվում էր արաբական տիրապետության տակ: «...Եւ ի նմին ամի դաւաճանողքն ի սէր խաղաղութեան, որոց անուանք Դաւոն եւ Շապուհ ճանաչիւր, սրով սպանին զՍտեփանոս՝ զկոչեցեալն Աբլ Ասադ, որ էած զբաբան եւ եհար զԲաղականեցիսն, որ ի սուր նիզակաց կոտորեցին զԲերձոր գաւառ եւ զաւանսն զՈւռեաց՝ զԿառնակաշ, զՀակարի եւ զՏափատ»: Հայր Ղևոնդ Ալիշանն իր «Արցախ» աշխատությունում, ներկայացնելով Բերդաձոր-Բերձոր գավառը, նույնպես անդրադառնում է այս դրվագին. «...Ըստ Խորենացու, այն (այսինքն՝ Բերդաձոր-Բերդձոր-Բերձոր գավառը –Հ. Ը.) պետք է լինի Վայկունիքի (Արցախի մեկ այլ գավառ –Հ. Ը.) մոտ, նրան կից, որը Աղվանքի աշխարհագրության մեջ ներկայացվում է ավելի երկար ձևով:

Նույնը հաստատում է նաև Մովսես Կաղանկատվացին՝ այն դասելով բաղանիկեցիների նվաճած գավառների շարքին (Վերին Վայկունիքը, Բերձորը, Սիսականը և այլն [Մովսես Կաղանկատվացի, «Աղուանից աշխարհի պատմութիւն», լույս ընծայեց Մկրտիչ Էմինը, Մոսկվա, 1860, էջ 327]): Այնուհետև Ալիշանը շարունակում է. «Սրանք գավառների նվաճումից առաջ՝ 830-ին, ապստամբելով ...սրերով ու նիզակներով կոտորեցին Բերդձոր գավառի ավանները՝ Ուռեցը, Կառնակաշը, Հակարին, Տափարը»: Տարածքի պատմությանը լավ ծանոթ, Քաշաթաղի շրջանի վարչակազմի առաջին ղեկավար Ալեքսան Հակոբյանը «Պատմաաշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ «Արցախ եւ Ուտիք» գրքում» (Երևան, 2009) նշում է՝ Կառնակաշն ու Տափատը բերդագիւղեր են:

Այս ամրոցի տարածքում եղել եմ մի քանի անգամ և միշտ նորության եմ հանդիպել: Առաջին անգամ այցելեցինք՝ այժմ ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեոնիկ Հովհաննիսյանի և նույն նախարարության աշխատակից, հուշարձանագետ, ԱՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սլավա Սարգսյանի հետ: 2020 թ. մարտի 7-ին հնագետ Գագիկ Սարգսյանի, Հակարիի դպրոցի երիտասարդ ուսուցիչներ պատմաբան Հայկ Չոբանյանի և Արման Ղազարյանի հետ նորից շրջեցինք Զինգյանակապ-Զանքանակեան գետակի՝ սոսիներով և այլ հսկա ու գաճաճ ծառերով, թփուտներով պատված ափով և տասնյակ տեղեր անցնելով ջրով, հասանք մի տափարակ, որտեղ կան հսկա բներով ընկուզենիներ: Տեղ-տեղ գետափնյա ժայռերը մամռապատ են՝ նման Շուշիի տակի Հունոտի կիրճի հայտնի «զոնտիկներ»-ին: Գետակը երեք կողմից պտտվում է ամրոցը պահող ժայռի մոտով: Մոտ 200մ երկարությամբ ժայռաբլրի արևմտյան կողմում է ամրոցի հիմնական պարսպապատը, որից ներս, հնարավոր է, շինություններ են եղել, որոնց հիմքերը ծածկվել են դարերի փոշով: Պարսպի մի հատվածը ժամանակի ընթացքում քանդվել է, հնարավոր է՝ երկրաշարժից: Քարերը թափված են բլրի ստորոտում՝ գետակի ափին:

Ամրոցն ունեցել է հիմնական մուտք, որն անցել է գետակի ափով, բարձրացել պարսպից ներս, շարունակվել հյուսիս: Այս մասում ժայռը ճեղք ունի, որտեղով և բարձրացել է ճանապարհը: Բավական նեղ, սակայն հարմար ճանապարհ է եղել, որի վրա երկու ջրամբար են կառուցել: Այսպիսով լուծել են երկու հարց. զինվորները հսկել են թե՛ ջրամբարները և թե՛ ճանապարհը՝ 50-52 մ բարձրությամբ ճեղքում: Կլոր հատակագծով կիսաժայռափոր ջրամբարներից ներքևինի չափերն են 5 x 4,8 մ, իսկ նրանից 8-9մ բարձր տեղակայվածինը՝ 3,8 x 3,5 մ: Վերևինն ունեցել է ծածկ, որը նաև աշտարակ-դիտակետի դեր է խաղացել: Այս հատվածով հեշտ չէ բարձրանալ նույնիսկ այժմ, իսկ պատերազմի ժամանակ մեծ ուժեր էին պետք՝ գրավելու ամրոցի միջնաբերդը: Երկարավուն ժայռը երկու կողմից հիմքից սկսում է նեղանալ և վերևում շատ նեղ է. որոշ մասերում 1-2մ տարածք է ընդամենը: Հարավարևելյան կողմում են տեղակայված հիմնա-

կան շինությունները: Հնարավոր է՝ միջնաբերդն է, որի արևմտյան կողմում մի շինության պատ է պահպանվել: Սրա մոտակայքում փոսորակներ են՝ շինությունների տեղեր: Արևելյան կողմում կա պատ, որի ներքին քարերը հանվել են երևի թուրք գանձագողերի կողմից (տարիներ առաջ, երբ առաջին անգամ բարձրացանք ժայռը, պատի տակ լինգ էր ընկած): Արցախյան գոյամարտի տարիներին թուրքերն օգտագործել են ամրոցի բարձունքը. նշված շինությունների փոսորակները ծառայել են որպես խրամատ: Երևի այդ ժամանակ էլ քանդել են պարսպապատը: Բարձունքը չորս կողմից հսկում է տարածքը: 1993 թ. ամռանը ճակատային գիծ էր այս կողմերում, և այդ պատճառով տարածքում ականապատ տեղեր կան: Միջնաբերդի արևմտյան կողմում ժայռի թեքությունը հնարավորություն է տալիս տեղաշարժվելու, իհարկե՝ շատ զգույշ: Որոշ հատվածներ մշակված են որպես ճանապարհ:

Նշված շինությունից մոտ 35-40 մ հյուսիս-արևելք, ժայռի պռնկին՝ համեմատաբար հարթ մի փոքր տափարակի վրա եղել է հիմնական աշտարակ-դիտակետը, որից պահպանվել է կլորավուն մակերեսով հիմքը: Ըստ վերոնշյալ ամրոցագետ Սլավա Սարգսյանի՝ տեղում իրականացված նախնական ուսումնասիրությունների (դատելով պատահականորեն ի հայտ եկած խեցեղենի և այլ նյութերի մնացորդներից), ներկայիս համակառույցը վերաբերում է XI-XIV դարերին: Ամրոցի արևմտյան ստորոտում՝ գետի ափին եղել է մի բնակավայր, որի տների հետքերը պահպանվել են: Իսկ բավական ընդարձակ հարթությունը, որը բոլոր կողմերից փակված է բլուրներով, երեք կողմից՝ գետակով, երևի այգիների տեղ է:

Ամրոցն ունեցել է նաև գաղտնուղի, որն իջել է գետի վրա:

Ժայռի հյուսիսային կողմում կա մի մեծ քարանձավ, որի մուտքն սկսվում է գետափից: Այս մասում ամրոցը պահող և նրա հյուսիսում գտնվող բլուրների արանքում ընդամենը 6-7մ լայնություն է, որտեղ գետն է անցնում: Ժամանակին այս հատվածում երևի դարպասներ են եղել, որոնք փակել են նաև քարանձավի մուտքը, որի դիմացի պատի տակ ցածր տարածք կա: Այն երկրորդ ու վեր բարձրացող երրորդ քարանձավի մուտքն է: Մեզ ուղեկցող երիտասարդները և մի պատանի, որն այս կողմում անասուններ էր պահում, ասացին՝ քարանձավը շարունակվում է դեպի վեր: Սակայն շատ չեն կարող բարձրանալ. շնչահեղձ են լինում: Այս անգամ էլ սողալով մտան ներս, քիչ անց ետ եկան: Միգուցե ժամանակին այն եղել է գաղտնուղի կամ թաքստարան: Նույն քարանձավի ձախ կողմից նեղ արահետ է բարձրանում վեր՝ բավական թեք լանջով, և մոտենում հիմնական ճանապարհին, որտեղ ջրամբարներն են: Որոշ տեղերում ամրոցապահներն աստիճաններ են փորել քարերի վրա: Այժմ փշատերև թփերը ծածկել են աստիճանների մի հատվածը, և բարձրանալ հնարավոր չէ: Այս հատվածով են ջուրն ամբարել: Հնարավոր է՝ օգտագործել են նաև ձնհալի ու անձրևի ջրերը: Ջրամբարների ժայռե պատերի մեջ փոքր աղբյուրների հետքեր կան: Ամրոցը պահող բլրի հարավային կողմում նմանատիպ մեկ այլ ժայռեղեն բլուր կա, որի ստորոտում նույնպես բնակատեղի է եղել: Այս հատվածում է գտնվում նաև Ամուտեղ սրբավայրը՝ թառած ժայռեղեն մեկ այլ բլրի վրա: Ըստ ավանդության՝ Ամուտեղի եկեղեցին կառուցվել է Վարդան Մամիկոնյանի արյամբ ցողված քարի տեղում: Սրբավայր լինելուց բացի՝ Ամուտեղը եղել է դիտակետ և կապ է պահպանել Դիզափայտի վրա գտնվող Կատարո վանքի հետ (հայոց այդ սրբավայրերը ուղիղ գծով մի քանի կիլոմետր հեռավորության վրա են):

Ներկայիս Հակարի գյուղից հյուսիս-արևելք մեկ այլ բնակավայր է գոյություն ունեցել, որը, հնարավոր է, պատմական Հակարին է:

Արցախյան վերջին՝ 44-օրյա պատերազմից հետո Հակարի գյուղը և նշված ամրոցն ու սրբատեղիները վերստին մնացին գերության մեջ: Բնական է՝ թշնամին ավերելու է հայոց եկեղեցիները՝ հնարավորինս սրբելու հայոց հետքն այդ տարածքներից: Հնարավոր է՝ չավերի, բայց նենգափոխի՝ որպես այլ դավանանքի սրբավայր: Սակայն կարևորը հայոց երկիրն է՝ հայրենի Արցախը, որը պետք է ազատագրենք: Սրբավայրերի տեղերը գիտենք. կվերականգնենք, նորը կկառուցենք:

(հաջորդ էջի լուսանկարները հեղինակինն են)



Ամրոցի ավերակները

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն
Տորոնտո (Կանադա)

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՕՏԱՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ա. Վասպուրականի թագավորությունը (908-1021)

Ափշինը մի ստվար զորախմբով ներխուժում է Վասպուրական և գրավում իշխանանիստ Վանը: Թշնամուն վասպուրականցիների դիմադրությունը չի դադարում մինչև Ափշինի մահը 901 թ.: Գագիկ Արծրունին Ութմանիկներից խլեց Ամյուկ անառիկ ամրոցը: Ութմանիկներին օգնության եկան զանազան ցեղեր. «Այսպես պարսկական խուժանն այլևայլ ցեղերից ու քաղաքներից՝ Մարաստանից, Պարսկաստանից, Ելիմացիներից, Խուժաստանից, Կրմանից[9], Մուկանից[10], Թուրքաստանից[11], Խորասանից»[12]: Ուժերը կենտրոնացան Սալմաստում, թշնանիները հարձակման անցան, սակայն Ճուաշ (կամ Ճվաշ) գավառում նրանց վճռական հակահարված տվեց Գագիկ Արծրունին՝ զորագլուխ կարգված քաջակորով Թադեոս Ակեացու հետ միասին[13]: 905 թ. Գուրգեն Արծրունին Վասպուրականին է միացնում Պարսկահայքի Տամբեր և Ըռնա գավառները[14]:

Բ. Անձևացյաց իշխանությունը

Անձևացիքը պատկանել է Անձևացիների նախարարական տոհմին: 4-րդ դարից եղել է առանձին եպիսկոպոսական թեմ: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում (8-9 դդ.) իր դժվարամատույց դիրքի շնորհիվ Անձևացիքը պահպանել է ինքնուրույնությունը: 9-րդ դարի կեսից մտել է Արծրունիների իշխանության, ապա թագավորության կազմի

[9] Այժմյան Քերման (کرمان) նահանգը Իրանում:
[10] Մուղանի դաշտը՝ Կուրի և Արաքսի գետախառնուրդից հարավ-արևելք:
[11] Թուրքաստան ասելով՝ հին մատենագիրները հասկանում էին միջինասիական երկրները:
[12] Թովմա Արծրունի և Անանուն, Երևան, 1978, էջ 263:
[13] Նույն տեղում, էջ 264:
[14] Նույն տեղում:

մեջ: Նշանավոր էին Արձևացիքի Կանգավար և Նորաբերդ ամրոցները, Ալաման, Լեկ, Անձավկաց և Աղզի գյուղերը, նախաքրիստոնեական սրբավայր Դարբնացքարը կամ Ագռավացքարը, Հոգեաց վանքը: Արձևացիքի տարածքը հայաբնակ է մնացել մինչև 1915-ի Մեծ Եղեռնը:

906 թ. աբխազական արշավանքին Անձևացյաց իշխանը մասնակցում էր առանձին զորախմբով[15]:

Գ. Մոկաց իշխանությունը

Մոկքը կամ Մոկաց աշխարհը Մեծ Հայքի նահանգներից մեկն էր: Ըստ «Աշխարհացույցի»՝ ունեցել է 8 գավառ: Հյուսիսից և արևելքից սահմանակից էր Վասպուրականին, հարավից՝ Կորճայքին, արևմուտքից՝ Աղձնիքին, հյուսիս-արևմուտքից՝ Տուրուբերանին:

8-րդ դարի սկզբին Մոկքում հաստատվել է Բագրատունիների մի ճյուղը: 9-րդ դարի երկրորդ կեսին ենթարկվել է Արծրունի իշխաններին, 908-1021-ին մտել է Վասպուրականի թագավորության մեջ: Վերջինիս անկումից հետո Մոկքը թեև անցել է Բյուզանդիային (Վասպուրականի կատապանության կազմում), սակայն տեղի իշխանները պահպանել են ինքնուրույնությունը՝ ճանաչելով Արծրունիների շառավիղ Խեդենեկյանների գերակայությունը: 14-րդ դարից Մոկքի տարածք են թափանցել քրդական ցեղեր: 16-րդ դ. առաջին կեսին շրջանը նվաճել է Օսմանյան Պետությունը, որի կազմում այն մտել է Վանի նահանգի մեջ:

Դ. Տարոնի Բագրատունիների իշխանությունը (826-967)

Տարոնը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից էր, Արածանի գետի միջին հոսանքի և նրա վտակ Մեղրագետի ավազանում:

Տարոնի իշխանությունը հիմնել է Հայոց իշխան Բագրատ Բագրատունին 826 թ.: Նրա օրոք (826-851) Տարոնի իշխանությունն ընդգրկել է Տարոնը, Սասունը, Խույթը, Հաշտյանքը, Խորձյանը, Մանանաղին, Արշամունիքի հարավային հատվածը, Բզնունիքը: Տարոնի Բագրատունի իշխանները պայքարել են արաբական խալիֆայության և ամիրայությունների և բյուզանդական նվաճողական քաղաքականության դեմ:

Ե. Արցախի իշխանությունը (5-10-րդ դդ.)

Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները միասնական անվանումը միջնադարում եղել է «Արեւելից կողմանք Հայոց»: Հայաստանի արևելքում գտնվող Արցախ նահանգին հնուց ի վեր տիրում էր Առանշահիկ (Երանշահիկ) իշխանական տոհմը: Հայ Արշակունիների թագավորության վերացումից (428 թ.) հետո Առանշահիկները իրենց տոհմը հռչակել են թագավորություն: Առանշահիկներից Վաչագան Բ-ը 450-451-ին մասնակցել է Վարդանանց պատերազմին:

Արցախի Առանշահիկները հիմնել են թագավորություն, որի մեջ ընդգրկվել են նաև Ուտիքն ու անդրկուրյան Կամբեճան հայաբնակ գավառը: Առանշահիկների երկու ճյուղերը (խաչենցիներն ու դիզակցիները)՝ Սահլ Սմբատյանի և Եսայի Աբու Մուսեի գլխավորությամբ պայքարել են արաբ նվաճողների դեմ: Պատմիչները Սահլին ներկայացնում են որպես մի խիզախ ու անհնազանդ հայկազուն իշխանի, որը պայքարում էր օտարների բռնակալ տիրապետության դեմ: Նա մաքառել է նաև թյուրքազգի Բուղայի դեմ:

Զ. Աղվանից թագավորությունը

Բագրատունիների տերության մաս էր կազմում նաև Արևելից Աղվանից մեծ իշխանությունը, որը տարածվում էր Ծանարաց քորեպիսկոպոսությունից մինչև Ճիղբք և Կուր գետից մինչև Կովկասյան լեռների ջրբաժան[16]: Արշակունիների անկումից հետո կազմվում է Աղվանից մարզպետությունը, որի մեջ են մտնում Արցախ և Ուտիք նահանգները:

Է. Համամաշենի (Համշենի) իշխանությունը

Համամաշենի կամ Համշենի կիսանկախ իշխանությունը հայաբնակ գավառակ է Սև ծովի հարավ-արևելյան ափին, 8-րդ դարի վերջից

[15] Անանուն Զրուցագիր, առանց հրատարակման վայրի և թվականի նշումների, էջ 189:

[16] Արման Եղիազարյան, Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.), Երևան, 2011, էջ 176:

մինչև 20-րդ դարի սկիզբը: Արաբական հալածանքներից խուսափող Համամ և Շապուհ Ամատունի իշխանները 789-790-ին, Վասպուրականի Արտազի գավառից, մասամբ՝ Այրարատից շուրջ 12000 գաղթականներով տեղափոխվել և բնակություն են հաստատել բյուզանդական Խաղտիք (Խալդիա) բանակաթեմում: 15-րդ դարում հիշատակվում են Համշենի իշխաններ (պարոններ) Առաքելը, Դավիթ Ա-ը, Վարդը, Վեքեն, Դավիթ Բ-ը: Վերջինս 1489-ին պարտվել է օսմանական թուրքերին, որից հետո Համշենի հայկական իշխանությունը դադարել է գոյություն ունենալ:

Ը. Կարսի (Վանանդի) թագավորությունը (963-1065)

Բագրատունյաց թագավորության համար Կարսը առաջնակարգ ռազմավարական նշանակություն ուներ: Քաղաքի վրա իշխող՝ Կարսի հռչակավոր բերդը պաշտպանում էր Շիրակի մատույցները Բյուզանդական կայսրության ու արաբական խալիֆայության դրածոների հարձակումներից: Շիրակի Բագրատունիների տիրույթների սահմաններում Կարսը 9-10-րդ դարերում ամենախոշոր կենտրոններից էր, միաժամանակ, իբրև հայոց սպարապետի նստավայր, այնտեղ էր կենտրոնացված Բագրատունիների արքունի զորքը:

Երբ Աշոտ Գ-ը 961 թ. մայրաքաղաքը տեղափոխեց Անի, Կարսի կառավարիչ նշանակեց իր եղբայր Մուշեղ Բագրատունուն, որը 963 թ. իրեն հռչակեց Կարսի ու նրա գավառի թագավոր՝ «Թագավոր Կարուց» տիտղոսով (963-984): Աշոտ Գ-ը հարկադրված էր ճանաչել նրա թագավորությունը, բայց՝ ենթակա իշխանության կարգավիճակով: Այսպես ստեղծվեց մեկ դար գոյատևած Կարսի թագավորությունը:

Կարսի փոքրիկ թագավորության վիճակն անկայուն դարձավ Բյուզանդիայի ու վրաց Բագրատունիների միջև տեղի ունեցող արյունահեղ պատերազմների ժամանակ:

Թ. Տայքի կյուրապաղատությունը (962-1001)

Տայքի կյուրապաղատությունը կամ Տայք-Կղարջքի իշխանությունը 10-րդ դարում հիմնադրել են Մեծ Հայքի Տայք նահանգում և Գուգարք նահանգի Կղարջք գավառում 8-րդ դարի վերջին քառորդին հաստատված Բագրատունիները: Համագործակցելով Բագրատունիների մյուս ճյուղերի հետ՝ Տայք-Կղարջքի Բագրատունիները շրջակա ամիրայությունների տիրապետությունից ազատագրել են հայկական որոշ հողեր:

Ժ. Կյուրիկյանների (Լոռու կամ Տաշիր-Ձորագետի) թագավորությունը (966-1113)

Բագրատունյաց շրջանի Հայաստանում 10-րդ դարում առաջացավ Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը: Այն իր անունն ստացավ Բագրատունյաց տան Լոռու ճյուղի հիմնադիր Գուրգենի անունից, որը տեղական ձևով արտասանվում էր «Կյուրիկե»: Սակայն թագավորությունը կոչվեց Կյուրիկյան ավելի ուշ, սկսած 13-րդ դարից:

Կյուրիկյանների կենտրոնն եղել է Շամշուլդե[17] բերդաքաղաքը, 1065-ից՝ Լոռե ամրոցը: 10-11-րդ դարերում Կյուրիկյան թագավորության տարածքում կառուցված բազմաթիվ ամրությունները (Կայան, Լոռե, Մահկանաբերդ, Գագ ևն) ուժեղացրել են երկրի պաշտպանունակությունը, հսկել կարևոր առևտրական ճանապարհները:

Դավիթ Բագրատունի Անհողինը (996-1048) իր գահակալության առաջին իսկ տարիներից ընդարձակեց երկրի սահմանները հյուսիսային ուղղությամբ: Նա հաջողությամբ պայքարեց նաև վտանգավոր ախոյան՝ Գանձակի Շադդադյան ամիրայության դեմ: Բագրատունիների կենտրոնական թագավորության անկումից (1045 թ.) և Կարսի թագավորության անկումից (1065 թ.) հետո Կյուրիկյան թագավորությունը Բագրատունիների՝ իր գոյությունը պահպանած միակ իշխանությունն էր՝ թեկուզ սելջուկ սուլթանների գերակայությունը ճանաչելու (1064 թ.) գնով:

ԺԱ. Սյունիքի (Կապանի, Բաղաց) թագավորությունը

Սյունիքը կամ Սիսականը Մեծ Հայքի իններորդ նահանգն էր: Արաբական տիրապետության ներքո հայտնված Սյունիքը 8-րդ դարի սկզբին մտել է Արմինիա ոստիկանության Առաջին Ար-

[17] Հայ ժողովրդի պատմություն, 3-րդ հատոր, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1976, էջ 105:

մինիա երկրամասի կազմի մեջ: Արաբական տիրապետության շրջանում (8-9-րդ դդ.) Սյունիքի իշխանությունը կարողացել է պահպանել գոյությունը, նույնիսկ զգալիորեն ուժեղացել, զարգացել են ավատատիրական հարաբերությունները: Սյունյաց տոհմի սեպուհները, տիրելով այս կամ այն գավառին, դարձել են ժառանգատեր իշխաններ, կոչվել գահակալ, իսկ իրենց նկատմամբ քաղաքական իշխանությունը պահպանած նախարարը ստացել է «գահերեց» տիտղոսը:

826-827-ին խուրամյան զորամասերն ահավոր ավերածության են ենթարկել Բաղքն ու Գեղարքունիքը, կոտորել բնակչությանը: 831-832-ին Սյունիքի իշխանությունը մասնակցել է արաբ Հոլ ոստիկանի դեմ բռնկված ապստամբությանը, իսկ 835-ի գարնանը ենթարկվել է Բուղայի ասպատակություններին:

11-րդ դարի վերջին թագավորությունն զբաղեցնում էր Սյունիք նահանգի տարածքի ավելի քան 1/3-ը (շուրջ 5500 քառ. կմ), ուներ 43 բերդ, 48 վանք, 1008 գյուղ, մեկ քաղաք և մի քանի գյուղաքաղաք:

Սյունիքի թագավորության մայրաքաղաքն էր Կապան բերդաքաղաքը: 1151-1152-ին Ելտկուզ աթաբեկի զորքերը գրավել են Շլորուտ բերդը, 1166-1169-ին՝ Գրհամը, Գեղին, Կաքավաբերդը, 1170-ին՝ Բաղաբերդը: Սյունյաց վերջին թագավոր Հասան Գեռաքարեցին (1166-1170) հարկադրաբար հեռացել է Արցախ, որով էլ վերջ է դրվել Սյունիքի թագավորությանը[18]:

ԺԲ. Վրաց Բագրատունիների իշխանությունը

Վրաց Բագրատունիների արքայատունը իշխել է Վրաստանում 9-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին տարին: Նրանք սերում են Կոգովիտի իշխան Վասակ Բագրատունուց, որը արաբների դեմ 775 թ. Արճեշի ճակատամարտից հետո հաստատվել է Կղարջքի Արտանուջ ամրոցում: Նրա որդին՝ Ատրներսեհը, և թոռը՝ Աշոտ կյուրապաղատը, ընդունել են քաղկեդոնական դավանանքը և դարձել վրաց Բագրատունիների հիմնադիրները: 9-րդ դարի կեսից Բագրատունիները պայքարել են Տփղիսի արաբական ամիրայության դեմ: Նրանց աջակցել են հայ Բագրատունիները: Բագրատ Գ-ի օրոք (978-1014) միավորվել են վրացական հողերը: Նրա հաջորդները պայքարել են սելջուկ թուրքերի և կենտրոնախույս իշխանների դեմ, ընդարձակել թագավորության սահմանները: Վրաց Բագրատունիների առավել հայտնի ներկայացուցիչներն են Դավիթ Շինարար (1089-1125) և Գեորգի Գ թագավորներն (1156-1184) ու Թամար թագուհին (1184-1213): 15-րդ դարի կեսից մինչև 18-րդ դարի կեսը Բագրատունիները իշխել են Քարթլիի, Կախեթի և Իմերեթի թագավորություններում: 1762-ին Հերակլ Բ-ը միավորել է Քարթլին և Կախեթը: 1801-ին Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո վերացել է Բագրատունիների թագավորությունը: Բագրատունիներից են սերվել պատմագիր իշխաններ Վախուշտին (1696-1757) և Թեյմուրազը (1782-1846), Ռուսաստանի Կայսրության 25 գեներալ Բագրատիոններ, այդ թվում՝ Բորոդինոյի ճակատամարտում զոհված Պյոտր Իվանովիչ Բագրատիոնը (1765-1812) և ուրիշներ[19]:

ԺԳ. Խաչենի իշխանությունը (10-16-րդ դդ.)

Խաչենը Արցախի գավառներից էր: Հակամոնղոլական շարժումները գլխավորելու համար 1261-ին գազանաբար սպանվել է շուրջ 40 տարի Խաչենի իշխանության գահերեց իշխան Հասան Ջալալ Դովլեն, որը հովանավորում էր ամբողջ հյուսիս-արևելյան Հայաստանի մշակութային կյանքը, իսկ մոնղոլական տիրապետության առաջին շրջանում աչքի էր ընկել հայրենի իշխանությունները միավորելու, մոնղոլների հետ արդյունավետ բանակցություններ վարելու շրջահայաց քաղաքականությամբ:

1387-ին Լենկթեմուրի հրոսակները կոտորել են հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելած Ծարի տեր Հասանին և նրա վեց որդիներին:

Խաչենի իշխանությունը գոյատևել է՝ վերա-

[18] Հայկական համառոտ հանրագիտարան, 4-րդ հատոր, Երևան, 2003, էջ 469:

[19] Հայկական համառոտ հանրագիտարան, 1-ին հատոր, Երևան, 1990, էջ 442:

փոխվելով Արցախի Խամսայի մելիքությունների, որոնք իրենց գոյությունը պահպանել են մինչև 19-րդ դարի առաջին քառորդը:

ԺԴ. Այլ իշխանություններ Բագրատունիների տերության կազմում

– Ճիղբք (Ճողբաց իշխանություն)
– Ծանարաց (Կախեթի) քորեպիսկոպոսություն
– Կղարջքի կյուրապաղատություն
– Վիրք
– Սամցխեի իշխանություններ
– Լիպարիտ Բաղվաշի իշխանություն
– Աբխազաց թագավորություն

Հայաստան, որտեղ ծագել է կյանքը: Հայկական լեռնաշխարհում Հայերենը գերիշխող էր արդեն մ.թ.ա. 7-րդ դարում:

Բրիտանական հանրագիտարան

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԱՍԱՑՈՂ

Միեր տեսավ՝ Մանուկ էլե Գանձասարից,
Էկավ նրա ձեռքը պագեց,
Ըսեց՝ Մանուկ, բարով էգար,
Հրաման տուր՝
Մսրա զորքը սրբեմ վըր Աշխրքեն:
Մանուկ կարոտցեր էր Միերին,
Նայեց, ըսեց՝ լաո, էգամ՝ր,
Հայոց աշխարք շուդուց քեզ կսպասե՝
Մինչ դու փագվեր էիր մըջ Ագռավու քար,
Յոթ գլխանի վիշապ զորցեր է:
Նրա շունչ լէ զորավոր է,
Կվառե Հայոց հանդ ու դաշտ,
Հայ ժողովուրդ կհալածե:
Ժողովուրդ լէ նրա շնչից նեղված՝
Կփախնի, այլ աշխրքներ կէրթա:
Ըսեց՝ եթե հաղթես էդ վիշապին,
Ում հեր ու մեր
Աշխրքի կենտրոնում կնստին,
Կեղնիս իշխան ու թագավոր՝
Քո պապ Միերին արժան:
Եթե հաղթես էդ վիշապին,
Աշխարհք նորից կեղնի բարի,
Հող լէ ուսին քեզ կպահի,
Դու կմնաս մըջն աշխարհի:
-Հեյ, Մարութա բանձրիկ Աստվածածին,
Հեյ, իմ պապ Միերի Աստված,
Հեյ, իմ հեր Դավթի Աստված,–
Կանչեց Միեր,– ինձ ուժ տուր
Ու զորություն,
Որ սպանիմ էդ վիշապին,
Որ չարություն, սուտ ու գազան
Չքվին, էրթան մեր աշխրքեն:
Ըսեց, նստեց հրեղեն ձին,
Մեջքից հանեց Թուր Կեծակին,
Զարկ մի իջավ չար վիշապին:

Հատված Հովիկ Վարդումյանի «Փոքր Միերի վերադարձը» վեպից



ՍԵՐԳԵՅ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայագետ, փոմարագետ, տեխ. գիտ. թեկնածու

ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՆԱԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԼԻՔ ՕՐԸ (ՋՐՀՈՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԱՐԵՎԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՌԱՋ)

«Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ. վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»:

Մովսես Խորենացի

«Ծիրանի ծառը մեծ, սիմվոլիկ արժեքներ ունի հայոց հոգիին մեջ»:

Վիլյամ Սարոյան

«Եվրոպայի ողբերգությունն այն է, որ իր քաղաքակրթության հիմքում դրեց ոչ թե հին հայկական, այլ հունական մշակույթը»:

Հայնրիխ Շլիման, հնագետ (Գերմանիա)

21-րդ դարը նոր մարտահրավերներ է ներկայացնում համայն մարդկությանը, բոլոր ազգերին, առավել ևս՝ հայությանը: Խավարի ուժերի՝ հայության դեմ սանձազերծած հատկապես 44-օրյա «հիբրիդային պատերազմից»[20] հետո

[20] **Հիբրիդային պատերազմը** բացահայտ և քողարկված պատերազմական գործողությունների, սադրանքների և խափանարարությունների (դիվերսիա) համակցությունն է, որը զուգորդվում է սեփական մասնակցության

մեր վիճակն այնքան ցավալի է դարձել, որ կարծես օրակարգում **«Լինե՞լ, թե՞ չլինել»** հարցն է դրված: Օրեցօր բացահայտվում են մեր երկրում առկա բազմաթիվ չլուծված ու տագնապահարույց խնդիրներ: Հայաստանում վերջին տարիներին բարոյական և տնտեսական անկման ֆոնին արդեն տեսանելի է ազգահալած և ազգակեր արտաքին ու ներքին ամբոխավարական քաղաքականության չարափառ ուրվականը: Ակնհայտ է, որ եթե այդպես շարունակվի, մենք ինքներս մեր գերեզմանափորն ենք դառնալու: Ի դեպ, հիբրիդային հակազգային պատերազմն իր զինանոցում ունի ազգերին ինքնասպանության[21] տանող զանազան ձևեր, որոնց դիմակայելու միակ ընտրությունը ազգային ինքնաճանաչությամբ ու առաքելությամբ ինքնանալն է:

Այդուհանդերձ, ի՞նչ է սպասում ՀՀ-ին, Արցախին և հայությանը: Այս օրհասական հարցը անկասկած տանջում է ազգի ներկայով և ապագայով մտահոգ հայերին:

Որո՞նք են այն պատճառները, որ խաթարեցին և շարունակում են խոչընդոտել հայոց ներդաշնակ կյանքը:

Պատճառները շատ են՝ պատմական, հասարակական, տնտեսական, քաղաքական, բարոյական, մշակութային և այլն: Սրանցից յուրաքանչյուրն, իհարկե, որոշակի դեր է խաղում: Սակայն հայության անզորության և դժբախտության ամենաներգործուն պատճառը իր սեփական էության մասին ունեցած տգիտանքն է, անինքնաճանաչությունը: Գարեգին Նժդեհի դիպուկ եզրահանգմամբ՝ *«Դեռ իր խորքին անծանոթ է հայությունը և դրա համար էլ պարտվողական է»*: Հետևաբար, հայության ինքնանալու հրամայական կա: Բարվոք ներկա և ապագա ունենալու համար հույժ անհրաժեշտ է առաջնորդվել ազգային ոգով ու գիտակցությամբ, քանզի խավարի խորհրդանիշ տիտանյան Բելի հետնորդները հնուց ի վեր, բացահայտ և քողարկված, դեռ շարունակում են պատերազմել դյուցազնազարմ ազգերի դեմ: Մեր պատմական ժամանակներում համաշխարհային տիրապետության հավակնող ուժերը փորձում են լիիշխան կառավարել աշխարհը: Այդ կառավարմանը հատկապես նպաստում են Արևմուտքում ձևավորված այն խառնարան-ձուլարան պետությունները, ուր ազգային ամեն ինչ դատապարտված է մոռացման և ոչնչացման: Այդ ուժերի՝ մարդկությանն առաջադրած ամենագայթակղիչ խայծը ***«հավասարության»*** գաղափարն է, որը շարունակում է հեղեղել աշխարհն արյունով: Իրականում աշխարհում գոյություն չունե՛ն և չե՛ն կարող լինել երկու հավասար՝ նույնական մարդ, առավել ևս՝ ազգ կամ ցեղ, այսինքն՝ կրկնություն, քանի որ դա կլինի աշխարհի վերջավորության և հետևաբար Արարչի ստեղծարար ուժի սահմանափակության նշան: Եթե կատարյալ պետությունը նմանեցնենք մարդու օրգանիզմին, նրա նահանգները (մարզերը)՝ մարդու հյուսվածքներին, քաղաքացիները՝ բջիջներին, ապա ակնհայտ է դառնում անհավասար բջիջների ներդաշնակ համակեցությունն առողջ օրգանիզմում: Որքան մարդը զարգացած է, այնքան ավելի պարզ է գիտակցում, որ անհավասարությունը համաշխարհային կյանքի հիմնարար սկզբունքն է. յուրաքանչյուրի կարգավիճակը պետք է որոշվի ըստ արժանավորության:

Ըստ այդմ՝ չպետք է զարմանալ, որ վաղուց «ժողովրդացած», բայց ոչ ժողովված (ցիր ու ցան եղած, աշխարհասփյուռ) հայ հանրույթն *«ազատություն, **հավասարություն** և եղբայրություն»* համահարթեցնող կարգախոսի ներքո ժողովրդավարություն է սովորում և դեմոկրատիա խաղում: Գենետիկ հիշողության մթագնում ապրած ժողովուրդը (որի համար խորթ է Պատմահոր՝ ***«հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ»*** բնութագրումը) ներկայումս դեռ ստիպված է ենթարկվել այս խաղի կանոններին, քանզի մեզանում Խորենացու ողբից հետո մինչ այսօր չի գործում ախտականխական (պրոֆիլակտիկ) բարենորոգիչ ազգային գաղափարաբանությունը: Փոխարենը հայությանն իրենց նպատակներին ծառայեցնելու համար, երկար ու ձիգ տարինե-

ժխտմամբ, ինչը զգալիորեն դժվարացնում է հիբրիդային ռազմական գործողություններին լիարժեք պատասխան տալը:

[21] Հիշենք Էմերսոնի հանրահայտ խոսքը՝ *«Ազգը չի կարող կործանվել այլ կերպ՝ բացի ինքնասպանությունից»*:

րի ընթացքում Հայոց աշխարհում պարբերաբար փորձարկվել են բազում սին գաղափարախոսություններ, որոնցից ոմանք հանգամանքների բերումով ժամանակի ընթացքում համեմվել են հայ ազգային մտածողության և հավատքի որոշ տարրերով ու դարձել ներկայումս «հոգեհարազատ» իրողություն:

Այդուամենայնիվ, խոսելով անցյալում ստեղծված ավանդական արժեքների մասին, մշակութաբանները հաճախ են կրկնում այն միտքը, որ այդ արժեքները ժամանակի մեջ չեն հնանում, այլ ամեն մի սերնդի առջև կանգնում են մի նոր գեղեցկությամբ ու հմայքով, բացահայտվում են իրենց բովանդակության նորանոր կողմերով: Հայ մարդու ներաշխարհում, գիտակցության մեջ հավերժաբար ապրելու այդ հատկությամբ է օժտված նաև հայկազյան ավանդական արժեհամակարգը, որի մեջ առավել խորությամբ ձևակերպված են աստվածային օրենքները, լուսաբանված են մարդկության հոգևոր զարգացման կարևորագույն հարցերը: Մենք պարբերաբար վերադառնում ենք էպոսին, դիցաբանությանը, անցյալի բանահյուսությանը, հայկյան տոմարին, մաշտոցյան այբուբենին և ստանում ամենաբարդ հարցերի պտասխանները, սովորում ենք հասկանալ ու արժևորել ավանդականը: Եվ ինչքան էլ ներկա սերունդը այս կամ այն հարցում համաձայն չլինի նախնյաց աշխարհայացքին, որը ներկա մեծ խմորումների ժամանակներում անխուսափելի է, այդուամենայնիվ, բարեպաշտ նախնյաց ավանդական ժառանգությունը երբեք չի կորցնում իր հոգևոր արժեքը:

Ժամանակի հետ փոխվում են դարաշրջաններն ու հասարակական կարգերը, աշխարհն ու մարդը, կյանք են մտնում նոր սերունդներ՝ նոր հետաքրքրություններով և հասարակական պահանջներով, բայց ավանդականը մեզ համար մնում է մշտական արժեք:

Հայկյան արևային քաղաքակրթության ավանդական արժեհամակարգը ներառել է հայոց **ծիրանածնունդ** արևային ծագումը, **Կենաց ծառի**[22] արևապաշտական՝ բարեպաշտական համակարգը՝ իր դիցաբանությամբ, **արևաշունչ** հայոց լեզուն՝ իր **Այբուբեն արեգականով**[23], և տոմարական համակարգն՝ իր արեգակնային օրացույց-տոնացույցով[24]:

Ինչո՞ւ ենք անդրադառնում հայկյան փառավոր անցյալից մեզ ավանդված արժեհամակարգին, որովհետև «Հավերժ վերադարձի» խորհրդով՝ «Ինչ որ եղել է, հիմա էլ կարող է լինել, և ինչ որ պիտի լինի, եղել է արդեն»: Որովհետև *«Հայոց շատ եկեղեցիների տակ կարելի է տեսնել հեթանոսական* (իմա՝ ազգային –Ս. Ս.) *տաճարների հիմքեր, իսկ խորաններում՝ սրբազան կրակի մոխիր, որ հանգել էր, բայց չէր տրվել քամուն:*

Դժվար է գտնել նման մի երկիր, որտեղ հին հավատը այնպես վերաճեր նորի մեջ, որքան հայոց մոտ: Քանդված բագինների վրա բարձրացան նոր Աստծո տներ, քրմերի որդիները դարձան խաչակիր Աստծո ծառաներ, վիշապաքաղ Վահագնը՝ Սուրբ Գևորգ, Վարդավառը՝ Այլակերպության տոն, միհրական հիմները՝ Տիրամեծար աղոթք, արևագալի երգերը՝ շարական, և զոհը՝ մատաղ:

Հեթանոս (իմա՝ բարեպաշտ – Ս. Ս.) *քաղաքակրթությունը կնքվեց խաչով ու մնաց քրիստոնյա շերտի տակ»*[25]:

Ներկա խառնակ ժամանակներում, երբ մենք ականատեսներն ենք Ձկան դարաշրջանից Ջրհոսի դարաշրջան Երկիր մոլորակի աստեղային մուտքի, որն ուղեկցվում է ոչ միայն պատերազմներով և բնակլիմայական աղետներով, այլ նաև՝ ազգային մշակույթների գորշ համահարթեցմամբ, մարդկության համատարած համարակալմամբ և վերահսկողությամբ, հույժ անհրաժեշտություն կա մեր ազգային ինքնության ճանաչողության: Ներկայումս արդեն կասկած չի հարուցում այն փաստը, որ առանց ազգային ավանդության և մշակույթի, ազգային ընտրանու

[22] Սերգեյ Սիմոնյան, Կենաց ծառը և հայոց խորհրդավոր ծիրանենին, «Փարսիան», թիվ 13, մարտ 2012 թ., էջ 34-40:

[23] Սերգեյ Սիմոնյան, Հայոց Այբուբեն արեգականը, «Փարսիան», թիվ 11, փետրվար 2011 թ., էջ 22-29:

[24] Սերգեյ Սիմոնյան, Հայոց Սրբազան Տոմարն ու արեգակնային անշարժ օրացույցը, «Լուսանցք», թիվ 1 (87), 2009 թ. հունվարի 16-22:

[25] Ա. Մարտիրոսյան, Մաշտոց (Պատմաքննական տեսություն), Երևան, 1982, էջ 16:

և ազնվապետության անհնար է ստեղծել կատարյալ հանրություն:

Դարաշրջանների այս անցման շրջանում խաբեությունն առավել սրությամբ է գլուխ բարձրացնում, և առավել սրությամբ են հակադրվում հոգևորն ու մարմնականը, բարեպաշտությունն ու նյութապաշտությունը: Պատկերավոր ասած՝ մեր հավատքի Կենաց Արևը սին-մահիկով փոխարինելու վտանգը մեծացել է: Քանի որ առանց ազգային հավատքի չի լինում ազգային գաղափարախոսություն, ապա մենք պետք է ճիշտ կողմնորոշվենք մեր հավատքի հարցում: Մենք պետք է ազատվենք մեզ պարտադրված բոլոր տեսակի ստերից ու թյուրիմացություններից, որ կարողանանք ճիշտ հասկանալ մեր ազգի առաքելությունը, մեր կյանքի դերն ու նշանակությունը մարդկության պատմության այս խայտաբղետ կռվադաշտ թատերաբեմում, որտեղ պարբերաբար իրար դեմ մեծամարտի են ելնում դյուցազուններն ու տիտանյանները, արիներն ու չարիները կամ պարզապես լույսի և խավարի որդիները, որտեղ նաև շատ հաճախ զարմանալիորեն դեմ առ դեմ են ելնում ու իրար կոտորում մոլորեցնող գաղափարախոսությունների ազդեցության տակ գտնվող արյունակից եղբայրները: Եվ որպեսզի այս կենաց ու մահվան կռվում կրավորական դիրք չգրավենք, այլ, հասկանալով ու ճիշտ կողմնորոշվելով մեր հոգենպաստ ու հայրենաշեն գործուն ներդրումն ունենանք արդարության համար մղվող պայքարում, անհրաժեշտ է ինքնաճանաչ ու ցեղաճանաչ դառնալ, ապրել մեր հայկյան կարգադիր ավանդությամբ:

Հայկը հայ ազգի նախնին է: Նա է առաջնորդել հայոց հոգևոր կյանքը: Նա երբեմնի կռապաշտ աշխարհի տիրակալ Բելի դեմ հաղթանակով Հարք-Հայքում հիմնեց օրինակելի արևային քաղաքակրթություն: Լուսափառության բնօրրան Հայկական Լեռնաշխարհում արևազարմ հայի համար Արդարության Արեգակն եղել է հոգևոր ընկալման աղբյուր: Հայկականությունը հայ ազգային ոգու արտահայտությունն է՝ հանձին հայոց արևային քաղաքակրթության հավատար Հայկ Նահապետի[26]: Անկասկած, հայկյան ազգային ոգին մեր ճակատագիրը վարող, մեր պատմության առաջընթացն ապահովող, մեզ միաբանող միակ առաջատար գործոնն է: Այդ աստվածային ոգու ներգործության շնորհիվ է, որ հայ մարդատեսակը իր պատմության մաքառման ճանապարհին չի՛ ոչնչացել ու չի՛ վերանալու աշխարհի երեսից: Սին գաղափարախոսությունների փողհարները թող իրենց ականջին օղ անեն, որ Հայկականությունը ոչ միայն աստվածատուր ազգային գաղափարաբանություն է, այլ նաև՝ բարեպաշտական կեցություն՝ իր հավատքով, գրով և տոմարով, իր Կենաց ծիրանի ծառի աստվածապաշտական համակարգով: Հայկականությունը նախասահմանված[27] այն գաղափարաբանությունն է, որ կարող է վերջ տալ բազմադեմ ներքին հատվածականությանը, տարանջատումներին ու ազգային ոգեվառությամբ միաբանել համայն հայությունը: Հայկյան ավանդական տոմարի և տոնացույցի գործածությունը Հայքում մի խոսուն վկայություն է հոգևոր աշխարհի հետ սերունդների՝ հազարամյակներ տևած բարեբաշխ հաղորդության: Նախնյաց ավանդական բարեպաշտությունը հիմնված էր ոչ թե կույր հավատքի, այլ՝ երկնային հոգևոր էակների՝ դից-աստվածությունների հետ գիտակցված հաղորդության, այսինքն՝ գերզգայուն փորձառությունների վրա: Հետևաբար, ազգային ծիսական արարողություններն ու տոնակատարությունները, որպես գործուն միջոց, պետք է կյանքի կոչվեն հոգևորի հետ հաղորդվելու և ինքնանալու համար:

Ո՞րն է լինելու հայ ազգի առաքելությունը Ջրհոսի նոր դարաշրջանում: Այս հարցին պատասխանելու համար նախ սահմանենք «ազգ» և «առաքելություն» հասկացությունները:

Ազգը Արարչի կամքով ու զորությամբ, Երկիր մոլորակի վրա պատմականորեն առաջացած

[26] Տե՛ս Սերգեյ Սիմոնյան, «Հայոց արևային քաղաքակրթության հավատարը (Հայկի առեղծվածի լուծումը)», «Հայկազուններ» պարբերական, թիվ 2, 2021, էջ 12-16:

[27] Նախասահմանությունը ժամանակի ընթացքում առաջ եկած և լինելիք իրերի ու երևույթների՝ Արարչի կողմից ի սկզբանե նախագիտությամբ և նախախնամությամբ սահմանված կարգն է:

գենետիկ-արյունակցական ընդհանրություն ունեցող մարդկանց կազմավորում է, որն ունի իր բնօրրանը, լեզուն և բնավորությունը:

Ազգը կենդանի մարդու նման ունի նաև մարմին, կեցություն, բանականություն և Ոգի:

Ազգի առաքելությունը արարչական կամքով պայմանավորված ազգային կեցության ուժերի և որակների անհրաժեշտ դրսևորումն է ժամանակի ու տարածության մեջ: Ազգը, կատարելով իր առաքելությունը, կարողանում է ինքնահիրականացման և ինքնաարտահայտման միջոցով հասու լինել իր էությանը, կյանքի նպատակին և իմաստին: Հետևաբար ազգերն իրենց առաքելությունը իրականացնելու համար անհրաժեշտաբար պետք է ապրեն ազգային բնականոն կյանքով:

Ջրհոսի դարաշրջանում հիմնական 72 ազգերից[28] մեկը, գալիք արևային քաղաքակրթությանն ընդառաջ, պետք է իրականացնի տիեզերական գարնանամուտի այգաբերի առաքելությունը: Այդ առաքելությունը կարող է իրականացնել միայն զուտ Արևի զարմ հանդիսացող Հայ ազգը, որի լեզուն արևաշունչ է, այբուբենը՝ արեգական, օրացույցը՝ արեգակնային, հավատքը՝ արևապաշտական, բնօրրանն է Հայկական բարձրավանդակը՝ Երկիր մոլորակի Արևային հյուսակը, իսկ ինքը հայկազուն՝ դյուցազուն արևորդի:

Ձմեռային ինքնամոռաց քնից հետո հայ ազգը պետք է զարթնի և կատարի իր այդ առաքելությունը: Բոլոր ժամանակների համար Հայ ազգի առաքելությունը եղել է սա և միայն սա. բնակվելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծում՝ արարչության բնօրրան Հայկական Լեռնաշխարհում, պահպանել սրբազան ավանդությունները, ստեղծել ազգային մշակույթները սնող ու հաշտեցնող համադրելի բարեկեցիկ արևային քաղաքակրթություն: Այսպիսով, Հայաստանի գալիք օրը մեր տեսլականում ներկայանում է որպես մարդկանց ներդաշնակ ազնվապետական համակեցություն, որի համար հոգևոր արժեքներն ու համագործակցությունը բարեկեցության հասնելու հիմնական գրավականն են:

[28] «Եւ ընդ ամենայն ազգք երից որդւոցն Նոյի եւթանասուն եւ երկու» (Անանիա Շիրակացի):

Անկանխագուշակելի թուրքը պետք է ջնջվի աշխարհի քարտեզից, որպես քաղաքակրթության խայտառակություն և մարդկության անեծք: Թուրքերը միշտ սպանդ են սարքել, երբ ուժ են ունեցել այն իրագործելու համար: Որտեղ էլ մտել են, նրանց ետևից արյունոտ հետք է ձգվել:

Ուիլյամ Գլադստոն,
Մեծ Բրիտանիայի վարչապետ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Քիմիական գիտությունների դոկտոր, «Հայկական հանրագիտարան. հրատարակչության» գլխավոր խմբագիր-տնօրեն

ՋԱՎԱԽՔ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Ջավախքի մասին առաջին գրավոր տեղեկությունը վերաբերում է Արարատյան թագավորության ժամանակաշրջանին. այն հիշատակված է Արգիշտի Ա արքայի (մ.թ.ա. մոտ 786–764 թթ.) թողած Խորխոռյան արձանագրության մեջ՝ Զաբախա անունով:

Տարածաշրջանը, լինելով Հայաստանի ու Վրաստանի սահմանին, պարբերաբար անցել է մեկից մյուսին և եղել հիմնականում հայաբնակ:

Վրաց պատմագիտությունն ընդհանրապես ժխտում է Ջավախքի հայկականության փաստը: Ավելին. հայագետ, պատմաբան Իվանե Ջավախիշվիլին այն կարծիքին էր, որ «Վրացիները պետք է խստագույնս արձագանքեն Ջավախեթիան յուրացնելու հայերի փորձերին, որոնք, որպես եկվորներ, պարտավոր են լքել Ախալքալաքի գավառը՝ իրենց տեղը զիջելով ապօրինաբար Օսմանյան կայսրություն քշված իրական տերերին՝ վրացի մեսխերին»: Նա նկատի ուներ 1828-29 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին՝ 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքված Ադրիանապոլսի հաշտության պայմանագրով Արդահանից (1829 թ.) և Կարինից, Բասենից, Կարսից, Խնուսից, մասամբ՝ նաև Դերջանից (1830 թ.) շուրջ 72000 հայերի տեղափոխությունը Ռուսաստանին անցած Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներ, և տեղի մուսուլմանների («վրացի մեսխերի») ինքնակամ տեղափոխումը Արևմտյան Հայաստանի՝ բնակչությունից դատարկված տարածքներ:

Ջավախիշվիլիից 1500 տարի առաջ, սակայն, պատմահայր Մովսես Խորենացին գրել է, որ հայոց Վաղարշակ Ա թագավորը «զկէս մասինն Ջաւախաց» ժառանգություն է տալիս Շարայի ցեղից Գուշարին (նրա անունով է կոչվել Գուգարք աշխարհը) և նրան կարգում նահանգի բդեշխ՝ հայոց երկիրը հյուսիսկովկասյան լեռնականներից պաշտպանելու համար:

Մ.թ.ա. 270-ական թթ. վրաց նորակազմ Փառնավազյան պետությունը՝ Իբերիան, պարսից Սելևկյանների օժանդակությամբ գրավել է Գուգարքը՝ Ջավախքով հանդերձ: Իսկ հայոց Արտաշես Ա արքան (մ.թ ա. 189–160) ետ է վերցրել այն: Այդ մասին գրել է նաև հույն պատմագիր Ստրաբոնը (մ.թ.ա. 63–մ.թ. 23):

Պատմահայր Մովսես Խորենացին, հետա-

գայում Ասողիկը վկայում են նաև, որ Ջավախքը մ.թ. 1-ին դարում մտել է Արշակունյաց թագավորության կազմի մեջ: Արշակ Բ թագավորի օրոք Գուգարաց աշխարհն ապստամբելով անցել է Վրաստանի կողմը, բայց Պապ թագավորի սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն այն ուժով ետ է վերցրել (4-րդ դար):

Գուգարքը մինչև Արշակունիների անկումը (428 թ.) եղել է Մեծ Հայքի Հյուսիսային սահմանապահ նահանգ, որի սահմանն անցել է Կուր գետով: Դրանից հետո այն անցել է Վրաստանին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը, և գործածության մեջ է դրվել «բդեշխ վրաց և գուգարաց» տիտղոսը, որը տրվել է տարածաշրջանի կուսակալներին:

Այդ ժամանակաշրջանում Ջավախքի հայկականության և հայաշունչ ժողովրդագրական պատկերի վառ վկայություններից է Հռիփսիմյան կույսերից Նինոյի (հայկական աղբյուրներում՝ Նունե) հետ կապված ավանդապատումը, որը հաստատում են նաև վրաց աղբյուրները. երբ նա Հայաստանից Վրաստան անցնելու ճանապարհին, Փարվանա լճի ափին հանդիպել է հովիվների, նրանց հետ խոսել է հայերեն, հարցրել է Մցխեթ տանող ճանապարհը:

960–990-ական թթ. Գուգարքի մեծ մասը Ջավախքի հետ մտել է Հայոց Բագրատունյաց թագավորության կազմի մեջ: 1010-ական թթ. վրաց Բագրատունիները ետ են վերցրել Ջավախքն ու հարակից տարածքները, վրաց Բագրատ Գ արքան կառուցել է Նոր քաղաքը (վրացերեն՝ Ախալ քալաք), իսկ նրա հաջորդը՝ Բագրատ Դ-ը, 1043–47 թթ. վերակառուցել է Ախալքալաքի բերդը: Այդ ժամանակներից Ախալքալաքը դարձել է գավառի կենտրոն:

12-րդ դարի վերջերին վրաց թագուհի Թամարը Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառների հետ Ջավախքը, որպես ժառանգական կալվածք, նվիրել է Զաքարյանների իշխանական տոհմին:

1266 թ., սպասալար Սարգիս Ջաղելու գլխավորությամբ և մոնղոլ Աբաղա խանի աջակցությամբ Սամցխեն անջատվել է Վրաստանից և ձեռք բերել անկախություն: Նրա կազմում էին նաև Արդահանի, Սամցխեի և Ջավախքի գավառները, մայրաքաղաքը Ախալցխան էր: Գոյատևել է մինչև 1628 թ., ապա ընկել է օսմանյան տիրապետության տակ: Ախալքալաքի և Ախալցխայի գավառներն օսմանցի թուրքերի տիրապետության տակ միավորվել են Ախալցխայի փաշայության մեջ, իշխանությունը հանձնվել է տեղի մուսուլման իշխանական տներին: Այդ վիճակը պահպանվել է մինչև 1828–29 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ տարածաշրջանն անցել է Ռուսաստանի Կայսրությանը:

Այդ հերթափոխվող ասպատակությունների ու ավերումների պայմաններում անգամ Ջավախքի ազգաբնակչության հիմնական մասը հայեր էին, ինչի մասին է վկայում «Գուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը», որը 1580–95 թթ. օսմանյան հարկացուցակ է: Այնտեղ գրանցված հարկատու բնակիչների մեծ մասը քրիստոնյա հայեր կամ վրացական միջավայրում տարածված հայկական անուններով մարդիկ են:

Այդ տարիներին Ջավախքում նկատելի զարգացում է ապրել հայկական մշակութային կյանքը: Ախալքալաքում և գավառի տարբեր գյուղերում հայտնաբերվել են 1289-ից մինչև 1516 թվակիր ճարտարապետական հուշարձաններ, մասնավորապես՝ խաչքարեր, գերեզմանաքարեր, կան պահպանված եկեղեցիներ և այլն:

Տարածաշրջանի կյանքում արմատական փոփոխություններ են կատարվել 1830-ական թթ., Կարապետ եպս. Բագրատունու գլխավորությամբ կարինահայերի մեծ գաղթից հետո. տեղափոխված շուրջ 72000 հայերից ավելի քան 30000-ը բնակություն է հաստատել Ախալքալաքի, մյուսները՝ Ախալցխայի ու Ծալկայի (պատմական Թռեղք) գավառներում և Հայաստանի տարբեր շրջաններում: Նշենք, որ գաղթից առաջ գավառում, 1716 հայ ընտանիքից բացի, կային նաև 179 վրացի և 639 մուսուլման ընտանիքներ, այսինքն՝ գավառն այն ժամանակ էլ գերազանցապես հայաբնակ էր: 1831 թ. Ախալքալաքի գավառի հայության քանակը 1816 թ. համեմատությամբ գրեթե կրկնապատկվել էր:

Ժամանակի ընթացքում Ախալքալաքն աստիճանաբար վերածվեց արհեստավորական կենտրոնի, բացվեցին դպրոցներ, վերաշինվեց Սբ Խաչ եկեղեցին (1856 թ., հիմնադրվել է 1830 թ.), կազմակերպվեցին թատերական և ինքնագործ խմբեր և այլն: Միայն Ախալքալաքի գավառում

վերաբնակ հայերը տեղացիների հետ կառուցել ու վերաշինել են շուրջ 60 գյուղ ու 50 եկեղեցի:

1840-ական թթ. սկզբներին գավառի հարավային մասում՝ ներկայիս Նինոծմինդայի շրջանի տարածքում, բնակեցվել են Ռուսաստանից աքսորված աղանդավոր դուխոբորներ, որոնք այդտեղ հիմնել են 8-9 գյուղ: 1886 թ. մարդահամարի տվյալներով՝ գավառում հաշվվում էր 110 գյուղ՝ շուրջ 63800 ընդհանուր բնակչությամբ, որից 46.386-ը (72,7 %) հայեր էին, 10,7 %-ը՝ մուսուլմաններ, 10,4 %-ը՝ ռուս դուխոբորներ, 5,8 %-ը՝ վրացիներ:

19-րդ դարի վերջին զգալիորեն աշխուժացել է Ախալցխայի և Ախալքալաքի կրթամշակութային կյանքը:

Ախալքալաքում 1880 թ. բացվել է ռուսական դպրոց, 1889 թ.՝ քաղաքային ուսումնարանը: Նոր դպրոցներ են բացվել գավառի տարբեր գյուղերում: 1880-ական թթ. վերջին գավառում գործել է 15 դպրոց՝ ավելի քան 1000 աշակերտով:

Ախալքալաքի ծխական դպրոցում դասավանդել են պատմաբան Եղիշե Գեղամյանը, ազգագրագետ Երվանդ Լալայանը, «Մուրճ»-ի խմբագիր Ավետիք Արասխանյանը (որն Ախալքալաքում էլ մահացել է), իսկ աշակերտներից էին բանաստեղծ Վահան Տերյանը, գրող Դերենիկ Դեմիրճյանը, ապագա քաղաքական գործիչներ Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Ռուբեն Դարբինյանը և ուրիշներ:

1890 թ. հիմնվել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ախալքալաքի մասնաճյուղը, որը մեծ աշխատանք է կատարել հատկապես 1895–96 թթ. կոտորածներից խույս տված գաղաթականներին աջակցելու առումով:

Հոգևոր կյանքի աշխուժացմանն էապես նպաստել է 1895 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի այցը տարածաշրջան: Նման մի բարեբախտություն տեղի ունեցավ նաև դրանից 116 տարի անց՝ 2011-ին, տարածաշրջան Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական այցով:

Այդ շրջանում ստեղծագործել է աշուղների մի ամբողջ համաստեղություն, որի առաջին ներկայացուցիչները Մաթին ու Սուխանին էին, որոնց շարունակեցին Սիային (Ղազար Կարապետյան, Կարծախ), Թիֆիլին (Եղո Մանուկյան, Սալդա), Ֆիազին (Մարգար Պապոյան, Դադեշ), իսկ աշուղ Ջիվանին (1846–1909, Կարծախ) դարձավ հայ աշուղական արվեստի խոշորագույն դեմքերից մեկը:

Գրական, մշակութային կյանքի երևելի գործիչներից էին Արշակ Մադոյանը (Սեյլան), Դերենիկ Դեմիրճյանը, Վարդան Շահպարոնյանը, Ղազար Տեր-Գրիգորյանը (Ջավախեցի), ավելի ուշ՝ իր եղբայր Վահան Տերյանը, հրապարակախոս Բագրատ Պիճիկյանը, Պողոս Աբելյանը, պատմաբան Եղիշե Գեղամյանը, ծագումով արցախցի Ջալալ Տեր-Գրիգորյանը և ուրիշներ:

1895 և 1901 թթ. Ջավախք է այցելել մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը և այնտեղ է հղացել իր չքնաղ գործերից երկուսը՝ «Թմկաբերդի առումը» պոեմը և «Փարվանա» առասպելը (լեգենդը): Եղել է Վահան Տերյանի ծննդավայր Գանձա գյուղում, հյուրընկալվել նրա հորը՝ Տեր-Սուքիասին, և մեծ տպավորություն ստացել նրանից:

Զուտ հայկական կյանքով ապրող այս տարածաշրջանն անմասն չի մնացել նաև համահայկական կյանքից: Այնտեղ 1890-ական թթ. Ջալալ Տեր-Գրիգորյանի և Պողոս Աբելյանի ջանքերով ստեղծվել է ազատագրական խմբակ, իր գործունեությունն է ծավալել ՀՅԴ-ն: Ջավախեցի բազմաթիվ հայրենասերներ մասնակցել են ֆիդայական մի շարք կռիվների:

Ջավախահայությունը գործուն մասնակցություն է ունեցել նաև 1903 թ. հակացարական ելույթներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու իրավունքները սահմանափակելու և ունեցվածքը բռնագրավելու դեմ:

Ռուսական առաջին հեղափոխության փորձից (1905 թ.) հետո հարց է դրվել վերանայելու Այսրկովկասի վարչատարածքային բաժանումը: Հայ քաղաքական շրջանակներն առաջարկել են երկրամասում ստեղծել զեմստվոներ, որոնք պիտի կազմավորվեին ազգային կազմի միատարրության սկզբունքով: Վրաց և Կովկասի թաթար առաջնորդները համաձայնել են Ախալքալաքի գավառը հանել Թիֆլիսի նահանգի կազմից և միացնել նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին: Այդ նախագիծը 1917 թ. ներկայացվել է արդեն հանրապետական Ռուսաստանի վար-

չապետ Ալեքսանդր Կերենսկիի ժամանակավոր կառավարության հաստատմանը, որը, սակայն, չի իրականացել վրա հասած Հոկտեմբերյան հեղափոխության և սկսված ռուս-թուրքական պատերազմի պատճառով:

1917 թ. մարտի 9-ին քաղաքական նկատառումներով Այսրկովկասում ստեղծվեց հայ-վրաց-թաթարական միացյալ մի պետություն՝ նախ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի, ապա՝ կոմիսարիատի գլխավորությամբ: Վերջինս 1918 թ. փետրվարին նույն այդ Անդրկովկասը հայտարարեց Ռուսաստանից անկախ և հռչակեց Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը: Այս քայլի քաղաքական ենթատեքստը հեռացող ռուսների փոխարեն Այսրկովկասի (տվյալ դեպքում՝ Հայաստանի) դռները թուրք նվաճողների առաջ բացելու անթաքույց մղումն էր՝ վրացիների օգտին Հայաստանի հետ հնարավոր տարածքային հարցերը լուծելու ակնհայտ մտադրությամբ:

Շատ չանցած՝ թուրքերը հարձակվեցին Հայաստանի և հայաբնակ Ջավախքի վրա: Սկսվեց կյանքի ու մահվան մի անհավասար պայքար: Ախալցխայում հաջողվեց կազմակերպել ինքնապաշտպանություն՝ քաղաքագլուխ Զորի Զորյանի (Նախիջևանի Ցղնա գյուղից սերված և Թիֆլիսում ծնված մտավորական) գլխավորությամբ, սակայն Ախալքալաքի գավառում այն ձախողվեց, և շուրջ 80000 հայ բնակչություն, անպաշտպան մնալով, ստիպված եղավ 1918 թ. մայիսին գաղթել: Շուրջ 40000 հոգի Ախալքալաքի շրջանից գաղթեց Բակուրիան, 35–40 հազարը՝ Բոգդանովկայի շրջանից՝ Ծալկա: Գաղթականների երկու հոսքերի կեսից ավելին կոտորվեց սովից ու անօգնականությունից: Վեհիբ փաշայի օսմանյան զորքն ավերեց գյուղերն ու թալանեց գավառի ողջ անշարժ գույքը: Այնտեղից 10 մլն փութ հացահատիկ տարվեց Թուրքիա, իսկ զորքը Ջավախքում մնաց մինչև տարեվերջ, և հնարավոր չեղավ ջավախահայությանը վերադարձնել իրենց թալանված ու ավերված բնակավայրեր:

Քաղաքական նման խառն իրադրության պայմաններում Վրաստանը, Կովկասի թաթարներն ու Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը:

Տարածաշրջանից թուրքական զորքի դուրս գալուց հետո վրացական կառավարությունն անմիջապես զորք մտցրեց Ջավախք և գաղթականների վերադարձը պայմանավորեց վրացահպատակության ընդունմամբ և գավառի՝ Վրաստանի մաս ճանաչմամբ: Ավելին. Ջավախքում կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, և նշանակվեց վրացի գավառապետ:

Իրավիճակը նույնքան լարված էր նաև Լոռիում. հարցը կարգավորելու՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միջամտությունը որևէ արդյունք չտվեց: Հովհաննես Քաջազնունու կառավարությունը 1918 թ. դեկտեմբերի 10-ին ստիպված էր դիմել զենքի ուժի: Սկսվեց հայ-վրացական պատերազմը: Հայկական զորքը, Դրոյի գլխավորությամբ, վրացիներին ուժով դուրս քշեց Լոռուց: Հաշտության բանակցություններում (1919 թ. հունվարի 9–17) բացահայտ էր Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ գնդապետ Ստյուարդի վրացամետ դիրքորոշումը, և հայկական կողմն ստիպված համաձայնեց Ախալքալաքում վրացական զորքը թողնելու նրա պահանջին:

1919 թ. մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, սակայն դրանով որևէ վիճելի հարց չլուծվեց: Ընդհակառակը՝ ամբողջ Վրաստանում սկսվեց խիստ հայատյացության մթնոլորտ, Ջավախքում հաստատվեց այնպիսի ոստիկանական ռեժիմ, որ հաճախ բախումներ էին տեղի ունենում բնակչության և հարկահան ոստիկանների միջև: Գավառից ծայր առավ զանգվածային արտագաղթ դեպի Հյուսիսային Կովկաս:

1919 թ. օգոստոսին հրավիրվեց հայ-վրացական խորհրդաժողով, և վրացական կողմը դարձյալ պահանջեց Ախալքալաքի գավառն ամբողջությամբ, Լոռու չեզոք գոտին՝ մինչև Սանահին կայարանը, Արդահանի և Օլթիի գավառների մի մասը, ինչը, բնականաբար, հայկական կողմը մերժեց:

1920 թ. սեպտեմբերի 23-ին սկսվեց թուրք-հայկական երկրորդ պատերազմը: Այդ ժամանակ Վրաստանն առերես չեզոքություն պահպանեց՝ հայտարարելով՝ «Հայաստանի համար Վրաստանը չի կարող պատերազմել Թուրքիայի և Ռուսաստանի դեմ» (Հայաստանում Վրաստա-

նի դիվանագիտական ներկայացուցիչ Սիմեոն Մդիվանի), բայց գաղտնի գործակցում էր Թուրքիայի հետ՝ ամեն գնով Ջավախքը հայաթափելու նպատակով: Վրաստանի առաջին վարչապետ Նոյ Ռամիշվիլին հայերին խորհուրդ տվեց «բավարարվել միայն իրենց բարոյական աջակցությամբ» և համաձայնեց միայն Վրաստանի տարածքում հայերի զորահավաք կատարելուն: ՀՀ-ն այդ պատերազմում պարտվեց, և Վրաստանի հետ բոլոր վիճելի հարցերը, ըստ էության, լուծվեցին հօգուտ Վրաստանի:

Տարածաշրջանում թուրքերի բռնությունները նվազեցին միայն 1921 թ. մարտին, երբ Ախալքալաք մտան 11-րդ Կարմիր բանակի զորքերը:

Իրավիճակի այդպիսի փոփոխությունը Ջավախքի հայերի մեջ Հայաստանին միանալու նոր հույս արթնացրեց, և նրանք սկսեցին իշխանություններին դիմում-խնդրագրեր գրել: 1921 թ. մայիսի 2-ին Թիֆլիսում գումարվեց Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) Կուսակցության Կովկասյան բյուրոյի ստեղծած՝ սահմանազատման հանձնաժողովի նիստ՝ Սերգեյ Կիրովի գլխավորությամբ: Հայկական կողմը ներկայացնում էր Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Բեկզադյանը, որն առաջարկեց Ախալքալաքը (հայեր՝ 72 %), Լոռին և Ղարաբաղը (94 %) միացնել Հայաստանին, ինչը, սակայն, մերժվեց:

1921 թ. հուլիսի 2–7-ին հրավիրվեց ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի լիագումար նիստ, որին մասնակցում էր նաև Խորհրդային Ռուսաստանի ազգությունների գործերով ժողովրդական կոմիսար Իոսիֆ Ստալինը: Դարձյալ քննարկվեց վիճելի տարածքների խնդիրը, այդ թվում՝ Ախալքալաքի գավառը ՀՍԽՀ-ին միացնելու հարցը: Զայների 6 կողմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ «Լոռու չեզոք գոտին» միացվեց Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի (այժմյան Ծալկայի) շրջանները ՀԽՍՀ-ին միացնելու հարցը թողնվեց Վրաստանի կոմկուսի կենտկոմի քննարկմանը: Վերջինս հուլիսի 16-ի նիստում նպատակահարմար չգտավ այդ գավառները հանձնել ՀՍԽՀ-ին՝ պատճառաբանելով, որ դրանք տնտեսապես ավելի կապված են Թիֆլիսի հետ: Այդ նույն ժամանակ Լեռնային Ղարաբաղն էլ նույն պատճառաբանությամբ տրվեց Խորհրդային Ադրբեջանին:

Գավառի բնակչությունը զայրույթով ընդունեց այդ որոշումը, դիմեց զանգվածային անհնազանդության և որոշեց արտագաղթել: Այս անգամ արդեն վախենալով, որ տարածաշրջանը կարող է իսկապես ամայանալ, վրաց իշխանություններն ուժով արգելեցին հայերին հեռանալ բնակավայրերից: Տարածաշրջան եկավ ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը, որը կարողացավ հայերին համոզել, և վիճակը փոքր-ինչ հանդարտվեց:

1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրվեց հայ-վրացական սահմանի վերաբերյալ փաստաթուղթ, որով Հայաստանին անցավ Լոռու չեզոք գոտին, իսկ Ախալքալաքի և Բորչալուի գավառները թողնվեցին Վրաստանի կազմում: Հայաստանի կողմից պայմանագիրն ստորագրել է Ալեքսանդր Մյասնիկյանը, Վրաստանի կողմից՝

1989 թ.

շրջան	հայեր	վրացիներ	ռուսներ	ընդամենը
Ախալցխա	23.469 (42,8 %)	25.648 (46,8%)	3.426 (6,2 %)	54.822
Ադիգեն	1.237 (5,8 %)	19.491 (91,6%)	294 (1,4 %)	21.282
Ասպինձա	2.565 (19,1 %)	10.753 (80,1%)	45 (0,3 %)	13.432
Ախալքալաք	63.092 (91,3 %)	3.005 (4,3%)	1.737 (2,5 %)	69.108
Բորժոմ	5.241 (12.7 %)	25.214 (61.1%)	3.879 (9.4%)	41.266
Նինոծմինդա	33.964 (89,6 %)	454 (1,2%)	3.161 (8,3 %)	37.895
ընդամենը	129.568 (54,5 %)	84.565 (35,6%)	12.542 (4,5 %)	237.805

2002 թ.

շրջան	հայեր	վրացիներ	ընդամենը
Ադիգեն	1.407 (5,8 %)	22.222 (91,6 %)	23.629
Ասպինձա	2.780 (19,1 %)	11.660 (80,1 %)	14.440
Ախալքալաք	62.814 (91,3 %)	3.027 (4,4 %)	65.841
Բորժոմ	3.816 (10,0 %)	29.518 (77,6 %)	33.334
Նինոծմինդա	34.697 (89,6 %)	451 (1,2 %)	35.148
Ախալցխա	23.644 (42,8 %)	25.688 (46,8 %)	49.332
ընդամենը	129.158 (58,25 %)	92.566 (41,75 %)	221.724

Վրաստանի հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանին: Այդ համաձայնագրի ուժը պահպանվեց խորհրդային իշխանության գոյության ամբողջ ընթացքում: Այս փաստաթղթով հաստատված սահմանները Վրաստանի և Հայաստանի անկախացումից (1991թ.) հետո դարձան միջազգային:

Դրանից հետո ջավախահայության խնդիրը վերածվեց Խորհրդային Վրաստանի ներսում ինքնավարություն ձեռք բերելու հարցի, որը, սակայն, նույնպես մերժվեց 1923 թ.:

1930 թ. Ախալքալաքի գավառը բաժանվեց երկու վարչական շրջանների՝ Ախալքալաքի և Գորելոյի (1933 թ-ից՝ Բոգդանովկայի, այժմ՝ Նինոծմինդայի): 1933 թ. Ախալքալաքի հյուսիսային գյուղերից Մոլիթը և Չխարոլան միացվեցին հիմնականում վրացաբնակ Բորժոմի շրջանին, ավելի ուշ՝ Դամալան՝ նորաստեղծ Ասպինձայի շրջանին: Այդպես հայաբնակ այդ տարածքը նաժան-բաժան մասնատվեց վարչատարածքային կարգավորումների պատրվակով:

Ջավախքում ժողովրդագրական հերթական փոփոխությունը տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Նախ՝ այնտեղից բանակ զորակոչվեց 12.684 հոգի, որի 61,4 %-ը՝ 7788 հոգի, զոհվեց: Ապա՝ 1944 թ. թուրք-մեսխ(եթցին)երը (շուրջ 10000 անձ), որպես «անհուսալի տարր», աքսորվեցին Միջին Ասիա, և նրանց փոխարեն վրացիներ բերվեցին Իմերեթիայից: Ախալցխայի և Ախալքալաքի շրջանների մեջտեղում ստեղծվեց հիմնականում վրացաբնակ Ասպինձայի շրջանը, որտեղ հայկական է միայն Դամալա գյուղը:

Ավելի ուշ բնակչության մի մասն արտագաղթեց Հյուսիսային Կովկաս և Հայկական ԽՍՀ: Արտագաղթը դարձավ շարունակական և հասավ այն աստիճանի, որ տարածաշրջանի բնակչության քանակը 1989 թ. հավասարվեց 1917 թ. մակարդակին՝ շուրջ 105000 հոգի:

1991 թ. դեկտեմբերի 25-ին Խորհրդային Միության փլուզումից հետո, անկախ Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան իշխանության եկավ «Վրաստանը վրացիներին» կարգախոսով: Այդ ալիքի վրա հրահրվեց դուխոբորների արտագաղթը, և բացահայտ հալածանք սկսվեց ջավախահայության դեմ, որին, սակայն, վերջինս կարողացավ դիմակայել իր խելամիտ զսպվածությամբ և հավասարակշռվածությամբ:

Անկախացումից հետո Վրաստանի քաղաքական հարաբերությունները Ռուսաստանի հետ հույժ սրվեցին. պայքար սկսվեց վերջինիս ռազմակայանները Վրաստանից դուրս բերելու համար: Դրանցից մեկը (ամենախոշորը Այսրկովկասում) տեղակայված էր Ախալքալաքում: Տևական պայքարից հետո վրացական կողմը կարողացավ 2007 թ. հունվարի 1-ին ՌԴ ռազմակայանները դուրս բերել Վրաստանի տարածքից:

2008 թ. օգոստոսին տեղի ունեցավ ռուս-վրացական պատերազմը, անկախացան Աբխազիան և Հարավային Օսեթիան:

Սկսվեց Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի տնտեսական ու քաղաքական աշխույժ համագործակցություն. կառուցվեցին Բաքու–Թբիլիսի–Ջեյհան գազատարը, ապա՝ Ախալքալաք–Կարս երկաթգիծը, որոնք վաղուց գործում են: Այդ խոշոր, աշխարհաքաղաքական նշանակության խնդիրներն ուղղակիորեն առնչվում

են Ջավախքին, որովհետև, նախ, տարանցիկ ճանապարհներն անցնում են նրա տարածքով, ապա՝ Ախալքալաքից ռուսական ռազմակայանը դուրս բերելուց հետո հարցականի տակ դրվեց ջավախահայերի անվտանգությունը, որովհետև ՌԴ սահմանապահ զորքերի փոխարեն այնտեղ բառացիորեն ոչինչ չստեղծվեց. Թուրքիայի հետ Վրաստանի սահմանն այսօր, փաստորեն, բաց է, և քիչ չեն անասնագողության ու սահմանային միջադեպերը:

1995 թ. ստորագրվել և 1999 թ. վերահաստատվել է հայ-վրացական համաձայնագիր, որով Վրաստանը և Հայաստանը հայտարարվել են ռազմավարական գործընկերներ:

1994 թ. վարչատարածքային բաժանումով՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի հայաբնակ շրջանները Ախալցխայի (մոտ 40 %-ով հայաբնակ), Ադիգենի, Բորժոմի և Ասպինձայի վրացաբնակ շրջանների հետ միավորվել են մեկ՝ Սամցխե-Ջավախքի նահանգի կազմում: Այդ տարածաշրջանի վերջին տարիների ժողովրդագրական փոփոխության միտումները պատկերացնելու համար համադրենք 1989 և 2002 թթ. մարդահամարների տվյալները (տե՛ս նախորդ էջում):

Այս տվյալները համեմատելիս դժվար չէ նկատել, որ Ախալքալաքի շրջանի հայ ազգաբնակչության քանակը 63.092-ից (1989 թ.) փոքր-ինչ նվազել է՝ 62.814 (2002 թ.), Նինոծմինդայինը 33.964-ից հասել է 34.697 հոգու: Իսկ 2014 թ. տվյալներով՝ Ախալքալաքի շրջանի հայերի թիվը նվազել է մինչև 44.900, Նինոծմինդայինը՝ 24.500 հոգու, այսինքն՝ վերջին 13 տարիների (2002-2014) ընթացքում հայերի ընդհանուր թիվը նվազել է շուրջ 30 %-ով: Բնականաբար նվազել է նաև ջավախահայության տեսակարար կշիռը տարածաշրջանի ազգաբնակչության մեջ, և եթե նախկինում հայերը կազմում էին Սամցխե-Ջավախք նահանգի և Ծալկայի շրջանի ընդհանուր ազգաբնակչության 65-70%-ը, ապա այժմ այն 50%-ի սահմանագծի վրա է: Նվազման միտումը շարունակվում է նաև մեր օրերում:

Ներկայիս Ախալքալաքի շրջանն ունի 64 գյուղ, որոնցից 59-ը և Ախալքալաք քաղաքը գրեթե ամբողջությամբ հայաբնակ են:

Նինոծմինդայի շրջանն ունի 31 գյուղ, որոնցից 8-ը ռուս դուխոբորների նախկին գյուղերն էին: Վերջիններիս արտագաղթից հետո այնտեղ վերաբնակեցվել են աջարներ, բայց ամբողջ շրջանը գերազանցապես հայաբնակ է:

Ախալցխայի շրջանն ունի 2 քաղաք՝ Ախալցխան և Վալեն, ինչպես նաև՝ 36 գյուղ, որոնցից 15-ը հայկական են:

Ասպինձայի շրջանի գյուղերից լիովին հայաբնակ է միայն Դամալան: Հայերի որոշ քանակություն է ապրում նաև Ասպինձա քաղաքում (մոտ 20 տուն):

Ադիգենի շրջանի գյուղերից հայաբնակ է միայն Աբասթուման գյուղը (համանուն ավանից՝ 5 կմ հարավ): Փոքր թվով հայեր ապրում են նաև Աբասթուման ավանում:

Բորժոմի շրջանի հարավային մասում կան 4 հայաբնակ գյուղեր (2-ը նախկին Ախալքալաքի շրջանի գյուղերն են):

Ջավախքից հյուսիս-արևելք գտնվող Ծալկայի շրջանն ունի 13 հայաբնակ գյուղ: Ըստ 1897, 1979, 1989, 2002 և 2006 թթ. վիճակագրական տվյալների՝ Ծալկայի շրջանի հայության քանակը համապատասխանաբար եղել է 8350, 13.996, 12.671, 11.484, 11.000 հոգի: Հետխորհրդային տարիներին հույների՝ Հունաստան զանգվածային արտագաղթից հետո նախկին խառը (հունաբնակ և հայաբնակ) այդ շրջանի գյուղերում և շրջկենտրոն Ծալկա քաղաքում բնակեցվել են աջարներ, սվաններ և այլ ժողովուրդներ: Այսօր նրանց թվաքանակն արդեն գերազանցում է հայության թիվը:

Տարածաշրջանի կրթամշակութային կյանքն այսօր էապես վտանգված է. եթե 2000-ական թթ. սկզբին, օրինակ, հայկական դպրոցներում աշակերտների թիվը 22.900 էր, ապա 2014-15 ուսումնական տարում այն եղել է 13.300, 2021-22-ին՝ 12.200, այսինքն՝ հայ աշակերտների թիվը 15 տարվա ընթացքում նվազել է 10.700-ով (շուրջ 47 %-ով): Պատճառը, հասկանալիորեն, հայ բնակչության զանգվածային արտագաղթն է: Մյուս կողմից՝ 2005 թ. ընդունված «Կրթության մասին» Վրաստանի օրենքով, բոլոր ոչ վրացալեզու դպրոցներում ներդրվել է ուսուցման երկլեզու համակարգ, որն իրականացվում է հիմնականում ազգային դպրոցների լեզվի,

պատմության, կրոնի դասաժամերի հաշվին: Ավելին. նախատեսվում է փուլային անցում կատարել լրիվ վրացալեզու ուսուցման:

Միաժամանակ արգելվել է ՀՀ-ում տպագրվող դասագրքերի օգտագործումը հայկական դպրոցներում, փոխարենը գործի են դրվել Թբիլիսիում պատրաստվող, հիմնականում ցածրորակ, հայկականությունից զուրկ դասագրքեր:

Ողջունելով վրաց լեզվի խորացված ուսուցման՝ տեղի կառավարության ջանքերը՝ չենք կարող համաձայնել հատկապես հայոց պատմության առանձին դրվագների իրական հայկականից տարբեր մեկնաբանություններին, որոնք քիչ չեն պատմության դասագրքերում: Չէ՞ որ շրջանավարտներից շատերը կրթությունը շարունակում են ՀՀ բուհերում և փաստի առաջ կարող են կանգնել:

Արտառոց երևույթ է նաև ՀՀ-ից տպագիր մամուլի, գրքերի և առանձին անձանց մուտքի արգելքը Վրաստան, որը որևէ արդարացում չունի:

Ի միջի այլոց, շատ լուրջ խնդիր կարող էր լուծել տարածաշրջանում հայ-վրացական կամ, որ նույնն է, վրաց-հայկական մի բարձրակարգ համալսարանի հիմնադրումը՝ երկուստեք որակյալ մասնագետներով, որը, բարձրագույն կրթությունից բացի, կարող էր հարթել նաև տարիներ շարունակ չարչրկված՝ վրաց լեզվի յուրացման կնճիռը և դաստիարակել Վրաստանի հայազգի լիարժեք քաղաքացիներ:

Կարևոր է նաև տարածաշրջանում նախադպրոցական հաստատությունների ցանցի ստեղծումը, որը, չնչին բացառություններով, գրեթե գոյություն չունի: Խորհրդային տարիներին գործող համակարգը վաղուց արդեն ավերվել է, իսկ փոխարենը ոչինչ չի ստեղծվել: Նույն անմխիթար վիճակում են նաև գրադարաններն ու մշակույթի տները: Այդ առումով քիչ թե շատ աշխատանք կատարում են Ախալցխայի կրթամշակութային կենտրոնն ու Վահրամ Գայֆեճյանի անվան միությունը, Ախալքալաքի գավառագիտական թանգարանը, շախմատի ու գեղարվեստի դպրոցները, Ջիվանու և Տերյանի տուն-թանգարանները: Առաջինը հիմնադրվել է 2016 թ.՝ Ջավախքին աջակցության հիմնադրամի (ՋԱՀ) նախաձեռնությամբ ու գումարներով, իսկ երկրորդը գործում է 1957 թ-ից, որի ցուցասրահը վերջերս նորոգվել է դարձյալ ՋԱՀ-ի ջանքերով:

Ի դեպ, ՋԱՀ-ը վաղուց ի վեր զբաղված է նաև մի հրաշալի նախաձեռնությամբ. «Արմաթ» ճարտարագիտական լաբորատորիաներ է հիմնում տարածաշրջանի տարբեր բնակավայրերում, ուր կարող են հաճախել նաև վրացի կամ այլազգի երեխաներ: Արդեն այդպիսի 9 լաբորատորիա է բացվել Ախալցխայում, Ախալքալաքում, Նինոծմինդայում, Դամալայում, Ախալցխայի շրջանի Ծղալթբիլա, Ախալքալաքի շրջանի Օլավերդ և Բեժանո, Նինոծմինդայի շրջանի Հեշտիա, Ծալկայի տարածաշրջանի Օզնի գյուղերում: Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Նկատենք, որ այսօր հույժ արդիական է մատաղ սերնդի տեխնոլոգիական կրթությունը, որն ըստ էության արմատավորվում է նաև Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:

Վրաստանը եղել ու մնում է Հայաստանի բարեկամ և գործընկեր երկիր, որի հետ կապված է բազմաթիվ կապերով: Այն այսօր Իրանի կողքին միակ երկիրն է, որով ՀՀ-ն կապվում է արտաքին աշխարհի հետ, և կենսական նշանակություն ունի ՀՀ-ի համար: Սակայն կան նաև առանձին հիմնախնդիրներ, որոնք երբեմն ուռճացվում են ազգայնական մղումներով, և որոնք ներկա աշխարհաքաղաքական պայմաններում մեծ հաշվով այնքան էլ էական չեն: Մեր երկու ժողովուրդներն, իրենց դարավոր իմաստնության ու գոյակցության ջահը բռնած, պիտի կարողանան իրենց հետագա ընթացքը փոխհամաձայնեցնել ու անհրաժեշտության դեպքում միմյանց զորավիգ լինեն, ինչպես ժամանակին դա արել են մեր նախահայրեր Հայոսն ու Քարթլոսը:

Մենք հակված ենք կարծելու, թե քանի դեռ հայկական ու վրացական կողմերի համար առանձին-առանձին չի հասունացել միմյանց սատար կանգնելու և միմյանց առավելագույնս աջակցելու պատմական պատասխանատվության գիտակցումը, նշանակում է՝ հայ-վրացական մեծ պայմանագիրը դեռ չի հասունացել: Չպետք է մոռանալ նաև, որ մեր քաղաքակրթության ակունքները նույնն են:

ՀՐԱՉՈՒՀԻ ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ

Հրապարակախոս, արձակագիր

ՊԱՐԶ-ԱՊՐԵՑՆՈՂ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԿԱՐՈՏ

Հրաչուհի Փալանդուզյանը ծնվել է 1951 թ. նոյեմբերի 20-ին, Վարդենիսի շրջանում: Ավարտել է Շամշադինի շրջանի Բերդ քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1975-ին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի լրագրության բաժինը: Աշխատել է շրջանային և հանրապետական թերթերում ու հանդեսների խմբագրություններում, հանրաճանաչ հաղորդաշարերում, 2005-2006 թթ.՝ ՀՀ մշակույթի ու երիտասարդության հարցերի նախարարությունում:

Հրաչուհի Փալանդուզյանին զարդարում էին խիզախ մտավորականի և սրտացավ քաղաքացու արժանիքները: Նրա հրապարակախոսական հոդվածները բողոք էին ամեն տեսակի անիրավությունների դեմ, ցավ ու մորմոք, բարեփոխության կոչ:

Դժբախտաբար, նրա կյանքի թելը կտրվեց 2022 թ. օգոստոսի 16-ին, երբ դեռ շատ բան ուներ տալու իր Ազգին ու Հայրենիքին:

«Հայկազուններ համահայկական միաբանությունը» վշտակցում է մեծ հայրենասերի՝ Հայկազունների սիրելի բարեկամ Հրաչուհու հարազատներին՝ նրա անժամանակ մահվան կապակցությամբ:

Իմ ծանոթներից ու մտերիմներից շատերն են հարցնում, թե ինչո՞ւ, հազարավոր կարճ մտքեր ու մտորումներ գրելով, մի տեսություն չեմ ստեղծում: Նկատի ունեն փիլիսոփայական ուսմունքը: Պատասխանում եմ, որ դա տղամարդու առաքելություն է, այն էլ՝ հանճարեղ տղամարդու, իսկ կանայք այդ հարցում առավել քան համեստ են:

Կեղծում եմ: Իրականում ես դա փորձել եմ անել:

Երբ գրածս մտքերի քանակը գերազանցեց 6000-ը՝մի հանդուգն կասկած ինձ դիվադադար արեց. միգուցե ես կարող եմ այդ ամբողջը համակարգել որպես տեսություն և գոնե դրանով իմ ազգակիցներին մի օգուտ ընծայել: Ուսմունք հասկացությունն ինձ ավելի հանդուգն թվաց. ես այն խոհեմաբար շրջանցեցի:

Նախ՝ անկեղծորեն խոստովանեմ, որ համալսարանում դիամատից ու պատմատից այնքան էի զզված, որ հետագայում որևէ ցանկություն չունեցա համաշխարհային իմաստունների գրքերին ծանոթանալու: Միակ մարդը, ում գործերը փնտրեցի և ընդամենը երկուսը գտա, Գեորգի Գյուրջիևն է: Ինքն էլ նախազգուշացնում է՝ իմ գրքերը կարդալու համար պետք է նախորդներին ծանոթ լինել, ապա՝ կարդալ երեքական անգամ. առաջին անգամ՝ հենց այնպես, երկրորդ անգամ՝ կարծես ուրիշի համար, ըստ որում՝ բարձրաձայն, և միայն երրորդ անգամ՝ ինքդ քեզ համար: Հազիվ թարգմանական խութերն էի հաղթահարում, ստացածս էլ կցկտուր տպավորություն էր, մի խոսքով՝ փիլիսոփայություն առարկայից բոբիկ եմ՝ ավազին վազվզող մանչուկի նման:

Սակայն գաղափարն ինձ հալածում էր, և ես ծրագիր կազմեցի: Դե իհարկե, անմիջապես հասկացա, որ նախաձեռնությունս, սկիզբ չառած, արդեն տապալված է: Համենայն դեպս որոշ մտահանգումներ արեցի, որոնք, կարծում եմ, ինձ նման արկածախնդիրների համար մի դռնակ կբացեն:

Երբ սկսում ես մտորել մարդկության մասին, փաստերը հիշողությունդ գնդակոծում են: Գոնե 13000 տարեկան քաղաքակրթության մասին ահագին նյութ կա: Ինչ է հասարակությունը, ինչ բաղկացուցիչներ ունի, ինչ է պետությունը... առաջին պատերազմները, տարածքների բաժանումներն ու նվաճումները, գիտական հայտնագործությունները: Ազգերի մասին ևս շատ տվյալներ կան. նրանց ստեղծած կամ գողացած արժեքները, ծիսական յուրահատկությունները և բազում այլ չափորոշիչներ:

Գիտակցությանդ դեմ պատը հառնում է, երբ ցանկանում ես հասկանալ, թե ինչ է մարդը: Իր մասին որևէ բան հայտնի չէ. ինչպե՞ս է գոյացել կամ որտեղի՞ց է եկել, ինչո՞ւ է ապրում, ո՞րն է իր կյանքի նպատակը, բոլո՞րը մահկանացու և խոցելի են, ինչո՞ւ են միմյանց ատում և սպանում:

Ի՞նչ է տիեզե՞րքը... Ահա հանելուկներից մեծագույնը:

Առնվազն 6000 տարի առաջ սեպագրված շումերական «Գիլգամեշ» էպոսում շարադրված է Աշխարհի արարման և բնակեցման առասպելական պատմությունը: Ահա Երկիր է գալիս տիեզերքի տիրակալի որդին՝ Էնկի աստվածը, ջրերից ստեղծում է կենդանի արարածներին, ապա իր չար եղբայր Էնլիլը ջրհեղեղ է նյութում, որ մարդկությանը ոչնչացնի, բայց Էնկին Ուիտնիպիշտիմ նահապետին խորհուրդ է տալիս տապան կառուցել և ջրհեղեղից փրկվել: Տեղին չէ մանրամասնել, որ Էնկի սեպախումբը կարդացվում է նաև Հայա և Էա, որ Ուիտնիպիշտիմը Նոյի բնատիպն է, որ շումերները հարավ իջած և այնտեղ նոր քաղաքակրթություն ստեղծած հայերն են և այլն:

Այս փաստն ինձ այլ մտորման է մղում. 6000 տարում մարդու պատկերացումները տեղից չեն շարժվել: Ժամանակակից գիտությունը տիեզերածնության մասին գրեթե նույնն է ասում, ինչ հաղորդում է Գիլգամեշի առասպելը: Ահա՛ այն. մոտ 450 000 տարի առաջ առաջին երկրաբնակները Նիբերու կամ Հայետոն-Ֆայետոն մոլորակից եկան Երկիր՝ ոսկի փնտրելու, գտան և որպեսզի այն արդյունահանեն, իրենց բջիջներից կենսապատճենեցին (կլոնավորեցին) մարդուն: Այն, ինչը գրեթե երկու հազարամյակ կոչվում է դրախտ, այլ բան չէ, քան՝ մարդու կլոնավորման փորձարան:

Հետո տեղի է ունենում պայթում, դրա հետևանքով ամբողջ քաղաքակրթությունն ու մարդկությունը ոչնչանում են, ապա փրկվածներն

աստիճանաբար վերականգնում են կորսվածը:

Կրկին չխոսենք այն մասին, որ եկվորների հանգրվանը եղել է Հայկական Լեռնաշխարհը, նրանք եղել են հայեր, այստեղ կլոնավորել են իրենց նմանակներին, որոնք հետագայում տարածվել են մոլորակով մեկ և ուսուցանել իրենց գիտելիքները: Մեր գիտնականները արիական հայկական մարդատեսակի ծնունդը հիմնավորող բազում ապացույցներ ունեն, մենք իրավամբ քաղաքակրթության բջջանյութն ենք: Սակայն կրկին դառնանք տիեզերածնությանը. մենք այդ մասին ոչինչ չգիտենք: Միայն այն, որ տիեզերքը չունի սկիզբ, չունի վերջ, ժամանակը ևս անսկիզբ է և անվախճան: Մեր աստեղատան, ինչպեսև մերձակա հարևանների մասին որոշակի տեղեկություններ աստղագետներն ստացել են, սակայն դրանք պատասխան չեն տալիս այն միլիարդավոր հարցերին, որոնք սերունդների միտքը անվերջ տանջում են:

Ի՞նչ ունենք 21-րդ դարասկզբին:

Անհասկանալի թափով զարգացող տեխնոլոգիաներ, որոնց կիրառմամբ կուտակվել են մարդասպան զենքերի վիթխարի պաշարներ, համացանց՝ ուղեղների լվացման անծայրածիր դաշտ, պատերազմներ և դրանց հետևանք բռնագաղթ, արյունալի ահաբեկչություններ… 20-րդ դարում ծնունդ առած ու փթթած հոռետեսական հակամշակույթը այս հազարամյակ փոխանցվեց որպես ատելություն բոլորի և միմյանց հանդեպ, հետևանքը՝ երրորդ սեռ…

Այլասերությունն ու սատանապաշտությունը փոխարինել են ինչ-որ ժամանակ գովերգված առաքինությանը, արդարությանը, վսեմությանը… Եթե բավարարվենք մեկ ձևակերպմամբ, դա կլինի հետևյալը. այսօր աշխարհում սփռված է բացասականի տիրապետությունը մարդկանց մտածողության, հոգեբանության և արարքների վրա:

Կան որոշ հանրություններ (Չինաստան, Հնդկաստան, Իրան և այլն), որոնք շարունակում են իրենց անխոռով ավանդապահությունը, բայց որևէ երաշխիք չկա, թե նրանք դա երկար կշարունակեն:

Տարօրինակ է՝մոլորակի մարդկանց այսօր միավորում է եսապաշտությունը՝ ես, ի՛մ ընտանիքը, ի՛մ երկիրը, ամեն գնով կարողանանք դիմանալ, ուրիշները թող Գրողի ծո՛ցն անցնեն: «Ընդհանրական» մտածողությունն այս սահմանից դուրս չի գալիս:

Ո՞ր փիլիսոփայությունը կարելի է կոչել 21-րդ դարի համամարդկային ուսմունք: Ովքե՞ր են նրա կերտիչները և տարածողները:

Չկա, գոյություն չունի մարդեղացնող ուսմունք: Կա համաշխարհայնացման ծրագիր՝ հղացված ԱՄՆ-ում: Դրա հիմնադիրը ծագումով ճապոնացի, ամերիկացի Ֆրենսիս Ֆուկույաման է, որը վերջերս եղերամայրի նման հեծեծաց, թե իրենք՝ ԱՄՆ-ում, ետ են գնում, քանի որ ազգային պետությունները զարգանում են:

Ժողովրդավարության մասին ճառերն էլ նախատեսված են ազգային պետությունների գաղտնիքները դուրս քաշելու և նրանց վերջնական ոչնչացումն ապահովելու համար:

Չեմ ուզում այս հրեշավոր դավադրության ծալքերը բացել, դրա որջը հայտնի անուն ունի: Համենայն դեպս հայտնեմ մի նկատառում՝ ամլության ներկա շրջանը վախճանվելու է, ինչպես նախորդ բոլոր ժամանակներում եղել է, որովհետև ով էլ նա լինի՝ Մայր Բնությո՛ւնը, թե՞ Ամենակարող Արարիչ, մաքրարյուն ազգերին այնպես է ստեղծել, որ նրանք ինքնածնվելու ծածկագիրը չեն կարողանա կորցնել, նույնիսկ եթե դա ուզենան:

Ծածկագիր ունեն նաև այդ ազգերի իմաստունները: Իրենք շուտով խոսելու են: Մեր մոլորակը տիեզերքի մի աննշան հյուլեն է, և գուցե պետք չէ, որ անվերջ ողբանք, թե անհունությունից ոչինչ չենք հասկանում, անհունությունն առեղծվածների շտեմարան է: Թող լինի. միևնույնն է՝ մե՛նք չենք կառավարում, մե՛նք չենք աստեղատների ճակատագիրը որոշում: Մերն այս փոքրիկ, օրհնյալ մոլորակն է, և ամեն ջանք պետք է թափենք, որ այն Հրատի (Մարսի) նման անմարդաբնակ չդառնա կամ Հայետոնի նման չպայթի:

Այդ նպատակի իրականացման համար փիլիսոփայական մեծ ուսմունքներ պետք չեն. դարերի ընթացքում ստեղծված խրթին, խճողված, ինքնանպատակ գաղափարները մարդուն չեն օգնել ավելի լավը դառնալ: Մեծ ծրագրեր

պետք չեն՝ բացի ազգերի ու պետությունների ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ դրույթից: Մնացածը կանեն հազարամյակներում թրծված կենսունակ ավանդույթները:

Այնքան բարդ են այս ժամանակները՝ վտանգներով լեցուն, կործանման ահով հագեցված, որ նման գաղափար պարզապես չի կարող չծնվել: Օտարահպատակ ֆրենսիսները նախ թող մտածեն իրենց ծնած ազգի մասին, ապա մյուս ազգերին ոչնչացնելու ծրագրեր նյութեն: Որովհետև երբ կրակը ճարակում է, ժամանակ չի ունենում հարցնելու՝ դո՞ւ, նա՞, ե՞ս, թե՞ մյուսը…

Արքայից արքա Արտաշես Բ-ն ու ներքին տականքը

Մեղավորությունս ընդունում եմ. եղել է ժամանակ՝ մեր ժողովրդի պատմությունն ընթերցել եմ որպես արկածային գրականություն, մանավանդ որ հայ պատմավիպասանները դրա հնարավորությունը լիառատ ընձեռել են: Այս վերջին երկու տարում, երբ սկսեցի օգտվել հարևան գրադարանից, որոշեցի նախ հայ պատմիչների մատյանները հիմնավորապես վերընթերցել: Բազմաթիվ հատվածներ անգիր գիտեմ, մյուսները ծանոթ են մերժման ու համակրության շեշտերով, իսկ նորությունն այն է, որ հերոսներին սկսեցի ոչ թե պատկերացնել, այլ… տեսնել:

Սարսափելի իրականություն է. միշտ պատահել է նույն աղետը, միշտ գտնվել է մի հայ, որը, թշնամուց կաշառվելով, չի վարանել ձեռքերը հարազատի արյան մեջ թաթախել: Գտնվել են մի քանիսը, ինչն արդեն ողբերգություն է: Ես ոչ մի կերպ չէի կարողանում այդ ուրացողների արարքների պատճառը հասկանալ: Հիմա որևէ գաղտնիք չկա. նրանք բոլորը, անկախ ապրած օրերից, տականք ու սրիկա են: Ընդ որում՝ անպատիժ մնացած:

Հիշում ենք: Հռոմեական կայսրության արյունարբու տիրակալներ Անտոնիոսն ու Կլեոպատրան Տիգրան Բ Մեծի որդուն՝ Արտավազդ Բ-ին ու նրա ընտանիքին գերելուց հետո պահանջեցին, որ հայոց շղթայակապ արքան կյանք աղերսի ու իրենց ստոր գործերը փառաբանի: Մերժման ու գլխատման փաստը համաշխարհային պատմագրության իրողություն է: Խոսենք հետոյի մասին: Արտավազդ Բ-ի որդիներից Արտաշեսը հաջողում է գերությունից փախչել ու հայրենիքում թագադրվել՝ որպես Արտաշես Բ արքայից արքա: Ինքը ևս մեծագործ առաջնորդ էր, որն ամրապնդեց իր տերության սահմանները, երկրում բարօրություն հաստատեց, բարեկամացավ հարևանների, առաջին հերթին պարթևների հետ: Հռոմն անզոր էր Արտաշես Բ-ի բանակին հաղթել ու իր գիշատիչ բնույթով սկսեց դաշնակիցներ փնտրել հայոց ներսում: Գտավ տականքների մի խմբի, որն էլ հաջողեց արքային գահընկեց անել ու սպանել:

Հայ տիրադավների ձեռքով սկսվեց Հայաստանի անկումը: Հռոմը մեկը մյուսի հետևից դրածոների էր ուղարկում: Բանը հասավ նույնիսկ վրացի արքայորդի Հռադամիզդին. սա նախ Գառնիում հարազատներին խեղդամահ արեց, ապա փախչելիս հղի կնոջը դանակահարեց ու Արաքսը գցեց: Նրան փրկեցին հայ հովիվները, ավելի ուշ Տրդատ Արշակունին, ստանձնելով հայոց գահը, իր պալատում վրացուհուն գրկաբաց ընդունեց:

Ինչպես բոլոր ժամանակներում, այդ տարիներին ևս Հայաստանում հայրենասեր ու պատվախնդիր հզոր միջուկ կար. դրածոները նրա ձեռքով մեկ առ մեկ մերժվում ու երկրից վռնդվում էին: Սակայն Արտաշիսյանների արքայատոհմը դադարեց դերակատար լինելուց, թեև իշխանության եկած Արշակունիները համարվում էին Արտաշիսյան զարմ: Գրեթե չորս դար էլ իրենք եղան Հայաստանի պետական գոյության երաշխավորը, ապա կրկին գործի դրվեց հայոց ներսում ծախվող դավադիրներ ներդնելու կործանարար սովորույթը:

Նայում եմ շուրջս ու ահաբեկվում. այսօր մեզ հետ նույնն է կատարվում. հայոց պետության դեմ գործի է դրվել հայ տականքը: Մտահոգիչն այն է, որ սա զինված է համացանցային գիտելիքներով, սրա համար արդեն հեռավորություն գոյություն չունի. տանը նստած՝ թե՛ դավաճանի իր աղտոտ հանձնարարությունն է կատարում, թե՛ վարձատրվում, թե՛ զանգվածների վրա հիպնոսաբար ազդում: Նողկալի դեմքեր են՝ մարդկային արտահայտությունից ու զգացմունքից զուրկ: Սրանցից յուրաքանչյուրը վաղն առանց

մի դժվարության կիայտնվի տերերի որջերում ու թրքաբար կհոխորտա իր պետության դեմ:

Ինչ ասես պարզունակ, խաբված զանգվածի մասին, որ ահարկու մռնչում է նմանների փրփրոտ ելույթների ներքո: Իրենք խղճալի էին աշխարհաքաղաքական աղետալի ծավալումներից առաջ, հիմա չափից դուրս վտանգավոր են: Բնականաբար, ասածս կմեկնաբանվի այսպես. ուզում ես համոզել, որ ամենավատ հայ ղեկավարը որևէ դրսեցուց լավ է:

Բայց այդպես չէ՞, մարդ Աստծո: Այսքան հազար տարվա հայոց պատմությունն ուրիշ բան է ասում: Չի՞ ասում, որ դրածոները միայն կործանել են, պառակտել են, այլասերել են, ու միայն մեր բնիկ հայ առաջնորդներն են երկրին տիրություն արել: Իրենք էլ են բացթողումներ ունեցել, մեկը սա է հաջողել անել, մեկը՝ այն, մեկը կարողացել է մարդկանց համար բարեկեցություն ապահովել, մյուսը թերացել է կամ չի հաջողել, բայց եղել է հայոց ամուր տունը՝ իր ազգային հազվագյուտ արժեքներով:

Հիմա էլ ահա անկախ պետություն ենք և ունենք բոլոր հնարավորությունները դառնալու հայության լիարժեք, ապահով հանգրվան: Դա է դժվարը, դա է կամք ու արիություն, խելք ու համբերություն պահանջում: Բողոքելն ու դրսից տղա կանչելը փոքրոգություն են, եթե չասենք՝ ստորություն: Ըստ որում՝ ամրակայվել է մի մտայնություն, թե միևնույն է՝ հայ դավաճանները չեն պատժվում, ուրեմն ամեն ինչ նրանց թույլատրելի է: Խաբկանք. դա չի կարող երկար շարունակվել, դրա միջոցը շուտով գտնվելու է:

Չնայած շուրջս կատարվող իրադարձությունների հակասականությանը, ես անկեղծ հավատում եմ, որ մեր մեջ, հենց այսօր կենդանի է Արտաշեսների, Տիգրանների, Արտավազդների, Արաների, մեր հերոս զորավարների, սահմանապահ զինվորի, հայ աշխարհազորի ոգին: Ոչ միայն հավատում եմ, այլև ուզում եմ հավատացնել: Բայց ավելի լավ կլինի, եթե դա անի յուրաքանչյուր ոք՝ մտովին ու բարձրաձայն վերլուծելով հայոց պատմությունն ու այն համադրելով մեր ապրած օրերի տրամաբանությանը:

Մենք պարտավոր ենք վերջնականապես հասկանալ, որ այս պայթուցիկ շրջափուլում պատմական նմանությունների կրկնությունը կանխելը հայոց ճակատագրի ամենավերջին հրամայականն է:

Իրերի բուն էությունը

Հին մտածողները հասարակությանը խորհուրդ էին տալիս ամեն ինչից վեր դասել իրերի բուն էությունը: Իրենք այդ հասարակության մտավոր վերնախավն էին և արդեն հայտնագործել էին իրերի բուն էությունը: Պարտադիր չէր, որ բոլոր մարդիկ դա կարողանային անել, հնարավոր էլ չէր. բավական էր, որ բոլորը գիտենային, թե ում հավատան:

Այսօր մենք մտավոր վերնախավ ունե՞նք, որի խոսքին սպասում ենք: Մերոնք ճառասացներ են. կա՛մ վարձատրվում են իշխանություններից ու նրանց գովքը ճառում, կա՛մ ծախվել են դրսի ստահակներին ու դարձել նրանց ստոր նպատակների տեղական թութակները: Ով էլ համարձակվում է սեփական միտք հայտնել, անմիջապես ընկնում է ստրկամիտների ծուղակը. սկսում են գլխներին զոռ տալ կռահելու համար, թե ում գաղտնի ծառան է: Որևէ մեկը չի պատկերացնում, որ նրա խոսքը կարող է լինել ինքնաբուխ ու դեռ անշահախնդիր: Այդպիսով ասպարեզից դուրս է մղվում իրերի բուն էությունը մատնացույց անողների փոքրիկ փաղանգը:

Բայց և այնպես կա մի խավ, որն անկախ կամեցող-չկամեցողների զանգվածից, գոյություն ունի և կազմում է ժողովրդի բուն միջուկը: Ինքը ճառեր չի արտասանում, անեծքներ չի թափում փրփուրը բերանին, չի ստում, չի մոլորեցնում, պարզապես ապրում է: Երեկ մի մտավորական-փորձագետ աղքատ ապրող ընտանիքի երեխաների վերաբերյալ այսպիսի «դատավճիռ» արձակեց. «Վաղը նրանք իրենց հայրենիքը չեն սիրելու»: Այդ երեխաներն իրենց ծնողներին, քույր-եղբայրներին արդեն սիրում էին՝ ձեռքով լվացք անելով, ճաշ եփելով, տուն մաքրելով, լավ սովորելով. Հայրենիքն ինչպե՞ս կարող են չսիրել:

Այդ դատարկագլուխներն են Հայրենիքն անաշխատ բարիքների համար սիրում, իսկական հայրենասերները Հայրենիքին ծառայում են լուռումունջ: Ես համոզված եմ, որ այդ չքավոր երեխաներն իրենց հոգում այնպիսի բարիքներ

են կրում, որոնց մասին ոչ մի փիլիսոփա կամ քաղաքական գործիչ գաղափար անգամ չունի: Համոզված եմ, որ Հայրենիքում հպարտ հոգով ապրելն է իրերի բուն էությունը:

Երբ դու նախանձում ես համակուրսեցուդ, որ նա բարձր պաշտոն է զբաղեցնում, իսկ դու հասարակ ծառայող ես մնացել ու ամբողջ ուժով պայքարում ես նրան ու նրա շրջապատին պաշտոնազուրկ անելու համար, դա հենց մարդկային չնչինության դրսևորում է, դրա մեջ ո՛չ վեհություն կա, ո՛չ էլ, մանավանդ, ժողովրդավարություն, որն այդքան եռանդով թմբկահարվում է:

Իրերի բուն էությունը մարդուն սովորեցնում է մեծահոգությամբ վերաբերվել իր նմանների հաջողություններին և խստությամբ՝ թերություններին: Խստությունն ամենևին դաժանություն չի ենթադրում. դա արդարության չափորոշիչ է, որը միշտ պետք է գերիշխի Հայրենիքում:

Այն շինականը, որն, հայրենիքի սահմանամերձ հանդում կով պահելով կամ ցորեն աճեցնելով, պակաս չի ծառայում, քան՝ իր զինվոր որդին, մեր օրերի ամենաշիտակ վերնախավն է: Ո՛ր վայրկյանին նրան հարցնես, թե ինչն է իրերի բուն էությունը, նա առանց երկար մտածելու կպատասխանի՝ իմ հայրենիքում ապրելը:

Հենց դրանով էլ ոչինչ կդառնան բոլոր ճառասացների, նրանց ընդդիմացողների, լրտեսների ու դավաճանների ստերը, թե պետք է լինի մի հատուկ վերնախավ՝ մտավորականությունը, որը պետք է որոշի Հայրենիքի բախտը: Հայրենիքի բախտը որոշում են նրանք, որոնք հասկացել են իրերի բուն էությունը:

Դրա համար կրթություն, առանձին շնորհներ, մեծամեծ պատիվներ հարկավոր չեն: Բարեբախտաբար նրանք շատ են՝ մի ամբողջ ժողովրդի մի ամբողջ միջուկ: Նրանք խոսքեր չեն ասում, նրանք գործեր են անում:

Ազգերը դեռ չեն ճանաչել հայը, որ իր պետության անկումից հետոյ իսկ մնաց արժեքաստեղծ, օտար զահերին թագակիրներ, բանակներին յաղթական զորավարներ, երկրներին բարեկարգիչներ, արվեստներին ու գրականության հանճարեղ վարպետներ տալով: Իր բնաշխարհում թե իբև տարագիր՝ նա եղավ ստեղծագործ, որով և յաղթական կանգնեց ժամանակների ու մահվան դեմ ու հաճախ իր հանճարի լույսով լուսավորեց հավիտենականի բարձունքները: Նա գիտցավ արժեքագործել և դրանով հաստատեց երեք բան– այն՝ որ մեծ, շատ մեծ է իր հոգևոր զորությունականությունը, որ անխաթար է իր կենսաբանական բարոյականը, որ ընդունակ է իր ճակատագրի հանդեպ եղած անարդարությունները հատուցել մարդկությանը բերած իր ծառայություններով:

Ռաֆայել Համբարձումյան, «Գարեգին Նժդեհ (Համառոտ վարք, ասույթներ և կենսագրություն, 2008 թ.)», էջ 146:

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Գրող, ազատամարտիկ

Հատված Հովիկ Վարդումյանի, «Հավերժական շարժում» վեպից (Երևան, էդիթ պրինտ, 2020, էջ 110-114)

Հայոց Միտանիի թագավորի պատվիրակը ժամանեց Եգիպտոսի մայրաքաղաք Թեբե: Ինչպեսև սպասվում էր, արքունիքում նրան շատ ջերմորեն ընդունեցին: Թագուհին կարոտել էր հայրենիքը: Հաճախակի էր երազում տեղափոխվում այնտեղ, զբոսնում դրախտային այգիներում, երեսը շփում լեռնային վճիտ աղբյուրների սառնորակ ջրով: Հայրը լավ գիտեր աղջկա նախասիրությունները, նրա համար քաղցրահամ պտուղներ և կավե ամաններով աղբյուրի ջուր էր ուղարկել: Մինչ ճանապարհից հոգնած պատվիրակը գնաց հանգստանալու, Թիան մեկ առ մեկ համտեսում էր հայրենիքից ուղարկված մրգերը և մտքով հասնում այնտեղ: Հատկապես հաճելի էր իր հայրենիքում աճող ծիրանը: Այն եգիպտացիներն այնքան էին հավանել, որ «Ոսկե ծիրան» անունով կնքեցին: Ապա մտավ մատուռ և, ծնկի գալով, գոհություն հայտնեց Արարչին…

Հաջորդ օրը փարավոնն ընդունեց պատվիրակին, հարց ու փորձ արեց եղբայր թագավորի ու նրա երկրի մասին: Պատվիրակը ոսկե սկուտեղի վրա մատուցեց թագավոր Տուշրատայի նամակը և խոնարհվեց փարավոնի գահի առաջ: Պալատական գրագիրը բարձրաձայն կարդաց Հայոց թագավորի նամակը. «Դու իմ լավ բարեկամն ես: Օգնիր, ոսկի ուղարկիր՝ պատերազմական ծախսերը հոգալու համար…»:

Ամենհոտեբ 3-րդն արդեն ծեր էր: Սակայն նրան հասել էր եղբայր թագավորի դստեր՝ Տադու Հեպայի խելքի ու գեղեցկության համբավը: Որոշեց օգտագործել առիթը և կնության առնել Հեպային՝ խոստանալով փոխարենը շատ ոսկի ուղարկել:

Հազարամյակներ առաջվա բարքերն այլ էին: Ամենհոտեբ 3-րդը գիտեր, որ Տուշրատան չի կարող միանգամից տալ համաձայնությունը: Նա դեսպանորդների ուղարկեց Հայոց աշխարհ, որոնք իրենց հետ տարան ոսկի և դստեր ձեռքը խնդրելու առաջարկը: Փարավոնի դեսպան Մանեն, վերադառնալով Միտանիից, հիացած նկարագրեց արքայադստեր բարեմասնությունները: Ծերունազարդ փարավոնը սիրահարվեց հայոց արքայադստերը: Մանեն նորից գնաց Հայոց աշխարհ, նորից ոսկի տարավ հետը և պնդեց փարավոնի առաջարկը:

Դեսպանորդների բազմաթիվ փոխայցելութ-

յուններից հետո, վերջապես համաձայնության եկան: Արքա Տուշրատան կարգադրեց դստեր համար օժիտ պատրաստել, ինչը վեց ամիս տևեց:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, հայոց արքան համբուրեց դստեր ճակատն ու ճանապարհեց փարավոնների երկիր: Նա իր հետ օժիտ էր տանում ոսկե ու արծաթե իրեր, արծաթապատ կառքեր՝ իրենց ձիերով, ոսկով ու գոհարներով զարդարված աղեղներ և այլ զենքեր... Հատկապես գնահատելի էին երկաթե շեղբով դաշույններն ու այլ իրերը: Բայց փարավոնին ամենից շատ ուրախություն պարգևեց Հավլունի թուրը, որը թագավորների ու զորավարների երազանքն էր... Անհասանելի երազանքը: Հայերը վաղուց գիտեին այդ աստվածատուր պարգևը, որը, որպես պետական գաղտնիք, պահվում էր յոթ փականքների հետևում: Հանքաքարից երկաթ ստանալու եղանակը դարեր առաջ իրենց սովորեցրել էր Պրոմեթևսը, ում հայերը պաշտում էին, որպես անմահի, և այդ մետաղն անվանել էին երկաթ՝ երկնքից կաթած, երկնքից իջած նվեր: Դարերի ընթացքում փորձով ու գիտությամբ հայերը հաջողել էին այնպիսի համաձուլվածք ստանալ, որը շատ ճկուն էր ու անհավատալի ամուր: Մի հարվածով այն կտրում էր տարբեր մետաղներից պատրաստված զրահներն ու սրերը և չէր վնասվում, ոչ էլ՝ բթանում: Միևնույն ժամանակ այդպիսի թուրը գոտու նման կապում էին մեջքներին:

Արքայադստեր հետ Եգիպտոս գնաց մի քանի հարյուր կին: Նաև պաշտամունքի ծիսակատարությունների համար մի մատուռ տարան: Հայոց արքայադուստրը պետք է օտար երկրում շրջապատված լիներ ազգակից կանանցով, իր ազգային Աստծուն աղոթեր իր սեփական մատուռում, պահպաներ հարազատ լեզուն ու հավատքը:

Քրիստոսից առաջ 1410 թվականին հայոց արքայադուստր Տադու Հեպան՝ իրեն ուղեկցողների հետ, հասավ Եգիպտոսի մայրաքաղաք: Արդեն աշուն էր: Դեղնած տերևների ու չորացած խոտի գույնը խառնվել էր ավազների անծայրածիր օվկիանոսին՝ ավելի թանձրացնելով շրջապատի ժանգագույնը: Սակայն քաղաքի բնակչությունը ցնծությամբ դիմավորեց նոր թագուհուն: Կյանքի վերջալույսն ապրող փարավոնը մեծ ընդունելություն էր կազմակերպել: Քաղաքի դարպասներից մինչև թագավորական պալատ ճոխ սեղաններ էին գցված: Հարուստներն ու աղքատները միասին խրախճանք էին սարքել: Ծեր փարավոնի երիտասարդ կնոջ գեղեցկությունն այնքան գերեց բոլորին, որ նրան անվանեցին Նեֆերտիտի, ինչը նշանակում էր՝ «գեղեցկուհին եկավ»:

Հայաստանից եկած գեղեցկուհի թագուհին ջերմություն ու երջանկություն բերեց եգիպտական արքունիք: Բայց Ամենհոտեբ 3-րդը ծեր էր ու հիվանդ, այդպես էլ չկարողացավ վայելել Արարչից իրեն տրված երջանկությունը:

Քրիստոսից առաջ 1409 թվականին գահ բարձրացավ Ամենհոտեբ 3-րդի որդին՝ Ամենհոտեբ 4-րդը: Դեռ հոր կենդանության ժամանակ նա չէր կարողանում աչք կտրել գեղեցկուհի Նեֆերտիտիից: Հայուհու անբնական հմայքը կախարդել էր: Հորը հուղարկավորելուց հետո Ամենհոտեբ 4-րդը մահվան լուրն անմիջապես ուղարկեց Միտանիի արքա Տուշրատային: Փարավոնի դեսպանորդը, մի քանի օրվա ճանապարհ կտրելով, հասավ Խուրրի-Միտանիի մայրաքաղաք Ուռհայ: Լրաբերը միաժամանակ նամակ էր բերել հայոց թագավորին, որտեղ նշված էր, որ նոր փարավոնը ցանկանում է շարունակել հոր սկսած բարեկամությունը: «Որոշել եմ Տուշրատայի դստերը՝ Տադու Հեպային, ընդունել իմ կանանոցը՝ իբրև իմ կնոջ, որպես իշխանուհու հարավի և հյուսիսի, տիրուհու երկու երկրների»: Հայոց թագավորին ձեռնտու էր նման առաջարկը, և նա տվեց իր համաձայնությունը: Նեֆերտիտին դարձավ Ամենհոտեբ 4-րդի կինը՝ զարդարելով նրա կանանոցը և գրավելով առաջին տեղը:

Ամենհոտեբ 4-րդի վրա մեծ ազդեցություն ունեին հայազգի մայրը՝ Թիան, և Տադու Հեպան: Նրանք Եգիպտոս էին բերել իրենց նախնիների՝ հայ արմենների Արարիչ Ար Աստծու և Արև Աստծու պաշտամունքը: Եգիպտոսի քրմերն անհանգստացած էին երիտասարդ, ուժեղ փարավոնի աշխարհայացքի փոփոխությունից, սակայն իշխանություն չունեին նրա վրա: Օրեցօր փոխվում էին Եգիպտոսի դարավոր սովորույթներն ու պաշտամունքի ծեսերը, ինչից դժգոհության փոթորիկ էր հասունանում:

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Մ.թ.ա. VI դ. ՍԿԶԲԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԻՑ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ

Մեր թվարկության 7 թվականի մոտերքը գրված Պոմպեոս Տրոգոսի «Historiae Philippicae» պատմական երկում (XLII, 2, 8) կարդում ենք. «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության կողքով (ինչպիսին Հայաստանն է), քանի որ նրա սահմանները, Պարթևաստանից հետո, իր մեծությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմաններին, ընդ որում, Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնևմեկ հարյուր հազար քայլ տարածություն ունի, իսկ լայնքով, նրա երկարությունն է՝ յոթ հարյուր հազար քայլ» (XLII, 2, 7-9)[29]:

Գերմանացի հայտնի հնագետ Հայնրիխ Շլիմանը (1822-1890), որը զբաղվել է Հոմերոսի «Իլիական»–ից քաջ հայտնի Տրոյայի պեղումներով, իր օրագրում գրել է. ***«Ամբողջ եվրոպական մշակույթն իրեն համարում է հին հունական և հռոմեական քաղաքակրթությունների ժառանգորդը, չգիտակցելով, որ երկուսն էլ, իրենց հերթին, ծագում են հին հայկական քաղաքակրթությունից»***:

Հին աշխարհում հայերը մասնակցել են չարիքի կայսրության՝ Ասորեստանի կործանմանը: Մինչ այժմ հայ ժողովրդի պատմության մեջ այս հարցը լուսաբանվել է միայն հույն հեղինակ Հերոդոտի (Հերոդոտ Հալիկառնասցի (մոտ մ.թ.ա. 484-425 թթ.)) խառնաշփոթ մեկնաբանությամբ: Ներկա հրապարակման մեջ կանդրադառնանք մի այլ հույն հեղինակի՝ Դիոդոր Սիկիլիացու (մոտ մ.թ.ա. 90-30 թթ.) «Պատմական գրադարան» աշխատությանը, որտեղ հեղինակը ավելի ամբողջական է արտացոլել պատմական իրողությունը:

Ուշագրավ է, որ Դիոդորին բարձր է գնահատում հենց Մովսես Խորենացին, որը իր «Հայոց պատմության» երրորդ գիրքը սկսում է նրա հիշատակումով. «Ո՛չ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, ...նա և ոչ մատենագրութիւնք Դիո-

[29] «Sed quoniam in Arrneniam transitum facimus, origo eius paulo aitius repetenda est. Neque enim silentio regnum tantum praeteriti fas est, cum fines post Parthiam omnium regnorum magnitudinem seperent, siquidem Armenia a Cappadocia usque mare Caspium undecies centum milia patet, sed in latitudinem milia pasuum septingenta porrigitur» – Justini M. Juniani, Epitoma historiarum Philippicarum **Pompeii Trogi**, ex recens. Fr.Ruehl, Lipsiae, 1915. XLII, 2.

դորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնաւն, ... հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի ... ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց»[30]:

Դիոդոր Սիկիլիացին անհամեմատ ավելի լայնորեն է լուսաբանում Ասորեստանի թագավորության և Նինվեի կործանման պատճառները: Սարդանապալը առասպելական թագավոր է՝ ըստ ավանդության երեսուներորդը մ.թ.ա. IX դարի սկզբին Ասորեստանում կարճ թագավորած Նինոսից, և կառավարել է Հռոմի հիմնադրումից (մ.թ.ա. 753 թ.) 64 տարի հետո՝ այսինքն՝ 689 թվին: Ինչպես գրում է Դիոդորը, (23,1) «Սարդանապալոսը ... իր բոլոր նախորդներին գերազանցեց իր ցոփությամբ ու ծուլությամբ: Քանզի նա դրսից ոչ ոքի չէր երևացել և (պալատում) ապրել էր կնոջ կյանքով և, իր օրերն անցկացնելով վարձակների հետ, ծիրանի էր գործում և փափկագույն բուրդ մանում, հագնում էր կանացի զգեստ, իսկ դեմքն ու ամբողջ մարմինը խնամում էր սպիտակեցնող շպարներով և հետերաների օգտագործած այլ օծանելիքներով, և (մաշկը) դառնում էր առավել նուրբ, քան՝ որևէ քնքուշ կնոջ: Նա մեծապես ջանաց նաև իր ձայնը կանացի դարձնել և խրախճանքների ժամանակ ոչ միայն մշտապես անձնատուր էր լինում առավելագույն հաճույք պատճառելու հատկություն ունեցող խմիչքների և ուտելիքի, այլև հետապնդում և՛ այրի, և՛ կնոջ պատճառած սիրային հաճույքները վայելել. քանզի նա անսանձ կերպով կենակցում էր երկու սեռերի հետ՝ բոլորովին էլ չմտածելով այդպիսի վարքի անպատվության մասին: Նա այնքան հեռու գնաց իր ցոփության և ստորագույն վայելքների, ինչպես նաև անսանձության մեջ, որ ինքը իր համար դամբանական գրեց և պատվիրեց իր գահի ժառանգներին իր մահից հետո գերեզմանի վրա փորագրել այդ տողերը, որ հյուսել էր բարբարոսների լեզվով, իսկ հետագայում մի հելլեն այն թարգմանեց (հունարեն) ... Ահա նա այսպիսի բնավորությամբ ոչ միայն ինքը ամոթալի կերպով խորտակեց իր կյանքը, այլև վերջնականապես կործանեց ասորեստանյան տերությունը, որը (պատմությանը) հայտնիներից ամենաերկարատևն էր եղել»:

Մովսես Խորենացին ծանոթ է եղել Սարդանապալի վերը բերված բնութագրին և դրա համար էլ նրան անվանում է «Թոնոս Կոնկողեռոս» և այս հունարեն երկու բառով նկատի ունի նրա «զանմարդի բարս և զհեշտասէր թուլամորթութիւն յուլութեան»:

Առասպելական Սարդանապալից հետո Ասորեստանը ունեցավ ևս մի քանի թագավոր, որոնցից վերջընթերը Աշշուրբանիպալն էր (մ.թ.ա. 668-633 թթ.). շվայտ կենցաղավարման և ցոփ վարքի հետ միասին, ժամանակակիցները նշում են նաև գիտության զարգացման տարբեր ճյուղերում Աշշուրբանիպալի ունեցած դերը: Բայց Սարդանապալի պատմական նախատիպը եղել է Ասորեստանի վերջին թագավոր Սին–շար–իշկունը՝ Աշշուրբանիպալի որդին (մ.թ.ա. 629-612 թթ.), որն էլ, ըստ երևույթին, զոհվել է Նինվեի կործանման ժամանակ մ.թ.ա. 612 թվին, ինչպես նշվում է՝ անհայտ հանգամանքներում:

Դիոդոր Սիկիլիացին իր «Պատմական գրադարանում» Ասորեստանի դեմ Մեդիայի զորավար Կյուաքսարեսի և նրա գործակիցների ապստամբության մասին պատմելիս օգտվել է Կտեսիաս Կնիդացու (ծնվ. մ.թ.ա. մոտ 441 թ.) «Պարսկականք» («Περσικά») աշխատությունից, որը բոլորովին տարբեր է Հերոդոտի պատմածից, տարբեր են նաև ապստամբությանը մասնակցած գործիչների անունները:

Եվ, որ կարևոր է, այս բոլորին ծանոթ է նաև մեր Պատմահայրը՝ Մովսես Խորենացին, որից էլ կսկսենք այդ ապստամբության պատմությունը, որ գլխավորում էր, ըստ Կտեսիասի, մեդացի զորավար Արբակեսը (Խորենացու մոտ՝ Վարբակէս), իսկ Հերոդոտը և Քսենոփոնը նրան կոչում են Կյուաքսարես. այս անունը գիտե նաև Խորենացին՝ Կեաքսարէս ձևով. «Քանզի Վարբակէս գաւառաւ մեդացի, ի փոքունց կողմանց ի ծագաց գաւառին ամրագունի, խորամանկագոյն ի կենցաղավարութեան և ի մարտս երեսաւոր (հանդուգն, քաջասիրտ – Ա.Մ.)... խտացուցանէ բարուցն և ձեռացն առատութեամբ ի քաջաց և ի պիտանեաց արանց բարեկամս, որովք և աշխարհակալութիւնն Ասորեստանի առ այնու ժամանակաւ վարիւր յայտնապէս մեծաւ հաստատութեամբ: ...Եւ բազում ամբոխս արի արանց, և

[30] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Գ, Ա, էջ 257-258:

որք ի տէգ նիզակի և յաղեղն և ի սուսեր աջողաձեռնագոյն՝ գումարէ. և այսպէս զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի: Բայց վերակացու զայլս թողլով Ասորեստանի՝ փոխէ զթագաւորութիւնն ի Մարս»[31]:

Զորավար Վարբակեսի ապստամբության մասին կարևոր մանրամասներ է հաղորդում Կտեսիաս Կնիդացին, որոնք բացակայում են Մ.Խորենացու երկում. (24,1). «... ոմն Արբակես, ծագումով մեդացի, որը հայտնի էր իր քաջությամբ և հոգու պայծառությամբ, զորավարն էր այն մեդացիների, որոնք ամեն տարի ուղարկվում էին Նինոս (քաղաք): Զորքում նա մտերմացավ բաբելոնացիների զորավարի հետ, որը նրան դրդեց ասորեստանյան տերությունը տապալելու: Նրա անունն էր Բելեսիուս, և նա ամենահայտնին էր քրմերից, որոնց բաբելոնացիները կոչում են քաղդեացիներ: Ու քանի որ նա խորապես հմուտ էր աստղագիտության և գուշակության մեջ, ուստիև անսխալ կերպով կանխագուշակում էր շատերի ապագան: Եվ որովհետև այդ պատճառով նա հարգված էր, իր հետ բարեկամացած մեդացիների զորավարին գուշակեց, որ սա անպայման պետք է թագավորի բոլոր այն երկրների վրա, որտեղ տիրում է Սարդանապալոսը: Իսկ Արբակեսը, գովաբանելով այդ մարդուն, խոստացավ նրան Բաբելոնիայի սատրապությունը, երբ գործը հասնի իր ավարտին, մինչդեռ ինքը, ասես ինչ-որ աստծու պատգամից ոգևորված, մյուս ազգերի առաջնորդների հետ դաշնակցում էր և բոլորին ջանասիրաբար հրավիրում էր խնջույքների և հավաքույթների՝ յուրաքանչյուրի հետ բարեկամություն հաստատելով: Նա որոշեց նաև երես առ երես տեսնել թագավորին և հետևել նրա ամբողջ ապրելակերպին: Այդ նպատակով նա, ներքինիներից մեկին ոսկե բաժակ պարգևելով, առաջնորդվեց Սարդանապալոսի առաջ, ու երբ նա մոտիկից ականատես եղավ նրա ցոփ կյանքին և կանացի զբաղմունքների նկատմամբ նրա սիրուն, արհամարհեց թագավորին, իբրև բոլորովին անարգ մարդու, առավել ևս կառչեց քաղդեացու կողմից իրեն տրված հույսերին: Ի վերջո նա դավադրություն նյութեց Բելեսիուսի հետ, այն պայմանով, որ ինքը պետք է ոտքի հաներ մեդացիներին և պարսիկներին, մինչդեռ վերջինս պետք է համոզեր բաբելոնացիներին հաղորդակից դառնալ այդ գործին և ստանար իր բարեկամի՝ արաբների առաջնորդի օժանդակությունը, դրանով իսկ ստանձնելով հսկողությունը բոլորի վրա:

Երբ լրացավ զորքում մնալու մեկ տարվա ժամկետը և արդեն նրանց փոխարինելու եկան նորերը, նախկինները, ընդունված կարգի համաձայն, արձակվեցին իրենց երկրները, այնժամ Արբակեսը համոզեց մեդացիներին հարձակվել (Ասորեստանի) թագավորության վրա, իսկ պարսիկներին՝ իրենց ազատության համար հաղորդակից լինել դավադրությանը: Նույն եղանակով Բելեսիուսը ևս համոզեց բաբելոնացիներին պայքարել իրենց ազատության համար և, դեսպանություն ուղարկելով Արաբիա, իր կողմը գրավեց տեղաբնակների առաջնորդին, որն իր բարեկամն էր և կապված էր իր հետ փոխադարձ հյուրընկալությամբ, որպեսզի մասնակցի հարձակման: Մեկ տարին լրանալուց հետո այս բոլոր առաջնորդները բազում զորք հավաքեցին և լրիվ կազմով եկան Նինոս, առերևույթ, սովորության համաձայն, փոխարինողներին բերելով, բայց իրականում ասորեստանցիների տիրապետությունը տապալելու համար: Ու երբ այս վերոհիշյալ ազգերը գումարվեցին միևնույն վայրում, նրանց ընդհանուր թիվը հասավ քառասուն բյուր մարդու, նրանք, հավաքվելով մեկ զորակայանում, խորհրդակցեցին գործողության լավագույն ծրագրին ի խնդիր»[32]:

(25,1) «Սարդանապալոսը, տեղեկանալով ապստամբության մասին, իսկույն նրանց դեմ դուրս բերեց մյուս ազգերից հավաքված զորքերը: Եվ սկզբում, երբ բաց դաշտում ճակատամարտ տեղի ունեցավ, ապստամբները պարտվեցին և, բազում զոհեր տալով, նահանջեցին Նինոսից յոթանասուն ասպարեզ հեռու գտնվող մի լեռ: Այնուհետև, սակայն, երբ նրանք նորից իջան դաշտ և պատրաստվեցին ճակատամարտելու, Սարդանապալոսն իր զորքը դասավորեց նրանց շարքերի դեմ և քարոզներ ուղարկեց թշնամու զորակայանը (հաղորդելու), թե

[31] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԱ(ԻԲ), էջ 65:

[32] Հին հունական աղբյուրներ, Բ, **Դիոդորոս Սիկիլիացի**. թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ Ս. Մ.Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1985,էջ 32-34:

«Սարդանապալոսը մեդացի Արբակեսին սպանողին կտա երկու հարյուր ոսկե տաղանդ, իսկ նրան կենդանի հանձնողին պարգև կտա կրկնակի այդչափ և միաժամանակ նրան կհաստատի Մեդիայի կառավարիչ»: Նույնպիսի պարգևներ խոստանում էր նաև բաբելոնացի Բելեսիուսին սպանողին կամ կենդանի բերողին: Բայց քանի որ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա այդ հայտարարություններին, նա ճակատամարտ տվեց և ապստամբներից շատերին սպանեց, իսկ մնացած բազմությանը հալածեց դեպի լեռներում գտնվող նրանց զորակայանը:

Եվ Արբակեսի մեծավորները, որոնք պարտության հետևանքով վիատվել էին, նրա մտերիմներին հավաքեցին խորհրդի, որոշելու, թե ինչ պետք է անել: Այնժամ նրանցից շատերն ասացին, թե պետք է հեռանալ իրենց երկրները և, ամրացված կետերը վերցնելով, ինչքան հնարավոր է պատերազմի համար անհրաժեշտ ամեն ինչ պատրաստել: Բայց Բելեսիուս բաբելոնացին պնդելով, որ աստվածները նշաններով հայտնել են, թե իրենք ջանքերով ու դժվարություններով կկարողանան իրենց ձեռնարկածը հաջողությամբ ավարտել և, ամեն կերպ քաջալերելով նրանց, բոլորին համոզեց մնալ և դիմագրավել վտանգները: Եվ երբ արդեն տեղի ունեցավ երրորդ ճակատամարտը, դարձյալ թագավորը հաղթեց և գրավեց ապստամբների զորակայանը և պարտվածներին հալածեց մինչև Բաբելոնիայի սահմանները, ու պատահեց, որ Արբակեսը ևս, որ ամենափայլուն կերպով կռվել էր և ասորեստանցիներից շատերին սպանել, վիրավորվեց: Ու քանի որ ապստամբները իրար ետևից այդքան շատ վնասներ էին կրել, նրանց առաջնորդները, կորցնելով հաղթանակի ամեն մի հույս, պատրաստվում էին յուրաքանչյուրը մեկնել իր հայրենի երկիրը: Բայց Բելեսիուսը, որ գիշերը բացօթյա անքուն էր անցկացրել և զբաղվել էր աստղերը դիտարկելով, դեպքերի նման ընթացքից հուսահատվածներին ասաց, որ «եթե հինգ օր դիմանաք, ապա օգնությունը կհասնի ինքնաբերաբար, և ամբողջ իրադրության մեջ հսկայական փոփոխություն կլինի դեպի հակառակ վիճակը, քանզի աստղերը դիտարկելու՝ իմ հմտության հետևանքով ես դրանցում տեսնում եմ աստվածների կողմից ձեզ տրված պատգամները»: Եվ նա կոչ էր անում նրանց սպասել այդ օրերին և փորձել իր հմտությունը և աստվածների բարեգործությունը»[33]:

(26,1) «Երբ այդպիսով բոլորը ետ կանչվեցին և սպասեցին պայմանավորված ժամանակը, մի (լրաբեր) ժամանեց հաղորդելով, թե Բակտրիանե (երկրից) թագավորին (օգնության) ուղարկված մի զորամաս արդեն մոտեցել է և առաջանում է արտորալով: Ուստի նրանք որոշեցին, որ Արբակեսը ամենակարճ ճանապարհով գնա հանդիպելու նրանց զորավարներին, իր հետ վերցնելով զինվորներից լավագույններին և առավել ճարպիկներին, որպեսզի եթե խոսքերով չկարողանան համոզել բակտրիացիներին միանալու ապստամբությանը, ապա զենքի ուժով ստիպեն նրանց հաղորդակից լինել իրենց հույսերին»[34]:

Ցավոք, օտար հեղինակները այստեղ զլացել են անդրադառնալ, կամ այլ պատճառով մոռացության է տրվել Արմե-Շուպրիայի կառավարիչ Պարույր Սկայորդու մասնակցությունը Ասորեստանի դեմ ձեռնարկվող ապստամբությանը: Ինչպես տեսնում ենք, վերջին պահին ապստամբներին միանում է Պարույր Սկայորդու գլխավորած հայ–պարթևական զորախումբը, որը ժամանում է Բակտրիանեից (հայկական աղբյուրներում հաճախակի հիշված Բահլ քաղաքից), և բացահայտվում է նաև, որ առաջին հայոց Արշակունի թագավոր Վաղարշակ Պարթևի (մ.թ.ա. 132-110 թթ.) նախնիները հայոց թագավորների հետ առնչվել են դեռևս մ.թ.ա. VII դարում: Խորենացին հատկապես ընդգծում է, որ Պարույր Սկայորդուն ապստամբության մեջ ներգրավել է անմիջապես զորավար Վարբակեսը, և միայն Պարույրն է ապստամբների մեջ արժանանում Արմե–Շուպրիա[35] երկրի թագավորի գահին. «Յինքն և զքաջն մեր նախարար յանգուցանէ (իր կողմն է գրավում) զՊարոյր, թագաւորութեան շուք և ձև նմա խոստանալով»[36]:

Պարույր Սկայորդու անունը և նրա մասնակցությունը Ասորեստանի Սարդանապալլ թագավորի կործանմանը հիշատակում է Մար Աբաս Կատինան իր Մատյանում, որից օգտվել է Մովսես

[33] **Դիոդորոս Սիկիլիացի**. էջ 34-35:
[34] **Դիոդորոս Սիկիլիացի**. էջ 35:
[35] Արմե–Շուպրիա երկիրը համապատասխանում է Սասնա լեռների տարածքին:
[36] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԱ(ԻԲ), էջ 65:

Խորենացին «Հայոց պատմության» մեջ. «Թողլով զոչ կարևորագոյնսն ի բանից՝ ասասցուք որ ինչ հարկաւորն է: Վերջին սոցա, որք առ Ասորեստանեայց թագաւորութեամբն և որք ի Շամիրամայ և կամ թէ ի Նինոսէ՝ զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ»[37]:

(26,3) «Ի վերջո, (բակտրիացիները) ուրախությամբ արձագանքեցին ազատության կոչին, նախ առաջնորդները, ապա նաև ամբողջ զորքը, որից հետո նրանք բոլորը բանակեցին միևնույն վայրում:

Այդ ժամանակ պատահեց, որ ասորեստանցիների թագավորը, անգիտանալով բակտրիացիների ապստամբության մասին և ոգևորված իր նախորդ հաջողություններից, հանձնվեց հանգստի, իսկ խրախճանքի համար իր զինվորներին բաժանեց մորթելու անասուններ և մեծ քանակությամբ գինի և ամեն տեսակ այլ մթերքներ: Ուստիև, մինչդեռ ամբողջ զորքը կերուխումի մեջ էր, Արբակեսի մարդիկ, ինչ–որ դասալիքներից տեղեկանալով թշնամու զորաբանակում տիրող անհոգության և հարբեցողության մասին, գիշերը անսպասելի հարձակում գործեցին: Ու քանի որ գրոհում էին կազմակերպված զորամասեր անկազմակերպների, պատրաստ եղողները անպատրաստ գտնվողների վրա, ապա նրանք գրավեցին զորակայանը և զինվորներից շատերին սպանելուց հետո մնացածներին հալածեցին մինչև քաղաք: Այնուհետև թագավորը Գալայմենեսին՝ իր կնոջ եղբորը, զորավար կարգեց, իսկ ինքը ուշադրությունը կենտրոնացրեց քաղաքի դրության վրա: Բայց ապստամբները, իրենց ուժերը դաշտում գումարելով քաղաքի առաջ, երկու ճակատամարտերում հաղթեցին ասորեստանցիներին և ոչ միայն սպանեցին Գալայմենեսին, այլև փախուստի մատնված հակառակորդ զինվորների մի մասին կոտորեցին, իսկ մյուսներին, որոնք զրկված լինելով քաղաք վերադառնալու հնարավորությունից, ստիպված էին իրենց նետել Եփրատ գետը, բացի քչերից՝ բոլորին սպանեցին ...»[38]:

(27,1) «Ապստամբները, ոգևորված իրենց հաջողություններից, սաստկացրին պաշարումը, բայց պարիսպների ամրության պատճառով քաղաքում գտնվողներին ոչնչով չէին կարողանում վնասել, որովհետև պարիսպները քանդելու համար օգտագործվող քարանետ մեքենաները կամ ականափորներին պաշտպանող ծածկույթները կամ էլ հարվածող խոյերը դեռևս այդ ժամանակ չէին հնարված...»: Եվ որպեսզի թշնամիների ձեռքը չընկնի, Սարդանապալը վճռեց պալատում հսկայական խարույկ պատրաստել և ամբողջ ոսկին ու արծաթը, արքայական բոլոր հանդերձները կիտեց խարույկի վրա: Հարճերին և ներքինիներին փակեց խարույկի կենտրոնում պատրաստված սենյակում, և այդ ամենը՝ ինքն էլ հետը, հանձնվեց կրակին: Ապստամբները, իմանալով Սարդանապալի մահը, գրավեցին քաղաքը և Արբակեսին, հագցնելով արքայական զգեստ, թագավոր հռչակեցին[39]: Բայց, ինչպես նշում է Մովսես Խորենացին, Արբակեսը, վերակացուներ թողնելով Ասորեստանում, թագավորությունը փոխադրեց Մարաստան[40]:

Բայց Պարույրը, որ քառասուն տարի կառավարիչ էր, 612 թվականից հռչակվեց Արմե–Շուպրիայի թագավոր. Խորենացու ցուցակում նա կոչված է Պաճոյճ, որ ես ուղղում եմ Պարոյր[41]:

Մ.թ.ա. 590 թվականին Արմենիոս–Հայկակ թագավորը ամբողջ Ուրարտուն հռչակեց Արարատյան թագավորություն՝ վերականգնելով Հայկազունիների նախկին իշխանությունը և դարձավ նրա հիմնադիր թագավորը: Այս առթիվ Խորենացին նշում է. «Եւ զի արդարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին»: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»[42]:

Լոնդոնի Բրիտանական թանգարանում (ԲՄ 92687 համարի ներքո) պահպանվում է մ.թ.ա. VI դարի կավե քարտեզ, որտեղ պատկերված է Հայաստանը:

[37] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԱ(ԻԲ), էջ 64:

[38] **Դիոդորոս Սիկիլիացի**. էջ 35-36:

[39] **Դիոդորոս Սիկիլիացի**. էջ 36–37:

[40] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԱ(ԻԲ), էջ 65:

[41] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԲ(ԻԳ), էջ 69:

[42] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց. Ա, ԻԲ(ԻԳ), էջ 67:

92687


ISLAND
6 miles between
ISLAND
BITTER RIVER
9 miles between
6. ISLAND
HABBAN
BABYLON
ASSYRIA
ARMENIA
CITY
BIT JAKINU
WATERSTREAM MARSH
BITTER
BITTER
BITTER
7. ISLAND
1. ISLAND
ArmenianUnity

9 771829 034002 19004